# ԷՋՄԻԱԾՆ

1977

Ա.

146



ԼԴ
ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1977



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (1977 թ. հունվարի 6)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր ուրախ են մեր սրտերը բոլոր, որովհետև երկինքը վերստին բերում է մեզ բարի լուրը Հիսուսի Ծննդյան և Նրա Հայտնության որպես Որդի Աստուծո: Ի պատասխան հրեշտակների մեծ ու սքանչելի այս ավետիսի, արդ բոլորս մանկացած հոգիներով երգում ենք՝ «Փառք հրաշափառ Ծնընդեան և Աստուածայայտնութեան քո, Տէ՛ր»:

Անցել են դարեր, եկել-գնացել են սերունդներ բազում, հիմնովին փոխվել է այսօր պատկերը մարդկային կյանքի, սակայն մնացել է և մնում է միշտ հմայիչ, միշտ հրամայականորեն այժմեական, պատգամը երկնքի՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», որ Հիսուս Իր ծնունդով պարգև բերեց աշխարհին, ժողովուրդներին, պատմությանը: Հիսուսի մարդեղությամբ ու Աստվածահայտնությամբ խաղաղության նոր ու վերջնական ուխտը կնքվեց Աստուծո և մարդու միջև:

Այս իմաստով մանավանդ Հիսուս եղավ ու մնաց «լրումը օրինաց և մարգարէից» ու նաև լրումը մարդկային խոնարհ բազմությունների դարավոր սպասումների: Այդ սպասումների տեսանկյունից դիտված, մարդկային ցեղի պատմությունը ամբողջ, մի հերոսական մաքառում է ի խնդիր՝ «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» աստվածային պատգամի երկրի վրա հաստատման ու կենսագործման: Գուցե ավելի քան այլուր նույնանում են խոսքը Աստուծո և երազանքը մարդու:

Այսօր էլ նույն երազանքն ու նույն կամեցողությունը բոցավառում են հոգիները բոլոր ազնիվ մարդկանց, բոլոր ժողովուրդների լայն զանգվածների: Մեր աշխարհի բոլոր հորիզոններից, բոլոր մարդկային սրտերից բարձրանում է մի հուզակույտ աղերս՝ զինաթափություն, խաղաղ գոյակցություն, համերաշխ գործակցություն ազգությունների ու պետությունների միջև: Ահա թե ինչու, մեզ՝ քրիստոնյաներիս համար ավելի քան երբեք քաղցր

ու դյութիչ է հնչում այսօր սուրբ Ծննդյան ավետիսը: Ահա թե ինչու, նաև մեր օրերին, հաղթականորեն իշխում է աշխարհի խղճի վրա Իշխանը Խաղաղության՝ Հիսուս Որդին Աստուծո:

Անթիվ պատերազմներից, ավերումներից, կոտորածներից հետո, Ապրիլյան մեծ եղեռնի դժոխքից հազիվ փրկության ափին հասած հայ ազգի համար մանավանդ, չկա ավելի սրբազան իղձ՝ քան խաղաղ ու անվտանգ իր գոյավիճակի պահպանումը և ամրապնդումը, ազատագրված մայր հողի վրա, վերածնված իր հայրենիքի հարազատ դրոշի ներքև: Մեր ազգային բոլոր ազնիվ ու արդար երազանքների կենսագործումը պայմանավորված է՝ աշխարհում «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան» հրամայականի ամբողջական հաղթանակով:

Մայր հայրենիքում և արտասահմանում բնակվող ողջ հայությունը, կիսորհինք թե ունի և՛ պատմական սեփական փորձը, և՛ իրավ հայրենասիրության գիտակցությունը, որ հայ ժողովրդի ու նրա նորաստեղծ ազգային պետության ճակատագրերը, նրանց գոյատևումն ու ծաղկումը, պայմանավորված են արդի Հայաստանի խաղաղ ու ապահով զարգացման ընթացքով, խորհրդային եղբայրացած ազգությունների մեծ ու հզոր միության մեջ:

Եղբայրական սիրո և խաղաղ գործակցության պատգամը հույժ կենսական ու այժմեական ենք նկատում նաև Մեր պանդուխտ զավակների կյանքի հոգևոր ու մշակութային շինության տեսակետից: Մենք իբրև Հայրապետը ձեր և առաջին սպասավորը մեր սուրբ եկեղեցու, հաճախ մտահոգվում և երբեմն նույնիսկ տառապում ենք հոգեպես, ի տես սփյուռքում հայ եկեղեցական-ազգային կյանքում դրսևորվող անմիաբան ու անկարգ արարքների. և ընդհակառակը՝ հրճվում ենք ու մխիթարվում, երբ տեսնում ենք պանդուխտ մեր զավակների անխռով եղբայրությունը, նրանց համերաշխ գործակցությունը, նրանց շինարար իրագործումները: Հրճվում ենք ու մխիթարվում մեր եկեղեցական կենտրոնների, թեմերի ու համայնքների կրոնական ու մշակութային հոգեշեն ու հայապահպան իրագործումներով, բարեջան, հոգատար հսկողությանը ներքև թեմական առաջնորդների ու հոգևոր սպասավորների, թեմական-եկեղեցական վարչությանց անդամների, մեծահոգի բարերարների սրտցավ գործակցությամբ: Հատկապես բարձր ենք գնահատում վերջին տասնամյակի ընթացքում· Միացյալ Նահանգներում և Եվրոպայում՝ ամենօրյա հայ վարժարանների ծավալվող կազմակերպումը:

Եկեղեցաշինություն և դպրոցաշինություն, հավատ ու լեզու, ինչպես պիտի ասեր լուսահոգի Խաչատուր Աբովյանը, ահա՛ գոյատևման միակ ճշմարիտ ուղին արտասահմանի մեր ժողովրդի ցիրուցան զավակների համար:

Մայր հայրենիքից և ս. Էջմիածնից ողջույն և օրհնություն՝ հայապահպան ոգեշնչումով տքնող ու պայքարող մշակներին, վաստակավորներին և կազմակերպիչներին:

Այս Նոր տարվո լուսաբացին մի անգամ ևս կամենում ենք Մեր հայրական հորդորն ուղղել ի սփյուռս աշխարհի ցրված մեր հավատացյալ զավակներին, որ մնան համախումբ, աներեր ու միաբան Հայաստանյայց առաքելական մայր եկեղեցու կենարար օրհնությանը ներքև, որ ինչպես հազար վեց հարյուր և ավելի տարիներ շարունակ, նաև այսօր ու գալիք ժամանակներում մնալու է հայ ժողովրդի միակ հարազատ մայրն ու դաստիարակ պահապան եկեղեցին:

Մեր հորդորն է նաև, որ Մեր պանդուխտ զավակները մնան հավատարիմ ու շինարար քաղաքացիները իրենց բնակած երկրների, բայց և նույն-

քան հավատարիմ ու հոգատար զավակները Հայաստանյայց եկեղեցու, աստվածակառույց սուրբ Էջմիածնին, որը աշխարհի ամենահին ու ամենավավերական քրիստոնեական այուներից մեկն է հանդիսանում՝ հաստատված Արևելքի դռների առաջ, հայոց հինավուրց սուրբ գրական հողի վրա:

Հավատացյալ որդիք Մեր սիրելի, «զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին՝ և զսրբութեան. առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14):

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ»:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ ու Աստվածահայտնություն: Ամեն:

# ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՊԱՏԳԱՄԸ 1977 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐՎԱ» ԱՌԹԻՎ*

Բարձր պատասխանատվությունների կոչված բոլոր մարդկանց.

Ձե՛զ նույնպես, անթիվ ու անհամար անծանոթներ.

Ձե՛զ բոլորիդ, բարեկամներ Մեր.

Ահա մի անգամ ևս, տասներորդ անգամ լինելով, Մենք գալիս ենք դեպի ձեզ, Մենք նորից ձեզ հետ ենք: 1977-ի Նոր տարվա այգաբացին, Մենք ներկայանում ենք ձեր դռանը և բախում ենք այն (Հայտն. Գ 20): Բա՛ց արեք, խնդրում ենք ձեզ: Մենք ավանդական ուխտավորն ենք, որն անցնում է աշխարհի ճամփաներով առանց երբեք հոգնելու և առանց կորցնելու իր ճանապարհը: Մենք ուղարկվել ենք՝ բերելու համար ձեզ սովորական պատգամը: Մենք խաղաղության մարգարե ենք: Այո՛, Մենք քայլում ենք գոչելով՝ Խաղաղությո՜ւն, Խաղաղությո՜ւն, իբրև պատգամաբերը սևեռում մի գաղափարի, որ հին է, բայց միշտ նոր՝ ներկա ժամանակի անհրաժեշտության պատճառով, որը պահանջում է այն իբրև մի հայտնագործություն, իբրև մի պարտականություն, իբրև երանություն: Թվում է, թե խաղաղության գաղափարն ընկալվում է որպես քաղաքակրթության համարժեք և կատարյալ արտահայտություն: Չկա քաղաքակրթություն առանց խաղաղության: Բայց իրականում խաղաղությունը երբեք ամբողջական չէ, ոչ էլ՝ ապահով: Նկատած կլինեք անշուշտ, որ հույնիսկ առաջադիմության նվաճումները կարող են պատճառ դառնալ բախումների. և ինչպիսի՜ բախումների: Բարի եղեք ուրեմն ավելորդ չհամարել, ուստի և ձանձրալի, Մեր ամենամյա պատգամը ի նպաստ խաղաղության:

...Խաղաղության գաղափարը, որպես մարդկային հասարակության բուն գործունեությունը մեկ կետի շուրջ բևեռացնող իդեալ, կարծես ճակատագրականորեն տեղի է տալիս այն բանի առաջ, որ աշխարհը իբրև թե անկարող լիներ կառավարելու ինքն իրեն խաղաղության մեջ և խաղաղության հետ: Խաղաղությունը ինքնըստինքյան տրված մի իրողություն չէ, եթե

* Սույն պատգամից հրատարակվում են որոշ հատվածներ:

նույնիսկ մարդկային բնության ամենախոր մղումները ձգտեն դրան: Խաղաղությունը կարգ է, և կյանքում ամեն բան, ամեն եղելություն ձգտում է կարգի, ինչպես նախահաստատված մի ճակատագրի, ինչպես նախասահմանված մի գոյապատճառի, որը սակայն իրագործվում է բազմապիսի գործոնների հետ համընթացության և համագործակցության մեջ:

...Մենք վերահաստատում ենք Մեր համոզումը. խաղաղությունը մի պարտականություն է, խաղաղությունը հնարավոր է: Այս է ահա Մեր պատգամը նորից, որ ի նկատի է ունենում քաղաքակրթության իդեալը, արձագանքում է ժողովուրդների տենչանքին, զորացնում է խոնարհ և տկար մարդկանց հույսը և, առաջ մղելով արդարությունը, ազնվացնում է ուժեղների ապահովությունը: Դա լավատեսության պատգամն է, դա ապագայի նախանշանն է: Խաղաղությունը երազ չէ, ոչ ուտոպիա, ոչ սին պատրանք: Եվ ոչ էլ Սիզիպոսի ապարդյուն աշխատանք: Խաղաղությունը կարող է երկարաձգվել և ամրապնդվել. այն կարող է նշանավորել պատմության ամենագեղեցիկ էջերը, նշանավորել ոչ միայն հզորության ու փառքի մեծապանծ հիշատակարաններով, այլև շատ ավելի լավերով՝ մարդկային առաքինության, ժողովրդական բարության, հավաքական բարեկեցության, ճշմարիտ քաղաքակրթության, այսինքն՝ սիրո քաղաքակրթության հիշատակարաններով:

...Խաղաղություն և կյանք. սրանք գերագույն բարիքներ են քաղաքացիական կարգի մեջ. և առնչակից բարիքներ: ...Եթե խաղաղություն ես ուզում, պաշտպանիր կյանքը: Կյանքը խաղաղության բարձրակետն է: Եթե մեր գործունեությունը իր մղումն ստանում է կյանքի սրբազան արժեքի գիտակցությունից, պատերազմը, որպես իրավունքի, հետևաբար և խաղաղության իշխանությունը հաստատել տալու բնական ու սովորական միջոց, փաստորեն արժեզրկվում է: Խաղաղությունը ուրիշ բան չէ, եթե ոչ իրավունքի անժխտելի գերիշխանությունը և, վերջին հաշվով, կյանքի երջանիկ հրոչակումը:

...Վավերական և երջանիկ մի խաղաղություն ունենալու համար հարկավոր է պաշտպանել կյանքը, վերանորոգել կյանքը, առաջ մղել կյանքը... «Եթե խաղաղություն ես ուզում, ապա պատրաստի՛ր պատերազմ» բանաձևը, որ քաղաքականության մեջ բազմաթիվ հետևորդներ ունեցավ և ունի տակավին, ընդունելի չէ առանց արմատական վերապահումների (Ղուկաս ԺԴ 31): Մեր սկզբունքների համարձակ անկեղծությամբ, Մենք դատապարտում ենք «սպառազինությունների մրցավազքի», ժողովուրդների միջև գաղտնի մրցակցության կեղծ ու վտանգավոր ծրագիրը ռազմական գերազանցություն ձեռք բերելու նպատակով: Եթե նույնիսկ, իմաստության երջանիկ մի մնացորդի կամ մարդակործան ընդդիմադիր ուժերի հավասարակշռության լուռ, բայց արդեն իսկ վտանգավոր պահպանման շնորհիվ, պատերազմը չի պայթում (և ինչպիսի՜ պատերազմ կլիներ այդ), ինչպես չափսոսալ տնտեսական միջոցների և մարդկային ուժերի այն անհաշիվ վատնումը, որ կատարում է յուրաքանչյուր երկիր՝ պահպանելու համար միշտ ավելի մեծածախս, միշտ ավելի ավերիչ իր զենքերի հանդերձանքը, ի վնաս դպրոցների, մշակույթի, գյուղատնտեսության, առողջապահության, հասարակական կյանքի համար տրամադրելի բյուջեի: Խաղաղությունը և կյանքը իրենց վրա կրում են վիթխարի և անհաշվելի բեռներ՝ պահպանելու համար կյանքի նկատմամբ մշտական սպառնալիքի վրա հիմնված մի խաղաղություն, ինչպես նաև պաշտպանելու համար կյանքը՝ շնորհիվ խաղաղության նկատմամբ

գոյություն ունեցող տևական մի սպառնալիքի: Գուցե ասեն՝ դա անխուսափելի է: Այդպես կարող են մտածել քաղաքակրթության մասին դեռևս շատ թերի գաղափար ունեցող մարդիկ: Բայց ընդունենք գոնե, որ սահմանադրական այն մարտահրավերը, որ սպառազինությունների մրցավազքն է հասցնում կյանքի և խաղաղության միջև, ըստ ինքյան կեղծ մի բանաձև է, որ անհրաժեշտ է սրբագրել և առաջ անցնել: Պետք է ողջունել արդեն իսկ նախաձեռնված այն ջանքերը, որոնց նպատակն է թուլացնել և ի վերջո վերացնել այն անհեթեթ սառը պատերազմը, որն առաջ է գալիս ազգերի փոխադարձ ռազմական հզորության պրոգրեսիվ աճից, կարծես այս վերջինները ուրիշ ելք չունենային, քան թշնամիներ լինել միմյանց, և կամ կարծես անկարող լինեին նկատելու, թե միջազգային հարաբերությունների նման մի հասկացություն մի օր անխուսափելիորեն պիտի հանգեցներ խաղաղության և անհամար մարդկային կյանքերի կործանման:



## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ Ե. ՍԱՐԿԻՍՈՎԻՆ

**Հունվարի 18-ին, հինգշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Նոր տարվա առիթով պաշտոնական Իր առաջին այցելությունը տվեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովին:

Այս առիթով Հայոց Հայրապետին ընկերակցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը և Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հայոց Հայրապետի և Հայաստանի Հանրապետության մեծահարգ պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

# Բոլոր Եկեղեցիներ

## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն**
**ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ** (Հռոմ),

**Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ** (Ստամբուլ),

**Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ՊԻՄԵՆԻՆ** (Մոսկվա),

**Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ**
(Ալեքսանդրիա),

**Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ** (Երուսաղեմ),

**Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ** (Ալեքսանդրիա),

**Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ** (Դամասկոս),

**Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն**
**ԱԲՈՒՆԱ ՏԵԿԼԵ ՀԱՅՄԱՆՈՏԻՆ** (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Բոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն ԴԱՎԻԹ Ե-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),
Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),
Հայ կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՀՄԱՅԱԿ ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻԻՆ (Փարիզ),
Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),
Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ, Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մայամի),
Վերապատվելի ՎԱՀԱՆ Հ. ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու-Յորք),

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մեր Տիրոջ և Փրկչի սուրբ Ծննդյան ավետիսով, երջանիկ ենք Ձերդ Սրբությանն առաքելու Մեր եղբայրական ողջույնը ամենաբարի մաղթանքներով, որ Ձեր հովվապետական սրբազան առաքելությունը միշտ լուսավորվի պտղառատ արդյունքներով՝ ի փառս ձեր պատմական մեծ եկեղեցու և ի կենսագործումն խաղաղության և ի մարդիկ հաճության երկնառաք պատգամների:

Հուսացյալ և ուրախ սրտով մաղթում ենք Ձեզ քաջառողջ երկար տարիներ խաղաղ ու արևշատ օրերով:

Եղբայրական ամենաջերմ գնահատանքով ու հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

**«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:**

**Այս լույս առավոտյան, երբ մեծ ավետիսովը Քրիստոսի սուրբ Ծննդյան երկնքի բարձունքներեն մեր հոգիներուն բոլոր առատապես կբաշխվի հրեշտակներուն երգը «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան», Մենք առաջին սպասավորը մեր եկեղեցվո ու ժողովուրդի, բերկրյալ սրտով ողջույն և օրհնություն կբերենք Ձեզ, միաբանության և համայն Մեր հավատացյալ զավակներուն, այն մշտանորոգ անմար հույսով, թե մարդկային աշխարհը քաղցրությամբ պիտի ընդունի սուրբ Ծննդյան երկնային պատգամը ու պիտի դավանի զայն իբրև իր կյանքի ու ճակատագրի փրկության գերագույն հրամայականը:**

**Խաղաղությունն ու հաճությունը թող իջնեն նաև հայ եղբայրներու եկեղեցական ու ազգային կյանքեն ներս, հառավել պայծառացում մեր ժողովուրդի հոգևոր ու մշակութային առաքելության:**

**Վասնզի հայ ազգը իր նախնյաց հավատքով, իր մայր եկեղեցիով ու իր ոգեծին մշակույթով, լուսաբաշխ առաքելություն մը կհանդիսանա մարդկության ու պատմության հորիզոնին վրա:**

Սուրբ Ծննդյան շնորհներով, ավելի խաղաղություն աշխարհին համայն, ավելի հաճություն ի մարդիկ բոլոր:

Նաև առավել լույս ու խաղաղություն մեր սուրբ եկեղեցիին, առավել սեր և միություն համայն ազգիս հայոց:

Քրիստոսակառույց սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն Ձեզ սիրո ողջույն ամենաբարի մաղթանքներով հանդերձ:

«Շնորհք և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, թեմական-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

# ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## ՀԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՎ ՀՈՎԻՎՆԵՐԻ ԱՑՑԸ

Այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցավ, երբ Կյուրենիոսը կուսակալ էր Ասորիքում: Եվ բոլորը գնում էին արձանագրվելու մարդահամարի՝ յուրաքանչյուրն իր քաղաքում: Հովսեփն էլ Դավթի տնից և ազգից լինելով՝ Գալիլիայի Նազարեթ քաղաքից ելավ-գնաց դեպի Հրեաստան՝ Դավթի քաղաքը, որը Բեթղեհեմ է կոչվում, մարդահամարի մեջ արձանագրվելու Մարիամի հետ, որ նրա հետ նշանված էր և հղի էր: Եվ երբ նրանք այնտեղ հասան, նրա ծննդաբերելու օրերը լրացան, և նա ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց նրան ու դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանում նրանց տեղ չկար:

Եվ այդ շրջանում բացօթյա բնակվող հովիվներ կային, որոնք իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին անում: Եվ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց, Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու նրանք սաստիկ վախեցան: Եվ հրեշտակը ասաց նրանց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդինը կլինի. որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տերն է: Եվ սա՛ ձեզ համար նշան կլինի. խանձարուրով փաթաթած և մսուրի մեջ դրված մի մանուկ կգտնեք»: Եվ հանկարծակի այդ հրեշտակի հետ երևաց երկնային զորքերի մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն ու ասում. «Փա՜ռք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՜ւն և հաշտությո՜ւն՝ մարդկանց մեջ»: Եվ երբ հրեշտակները նրանցից հեռանալով երկինք բարձրացան, հովիվներն ասացին միմյանց. «Եկեք գնանք մինչև Բեթղեհեմ և տեսնենք, թե ի՛նչ բան է այս եղածը, որ Տերը մեզ ցույց տվեց»: Եվ նրանք շտապով եկան ու գտան Մարիամին ու Հովսեփին և մսուրի մեջ դրված մանկանը: Եվ ճանաչեցին նրան այն խոսքից, որ իրենց ասվել էր մանկան մասին: Եվ բոլոր լսողները զարմանում էին այն բաների վրա, որ հովիվները ասացին իրենց: Իսկ Մարիամը այս բոլոր բաները պահում էր իր մեջ և իր սրտում խորհում: Եվ հովիվները վերադարձան. փառավորում և օրհնում էին Աստծուն այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպես իրենց պատմվել էր:

**(Ղուկ. Բ 1—20)**

## ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես արքայի օրով, ահա արևելքից մոգեր եկան Երուսաղեմ և ասացին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու»;

Եվ երբ Հերովդես արքան լսեց այս, խռովեց, նրա հետ՝ և ամբողջ Երուսաղեմը: Եվ հավաքելով բոլոր քահանայապետներին ու ժողովրդի դպիրներին՝ հարցրեց նրանց, թե ո՞ւր պիտի ծնվի Քրիստոսը: Եվ նրանք ասացին նրան. «Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, որովհետև մարգարեի միջոցով այսպես է գրված. «Եվ դու, Բեթղեհե՛մ, Հուդայի՛ երկիր, Հուդայի իշխողների մեջ փոքրագույնը չես. քեզնից մի իշխան պիտի ելնի ինձ համար, որ պիտի հովվի իմ ժողովրդին՝ Իսրայելին»:

Այն ժամանակ Հերովդեսը գաղտնի կանչեց մոգերին և նրանցից ստուգեց աստղի երևալու ժամանակը: Եվ նրանց Բեթղեհեմ ուղարկելով՝ ասաց. «Գնացե՛ք, ստույգ իմացեք մանկան մասին և երբ գտնեք, տեղեկացրեք ինձ, որպեսզի ես էլ գամ-երկրպագեմ նրան»: Եվ նրանք երբ թագավորից լսեցին այս, գնացին: Եվ ահա այն աստղը, որ տեսել էին արևելքում, առաջնորդեց նրանց, մինչև որ եկավ-կանգնեց այն տեղի վրա, ուր մանուկն էր: Երբ աստղը տեսան, չափազանց ուրախացան: Եվ երբ այն տունը մտան, տեսան մանկանը իր մոր՝ Մարիամի հետ միասին և ընկան ու երկրպագեցին նրան. և բանալով իրենց գանձերը՝ նրան նվերներ մատուցեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս: Եվ երազի մեջ հրաման առնելով չվերադառնալ Հերովդեսի մոտ, այլ ճանապարհով գնացին իրենց երկիրը:

**(Մատթ. Բ 1—12)**

## ԵՎ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵՎ

Սկզբից էր Բանը, և Բանը Աստուծո մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստուծո մոտ էր: Ամենայն ինչ նրանով եղավ. և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց լույս էր: Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց:

Կար մի մարդ՝ Աստծուց ուղարկված. նրա անունը՝ Հովհաննես: Սա եկավ որպես վկա, որպեսզի վկայի լույսի մասին, որ բոլորը նրա միջոցով հավատան: Ինքը լույսը չէր, այլ եկել էր, որ վկայի լույսի մասին:

Նա էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ: Նա աշխարհի մեջ էր, և աշխարհը նրանով եղավ, սակայն աշխարհը նրան չճանաչեց: Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները նրան չընդունեցին: Իսկ ովքեր նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստուծո որդիներ, նրանց, որոնք իր անվանը կհավատան: Նրանք ո՛չ արյունից, ո՛չ մարմնի կամքից և ոչ էլ այր մարդու կամքից, այլ Աստծուց ծնվեցին: Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք նրա փառքը, որպես փառքը Միածնի՝ Հոր կողմից՝ լի շնորհով ու ճշմարտությամբ:

Հովհաննեսը վկայում էր նրա մասին, աղաղակում և ասում. «Սա՛ է, որի մասին ասացի: Նա, որ իմ ետևից էր գալու, ինձնից առաջ եղավ, որովհետև ինձնից առաջ կար»: Մենք բոլորս նրա լրիվությունից ստացանք շնորհ՝ շնորհի փոխարեն. որովհետև օրենքը Մովսեսի միջոցով տրվեց, իսկ շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի միջոցով եղան:

Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել, բացի միայն միածին Որդուց, որ Հոր ծոցում է. նա՛ հայտնեց:

**(Հովհ. Ա 1—18)**

## ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Եվ հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը, որ երևաց մարմնով, արդարացավ հոգով, հայտնվեց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսների մեջ, ընդունելի եղավ աշխարհում և վերացավ փառքով:

**(Ա Տիմոթ. Գ 16)**



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը հայտնում է հանրությանն ի գիտություն, թե Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովանավորության ներքո լիբանանահայ կարոտյալների օգտին հանգանակված են առ 31 դեկտեմբեր 1976 թվականը ստորև նշված գումարները և նույն տարվա ընթացքում մաս առ մաս փոխանցված են ամբողջությամբ Վեհափառ Հայրապետի՝ Բեյրութում կազմած «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»՝ ընդ նախագահությամբ տիար Հովհաննես Գասպարյանի.

| | |
|---|---|
| 1. Մայր Աթոռից . . . . . | 20000.00 դոլլար |
| 2. Նյու-Յորքի առաջնորդարանի միջոցով . . . | 20998.80 դոլլար |
| 3. Նյու-Յորքի առաջնորդարանի միջոցով . . . . | 4998.80 դոլլար |
| 4. Գալուստ Կյուլպենկյան հաստատությունից . . | 10000.00 դոլլար |
| 5. Ժնևից՝ հանգանակիչ հանձնաժողովի միջոցով 35000 շվեյցարական ֆրանկ | 13618.65 դոլլար |
| 6. Լոնդոն՝ հանգանակիչ հանձնաժողովի միջոցով՝ 5000 ստեռլինգ (Ս. Սարգիս եկեղեցու Թրաստից 2500 ստեռլինգ, մնացյալը՝ 297 նվիրատուներից) | 8575.00 դոլլար |
| 7. Տիար Նապոլեոն Պուլլուքյան (Լիոն) . . | 5000.00 դոլլար |
| 8. Տիար Երվանդ Հյուսիսյան (Միլան) . . . | 5000.00 դոլլար |
| 9. Տիար Կոպեռնիկ Սեֆերյան՝ 2000 դոլլար (Բուենոս-Այրես) . . . . . | 1998.80 դոլլար |
| 10. Տիար Հակոբ Սեֆերյան (Միլան) . . . . | 2000.00 դոլլար |
| 11. Տիար Կ. Փափազյան (Վիեննա)՝ 7500 շվեյցարական ֆրանկ . . . . | 2912.62 դոլլար |
| 12. Վիեննայի Ուսանողների միություն՝ 52100 շիլլինգ | 2824.79 դոլլար |
| 13. Ժնևի հանգանակիչ հանձնաժողովից՝ 3500 շվեյցարական ֆրանկ . . . . . | 1400.00 դոլլար |
| 14. Լիոնից՝ 1162 շվեյցարական ֆրանկ . . . . . | 451.26 դոլլար |
| 15. Ավստրալիայից՝ անանուն նվիրատու . . . . | 400.00 դոլլար |
| 16. Անանուն նվիրատու . . . . . | 523.80 դոլլար |
| 17. Չորս անանուն նվիրատուներ . . . . | 167.02 դոլլար |
| 18. Մայր Աթոռի հաշվից լրացում . . . . . | 300.00 դոլլար |
| Ընդամենը՝ | 101169.54 դոլլար |
| Փոխանցված է Բեյրութի «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»՝ . . | 97767.84 դոլլար |
| Մնացորդ՝ | 3401.70 դոլլար |

Բացի վերոհիշյալ գումարներից, Ֆրանսիայի շրջանում, ընդ նախագահությամբ հայրապետական պատվիրակ գերաշնորհ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի, հանգանակիչ հանձնաժողովի կողմից հանգանակված է (1.031.624 ֆրանսիական ֆրանկ) շուրջ 210.000 դոլլար, և նվիրատուների ցուցակները հրապարակված են Փարիզի «Յառաջ» և «Աշխարհ» թերթերում, հետևյալ թվականներին՝ 1975-ի 10 և 18 դեկտեմբերին, 1976-ի 3 և 23 հունվարին, 11 և 17 փետրվարին, 4 և 11 մարտին, 8 ապրիլին, 18 մայիսին, 14 սեպտեմբերին, 21 հոկտեմբերին, 11 և 21 դեկտեմբերին:

Ֆրանսահայ նվիրատուներից գանձված գումարները հանգանակիչ հանձնաժողովի կողմից փոխանցված են ուղղակի Բեյրութ՝ «Լիբանանահայ օգնության հանձնախմբին»:

Որով, առ 31 դեկտեմբեր 1976 թ. Մայր Աթոռիս հովանավորության ներքև հանգանակված ընդհանուր գումարը կազմում է 307.767 դոլլար՝ ամբողջությամբ փոխանցված Բեյրութի «Լիբանանահայ օգնության կենտրոնական հանձնախմբին»: Չփոխանցված մնում է Մայր Աթոռում 3401 դոլլար:

Մայր Աթոռս իր խորին շնորհակալությունն է հայտնում վերոհիշյալ բոլոր բարեսիրտ նվիրատուներին, ինչպես նաև իր սրտագին գնահատանքը՝ Բեյրութի «Լիբանանահայ օգնության հանձնախմբին» և բոլոր հանգանակիչ մարմիններին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
26 հունվարի 1977 թ.





# ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ժամանակ հասկացությունը և նրա խորհուրդը միշտ էլ հուզել է մարդկության և՛ հոգեկան, և՛ մտային աշխարհը: Այդ մեծ խորհուրդի ժամանակադարձի պահը մենք ապրում ենք և այսօր, 1976 թվականի ավարտին, երբ հին ժամանակի վերջին կրցվում է նորի սկիզբը՝ ցույց տալով, որ անվերջ կրկնվող նորը միշտ հնի շարունակությունն է և զարգացումը:

Ժամանակի այս դարձակետին յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր մտածող էակ իսկապես շատ լուրջ խորհրդածության նյութ ունի՝ ի՞նչ է արել հին տարում, որքա՞ն է կարողացել օգտագործել իր ժամանակը: Նպատակային որևէ բան արե՞լ է ինչպես հասարակության, այնպես էլ իր կամ ընտանիքի համար:

Նոր տարվա սեմին մարդն իրեն ավելի երիտասարդ, կայտառ ու ժիր է զգում, մտածելով, որ հաղթահարել է կյանքի դըժվարությունները և հասել այդ նորացած օրին:

Այս երկրորդ տարին է արդեն, որ Մայր Աթոռի միաբանությունը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմով և ուսանողներով նոր տարին դիմավորում է վերակառուցված Ղազարապատի միաբանական սեղանատանը: Ինչպես ժամանակի խորհուրդը, այնպես էլ այդ սեղանատունը յուրահատուկ խորհրդավորություն է ստեղծում այնտեղ մտնողների համար: Կամարակապ կառույցի, քանդակների, սրբապատկերների առկայությունը և հոգևորականների խոհուն ներկայությունն արդեն իսկ մի խնկաբույր մթնոլորտ են ստեղծում:

Միաբանական սեղանատունն իր հյուրերին դիմավորում է Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռնված սեղաններով: Վեհափառ Հայրապետն օրհնում է լի սեղանը: Այնուհետև գործադրության է դրվում օրվա հանդիսությանը նվիրված գեղարվեստական ճոխ ծրագիրը: Հոգևոր ճեմարանի սաները, երաժշտության դասախոս Խորեն Մեյխանեջյանի գլխավորությամբ, մեծ ոգևորությամբ կատարում են ճեմարանի քայլերգը, «Հայրապետական մաղթերգ»-ը և «Էջ Միածին ի Հօրէ» շարականը...

Այնուհետև հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը, ի դիմաց հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ընթերցում է, Վեհափառ Հայրապետին նվիրված, իր գրած հետևյալ ձոն-ուղերձը.

«Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ,
Տարեմուտի յայսմ յերեկոյիս
Ընկալ զմաղթանս սրտից մերոց,
Եւ լուր աղօթից ծառայից քոց:
Աստուածարեալ և սուրբ Հայրապետին մերոյ
Ծառայիդ Քո Վազգենի
Ծնորհեա, Տէր,
Իմաստութեամբ և փառօք Քո՝
Աւուրս բազո՛ւմ, բազո՛ւմ:
Զօրութիւն Քո, Տէր, և սուրբ Աջ Քո
Եղիցին ի վերայ Նորա, և
Յաստուածահաճոյ գործս Նորա
Որպէս պարգևք Քո:
—Վազգէ՛ն, յԱստուծոյ կոչեցեալ,
Հայրապետ իմաստուն և շինարար,
Եղիցին աւուրք Քո
Իբրև զերկինս պայծա՛ռ, պայծա՛ռ»:

Ապա հրավիրվում է Վեհափառ Հայրապետը՝ Իր օրհնությունն ու պատգամը տա-

լու բոլոր ներկաներին՝ Նոր տարվա ուրախ առիթով.

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՄԱՆՈՐԻ ՍԵՂԱՆԻՆ

«Նոր տարին եկավ-հասավ և արդեն մեր դռան մոտ է գտնվում, մաղթենք բարի գալուստ նոր տարիին՝ 1977 թվականին: Մեզանից ամեն մեկը, բնական կերպով, իր կյանքի ճանապարհը չափում է տարիների վազքով և ահա այդ վազքի՝ մեր կյանքի ճանապարհին մենք բոլորս, մենք ավելի տարեցներս և դուք՝ երիտասարդներդ, դիմավորում ենք մի նոր տարեշրջան: Եվ տարվե-տարի հյուսվում է մեզանից ամեն մեկի կյանքի պատմությունը:

Նոր տարին բացառիկ գրավչական ուժ ունի, ինչպես զգում ենք բոլորս: Ոչ միայն մենք, այլև մեր ամբողջ ժողովուրդը և ամբողջ աշխարհը: Գուցե չենք սխալի, եթե ասենք, որ միակ տոնակատարությունն է, որի շուրջ որևէ անհամաձայնություն չկա, որին մասնակցում են այս երկրագնդի բոլոր բնակիչները՝ լինեն քրիստոնյաներ կամ այլ կրոնքների պատկանողներ. ասենք մահմեդականներ, բուդդայականներ, մովսիականներ, և տակավին նաև տոնն է բոլոր այն մարդկանց, որոնք որևէ կրոնք չունեն:

Այսպես ուրեմն, բոլոր մարդիկ սիրով, ոգևորությամբ դիմավորում են Նոր տարին, բոլոր մարդիկ անխտիր, անկախ կրոնական հասկացություններից»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շեշտում է այն միտքը, թե Նոր տարին նաև կրոնական բնույթ ունի մանավանդ քրիստոնյա աշխարհի համար, որովհետև Նոր տարին Քրիստոսի ծննդյան տարեդարձն է, և 1977 թվականը պատմականորեն հաշվվում է Քրիստոսի՝ ծննդյան տարուց: «Եվ ասիկա պատահական երևույթ չէ,—ասում է Վեհափառ Հայրապետը,—նշանակում է, որ Քրիստոսի ծնունդը, նրա կյանքի ու աստվածահայտնության խորհուրդը այնքան ցնցող է եղել մարդկային պատմության ճանապարհի վրա, որ մարդկության ողջ պատմությունը բաժանվել է երկու դարաշրջանների՝ Քրիստոսից առաջ և Քրիստոսից հետո: Ահա այս գիտակցությամբ է մանավանդ, որ մենք՝ քրիստոնյաներս պետք է մոտենանք Նոր տարվա խորհրդին և աշխատենք արժանի լինել Նրա որդիները, Նրա հետևորդները կոչվելու, այսինքն բարի, ազնիվ քրիստոնյաներ լինելու մեր ամենօրյա կյանքով, մեր աշխատանքների, մեր մտածումների, մեր երազանքների և մեր ապագա գործունեության մեջ:

Այս գիտակցությամբ պետք է մոտենանք և ընդունենք զՔրիստոս և Նրա վարդապետությունը: Ուրեմն, սիրելիներ, մանավանդ երիտասարդներ, ձեզ ենք ուղղում Մեր հայրական խոսքը: Նախ շնորհավորում ենք ձեր Նոր տարին անշուշտ, և Մեր խոսքը ուղղելով ձեզ՝ թելադրում ենք, որ տարվա ընթացքին միայն մի քանի կարևոր առիթներով չէ, որ հիշեք թե քրիստոնյաներ եք, այլ տևապես, ձեր ամեն մեկ գործողության կամ աշխատանքի ընթացքին, որպեսզի հաճմարտապես դառնաք մեր ժողովրդի հավատավոր զավակներ և մեր եկեղեցու հավատարիմ ծառայողներ: Իրականություն է, արտասահմանում մանավանդ, որտեղ որ հայեր ապրում են, նրանց կյանքի կենտրոնում գտնվում է հայկական եկեղեցին, և մյուս բոլոր տեսակի գործունեությունները՝ մշակութային, գիտական, գեղարվեստական, մարզական և բարեսիրական և այլն, բոլորն էլ համախմբվում են եկեղեցու շուրջը: Եվ եկեղեցու միջոցավ այդ գործունեությունները ավելի արժևորվում են, և մեկ ուղղությամբ, շիտակ ուղղությամբ ծառայում են հայ ժողովրդի պահպանմանը, հայ ժողովրդի հոգու պահպանմանը, և հայոց լույս հավատի փառավորմանը:

Ինչպես անցյալ դարերի ընթացքին, այսօր էլ տեսնում ենք, որ նույն ճշմարտությունը կա և մնում է անսասան հայ ժողովրդի կյանքում: Ուրեմն Մենք մտածում ենք և մաղթում՝ որ դուք ընդունեք մեր եկեղեցու այս դերը, ապագային էլ՝ ձեր աշխատանքի նպատակը և դառնաք մեր սուրբ հավատքի զինվորները:

Այս մտածումներով կրկին անգամ շնորհավորում ենք բոլորիդ, բաշխելով ամենքիդ Աստծու օրհնությունը, գոչելով. կեցցե Մայր Աթոռ ս. Էջմիածինը, կեցցե Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին»:

Այնուհետև երգչախումբը կատարում է «Հայաստան աշխարհ», «Կենաց երգ» խմբերգերը: Ա լսարանի ուսանող Վահրամ Տերտերյանն արտասանում է Միսաք Մեծարենցի «Արդի մարդու հայր մերը»: Երգչախումբը կատարում է դարձյալ խինդ ու եռանդ ներշնչող «Սեղանն է առատ» ու «Գարուն Երևան» երգերը:

Ի դիմաց դասախոսական կազմի «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Նոր տարին հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Ամանորի այս նվիրական երեկոյին Ձեր շնորհաբեր ներկայությանը Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն Նոր տարվա սեղանների շուրջ հավաքվել են դարձյալ Մայր

Աթոռի միաբանությունը, թեմական առաջնորդ սրբազանները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի աշխատավորության ղեկավար անձնավորություններ և այլ հրավիրյալներ՝ ճանապարհելու հին տարին, որն արդեն պատմություն է դարձել, և նոր հույսերով, երազանքներով, հավատքով ու աշխատանքային նոր նվաճումներով դիմավորելու նորը, որը գալիս է որպես աղոթքի և կառուցումների նոր մատյան՝ լցվելու համար աստվածահաճո և հայրենանվեր անհատական ու հավաքական սխրանքներով:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, որ Ամանորի այս ուրախ ու տոնական առիթով իմ մի քանի մտորումներն ու խոսքերը, որպես հոգևոր ճեմարանի դասախոսի, ուղղված լինեն հատկապես մեր ուսանողությանը, որոնք Ձեր հայրական նայվածքի ներքո հաստատուն քայլելով այս սրբազան մթնոլորտում, վաղը շարունակելու են քրիստոնեական առաքելության ու հայրենասիրական Ձեր գործը, որպես հարազատ զավակները համազգային այս մեծ Հաստատության, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է:

«Ո՜ տայր ինձ զծուխն ծխանի և զառաւօտն նաւասարդի...»:

Նոր տարին Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայրենի հողի վրա դիմավորելը մեծ խորհուրդ ունի իր մեջ, մանավանդ մեր ճեմարանի ուսանողության համար:

Երկու սրբություններ կան մեր ժողովրդի պատմության մեջ, որոնց խորհուրդը լցրել է հայ սրտերն ու հոգիները և մեր եկեղեցական-ազգային տարեգրությունը:

Դո՜ւք, սիրելի ուսանողներ, տարիների ընթացքում սովորել եք և քաջ գիտեք մեր ժողովրդի ու եկեղեցու կյանքում սուրբ Էջմիածնի կատարած նախախնամական դերն ու առաքելությունը, հոգևոր, մշակութային ու հայրենասիրական բնագավառում:

Մեր գրականության մեծ վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, որը սովորել է Գևորգյան ճեմարանում և իր առաջին բանաստեղծությունները 1892-ին գրել այս սրբազան մթնոլորտում, հետագայում բովանդակ հայ ժողովրդի սերն ու պաշտամունքը սուրբ Էջմիածնի հանդեպ արտահայտել է հետևյալ խոսքերով.

«Ս. Էջմիածինը հայ ժողովրդի համար ազգային ամենաառաջին սրբավայրն է: Հայ ժողովուրդը հավատաց նրա հրաշագործ զորությանը, երկնքից ուղարկված նրա նշանակությանը: Ս. Էջմիածինը մեր ազգային գոյության խարիսխն է, ազգային միության խորհրդանշանը: Հայ ժողովրդի զսպված հայրենասիրական զգացմունքը ելք էր գտնում նրա մեջ, կրոն և ազգություն հոմանիշներ էին դարձել: Ստրկացված հայությունը իր մարդկային իրավունքները, հույսերը, երազանքները մարմնացրել էր ս. Էջմիածնի մեջ: Բոլոր հանդեսներում և խնջույքներում առաջին բաժակը Էջմիածնի համար էին բարձրացնում և ոտքի վրա էին երգում հինավուրց երգերը.

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա»:

«Միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս»:

Հայերը Էջմիածնի անունով էին երդվում և այդ երդումը հավասար էր Աստծու անունով երդումի:

Հայությունը Էջմիածնա ազգ է, Էջմիածնա ժողովուրդ:

Առանց հայ ժողովրդի չկա Էջմիածին և առանց Էջմիածնի չկա հայ ժողովուրդ»:

1976 թվականի հոկտեմբերի 27-ին Մայր Աթոռ ուխտի էր եկել Վիլյամ Սարոյանը: Վեհարանում նա իր հուժկու բազուկների մեջ առած Հայոց Հայրապետին, մանկական անկեղծությամբ և իր հոգու ամբողջ ջերմությամբ ասում էր. **«Երկրորդ անգամ կտեսնիմ հայոց թագավորին. Դուն մեր ժողովուրդին ճշմարիտ Վեհափառն ես»:**

Այնուհետև շրջելով Նոր Վեհարանում, Մայր տաճարում, մայրավանքի շրջապատում, իր տպավորություններն արտահայտում էր ազգային հպարտության, «Հիանալի է, զարմանալի է» խանդավառ պոռթկումներով: Իսկ Մայր Աթոռից և Հայոց Հայրապետից հրաժեշտ առնելով, Ոսկյա հուշամատյանում գրում է.

**«Սուրբ Էջմիածինը հայ հոգու կենտրոնն է, սիրտը և ամբողջականությունը: Այստեղ գտնվելը հոգեկան մեծ փորձառություն է և ներքին զորացման ու անխորտակելիության մի լուսավորում, այս անցողական և խոցելի մարդկային աշխարհում: Այն միաժամանակ խոնարհության և հպարտության մի պահ է ինձ, այսօրվա այցելուիս համար»:**

Իսկ մեր վերածնված հայրենիքն այսօր, իր անցյալի մոխիրներից հարություն առած հեքիաթային փյունիկի պես նորափետուր զարդարված, հայության տեսիլքով, որպես ոգեղեն մի ներշնչարան իր ոսկեդարն է կերտում բոլոր բնագավառներում, նաև որպես մեր նահատակների գեղեցիկ երազների իրականացումն ու հուշարձանը:

Քիչ հետո, ժամը 24-ին, սիրելի ուսանողներ, խմբովին մտնելու եք Մայր տաճար՝ ամփոփվելու և աղոթելու, երբ զանգերն ավետեն նոր տարվա գալուստը: Թող ձեր շրթների վրա միշտ հնչի ս. Ներսես Շնորհալու աղոթքն այս ուսումնական տարվա ողջ ընթացքում.

«Սէր անուն Յիսուս
Սիրով քով ճմլեա
Սիրտ իմ քարեղէն...
Տենչալոյդ տեսլեամբ
Տուր ինձ յագենալ
Տէր Յիսուս Քրիստոս:
**Հաստեա հաւատով,**
**Հաստատեա յուսով,**
**Հիմնեցո սիրով»:**

Ամանորի այս երեկոն սրտագին բարեմաղթությունների պահ է միաժամանակ: Մեր բոլորի սրտերն այս ժամուն երախտագիտությամբ և որդիական խոր սիրով ուղղված են ազգիս սրբազնագույն Հայրապետին, Որի բարձր անձնավորության մեջ մեր օրերին «Հայոց պատմությունը կքալե և կխոսի աշխարհին»: Թող Նորին Ս. Օծությունը երկար տարիներ գահակալի ս. Լուսավորչի Աթոռի վրա՝ մարմին տալու համար Իր եկեղեցաշեն ու հայրենանվեր բոլոր ծրագրերին:

Գալդ բարի, նոր տարի: Թող մեր սրտերը ու հայրենի ամբարներն է՛լ ավելի լցվեն մեր աշխատասեր ու ազնիվ ժողովրդի հազար բերք ու բարիքով՝ ի բարօրություն հայրենյաց:

Թող է՛լ ավելի բարգավաճի մեր վերածնված Հայոց աշխարհը, եղբայրական ժողովուրդների հզոր ու խաղաղ ընտանիքում:

«Ո՜ տայր ինձ զծուխն ծխանի և առաւօտն նաւասարդի»:

Մեր բոլորի սրտագին բաղձանքն է այս սրբազան պահին.

«Թող սասանին և փշրին բարձր բերդերն անառիկ,
Եվ իյնան վար պատնեշներն զրահապատ եւ ասյանց.
Ամեն մարդու հավասար թող բաժնվի ամեն գանձ,
Թող պարտեզները բացվին և թող խուժեն հոն մարդիկ,
Բայց չկուորե՜ն ոչ մեկ ծառ, չճզմե՜ն ոչ մեկ ծաղիկ»:
(ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ)

Վեհափառ Տեր, շնորհավոր Ձեր Նոր տարին»:

Ա լսարանի ուսանող Հրաչ Օղլուգյանն արտասանում է Դանիել Վարուժանի «Օրհնություն» բանաստեղծությունը: Նույն լսարանի ուսանող Արա Ծլուկյանն անգլերեն լեզվով ընթերցում է «Օրհներգ սիրո» (Ա Կորնթ. ԺԳ 1—13) առաքելական թուղթը:

Ի դիմաց ուսանողության Վեհափառ Հայրապետի, տեսչական-դասախոսական կազմի, միաբանության անդամների Նոր տարին է շնորհավորում Գ լսարանի ուսանող Սորին սրկ. Մանդալյանը հետևյալ բովանդակալից ողերձով.

«Վեհափառ Տեր,
Գերաշնորհ, հոգեշնորհ հայրեր և
Հարգելի դասախոսներ,

Տոնական այս երեկոյին մենք՝ ուսանողներս, մեծ ուրախություն ենք զգում՝ Ձեզ մի անգամ ևս ունենալով մեր մեջ: Ավանդություն է դարձել միաբանների, դասախոսների և ուսանողների համար ամեն տարի միասին, Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությամբ, անցկացնել դեկտեմբերի վերջին երեկոն և դիմավորել նոր տարին:

Միևնույն ընտանիքի անդամները միշտ ձգտում են միասին լինել այսպիսի հանդիսավոր պահին: Այդ ձգտումը կա և մեր մեջ, որովհետև մենք բոլորս անդամ ենք մի մեծ ընտանիքի, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է: Մենք անցկացնում ենք մեր կյանքի օրերը այս աստվածահիմն Հաստատության հովանու ներքո, որպես մի մեծ ընտանիք, որի միությունը հիմնված է ոչ թե արյան, այլ հոգեկան հարազատության վրա: Հոգին, կենարար հոգին է, որ միացնում է մեզ: Բոլորս գիտենք այդ ոչ բանականությամբ, այլ սրտով: Եվ բոլորս զգում ենք, որ մեզ միացնող այս ոգեկան ուժը կմիացնի նույնպես ապագայում այս սրբազան հարկի տակ սովորող նորանոր սերունդների, կմիացնի անցյալը, ներկան և գալիքը: Մեզանից ոչ մեկը չի մտածում կյանքի անցողիկության մասին: Անցյալը գնում է անդարձ, սակայն նա մի քայլ առաջ է այս Հաստատության գոյատևման ճանապարհին:

Ոչ միայն մենք, այլ նաև ողջ մարդկությունը քայլում է առաջ՝ դեպի միևնույն նպատակը, դեպի երջանկություն: Իսկ գերագույն երջանկությունը կայանում է՝ շարունակաբար Աստծուն սիրելու մեջ, որովհետև Նա, առանց սիրո բանալիի, ոչ ոքի չի ընդունի Իր հոգուց ներս: Սերն է, իր ազնվությամբ ու անկեղծությամբ, որ բոլորին հավասարեցնում է և բարձրացնում դեպի Աստված: Նույն սերն է պատճառը, որ այսօր Դուք, Ձերդ Սրբություն, այստեղ եք, որպեսզի ուրախացնեք Ձեր հոգևոր զավակներին և ուրախանաք նրանց հետ: Ձեր սերը գոհացում է տալիս այս երիտասարդ սաների երախտագետ սրտերին՝ նրանց մոռացնել տալով մի պահ տան կարոտը, տխրությունը և այլ մտածումներ: Ցնծում են այժմ մեր հոգիները շնորհիվ այս ազնիվ զգացման:

Դեկտեմբերի վերջին օրը խնդության, հրճվանքի օր է ոչ միայն մեզ, այլև բոլոր

մարդկանց համար: Բոլորի առաջ բացվում են նոր տարվա դռները, իսկ մարդիկ պատրաստ են մտնելու այդ դռներից ներս նոր երազանքներով ու ձգտումներով՝ կյանքի ճանապարհին ավելի մեծ եռանդով քայլելու որոշումով: Դժվար է այս ճանապարհը, բայց վախ չկա մարդկանց սրտերում: Նույնպես և մենք՝ ուսանողներս, պատրաստ ենք բաց ճակատով շարունակելու այս ճանապարհը դեպի մեր նպատակը, որ մեր երջանկությունն է լինելու: Երջանկությունը, այսինքն՝ Աստուծո հանդեպ անկեղծ սերը, պայմանավորված է մարդկանց նկատմամբ ունեցած սիրով և ծառայությամբ: Դժվար և պատասխանատու գործ է այդ, մենք բոլորս լավ գիտենք, բայց վստահությունը մեր սեփական ուժերի, Ձեր օգնության և Աստուծո շնորհի վրա, քաջալերում է մեզ:

Վեհափառ Տեր, այս երիտասարդ ուսանողները, Ձեր Նոր տարին շնորհավորելով հանդերձ, նվիրում են Ձեզ իրենց հոգիները՝ հույս ունենալով, որ այս նվերը կուրախացնի Ձեզ: Ընդունեցեք այս փոքրիկ նվերը, մշակեցեք և փոխանցեցեք մեր հոգիները հայ ժողովրդին և ողջ մարդկությանը: Այս տոնական օրը, երբ մարդիկ ուրախանում են նվեր ստանալով, մենք ուրախանում ենք նվիրելով: Անտեսանելի է մեր նվերը, բայց ապագան կապացուցի նրա գոյությունը: Ապագան կապացուցի ոչ միայն այն, որ այսօրվա մեր խոսքերը լոկ խոստումներ չեն, այլ նաև այն, որ մեր սրտերում երախտագիտությունն առհավետ կգոյատևի:

Վեհափառ Տեր, 1977 թվականը թող լինի Ձեզ համար երջանիկ, պայծառ, երազանքների իրագործման մի տարի: Թող Աստված պարգևի Ձեզ, ինչպես և այստեղ գտնվող բոլոր ներկաներին, քաջառողջություն և երկար կյանք՝ ավելի արդյունավորելու համար Ձեր և բոլորիս աստվածահաճո գործունեությունը:

Այս անկեղծ ցանկություններով և մտածումներով, թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի ուսանողության անունից շնորհավորել Ձեզ և բոլոր ներկաներին Նոր տարվա առիթով և, համբուրելով Ձեր սուրբ Աջը, ստանալ Ձեր հայրական օրհնությունը»:

Հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը, Կիրակոս սրկ. Հովնանյանի գլխավորությամբ, է՛լ ավելի տոնական խանդավառություն է հաղորդում տարեմուտի հանդեսին «Ամպել ա, ձուն չի գալի», «Սուրբ գիշեր» (անգլերեն) և վրացական «Յալեգի-յալեգի» երգերի կատարումով:

Նոր տարվա տոնակատարության վերջում Գ լսարանի ուսանող Բյուզանդ սրկ. Գալայջյանը երգիծական բնույթ կրող դիպուկ կաղանդչեքներ է բաժանում ներկաներից ոմանց՝ ուրախ մթնոլորտ ստեղծելով: Հանդիսության ավարտին տեղի է ունենում ավանդական վիճակահանություն:

Մայր Աթոռի հարկի տակ Նոր տարվա առթիվ կազմակերպված հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

Մայրավանքի ժամացույցի աշտարակից ազդարարվում է ժամը 24-ը՝ նոր տարվա մուտքը աշխարհ և Մայր Աթոռ: Հնչում են միաժամանակ Մայր տաճարի զանգակները: Որքա՜ն խորհրդավորություն է պարունակում իր մեջ այդ զանգակների 365 ղողանջը գիշերվա լռության մեջ:

Հոգևոր ճեմարանի սաները նոր տարին ողջունելու համար Մայր տաճար են մտնում՝ իրենց ինքնամփոփ աղոթքները վեր առաքելու առ Աստված և հայցելու նորանոր շնորհներ իրենց ուսումնառության շրջանը հաջողությամբ ավարտելու, հոգով և մտքով է՛լ ավելի պայծառանալու և կատարելագործվելու համար:

**Հունվարի 1-ին, շաբաթ.** Կաղանդ-Տարեմուտ: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առաջ Նոր տարվա խորհրդին նվիրված գեղեցիկ քարոզ է խոսում պատարագիչ սրբազանը՝ բնաբան ունենալով Ներսես Շնորհալու հետևյալ խոսքերը. «Նորոգող հնութեանց, նորոգող և զիս, նորոգ զարդարեա»: Սրբազանը ջերմ ու սրտաբուխ բարեմաղթություններով շնորհավորում է Հայոց Հայրապետի ու Մայր Աթոռի միաբանության Ամանորը:

Այնուհետև կատարվում է հայրապետական մաղթանք: Եկեղեցական արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր միաբանությունը աջահամբույրով շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Ամանորը: Հանուն միաբանության Հայոց Հայրապետի Նոր տարին շնորհավորում է Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը՝ ցանկանալով Նրան երկար տարիների քաջառողջ ու բեղուն գործունեություն և հետագա Նրա բոլոր եկեղեցաշեն ու հայրենանվեր ծրագրերին իրականացում:

Վեհարանում Վեհափառ Հայրապետը շնորհավորում է Մայր Աթոռի միաբանության Նոր տարին և տալիս հայրական Իր օրհնությունը բոլորին:



## Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Հունվարի 5-ին, չորեքշաբթի.** «Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Երեկոյան ժամը 16-ին Մայր տաճարում կատարվում է Ճրագալույցի ավանդական ժամերգություն, որի ընթացքում կարդացվում են, ըստ Ճաշոցի, օրվա խորհուրդը նշող աստվածաշնչական ընթերցումները: Հոգևոր հեմարանի ուսանողները եկեղեցու բեմից ընթերցում են «Դանիէլի գիրքը»:

Օրվա պատարագիչն էր վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Ծննդյան նախատոնակ: Մայր տաճարում հնչում է Ծննդյան հրաշալի շարականը՝ «Խորհուրդ մեծ»: Հավարտ Ծննդյան նախատոնակի Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, իսկ միաբանության անդամները և հեմարանի ուսանողները՝ միաբանական սեղանատուն, ուր Ավետարանի ընթերցմամբ ու աղոթքով օրհնվում են Մայր Աթոռի աղն ու հացը: Ապա ներկաները ուրախ սրտով վայելում են նավակատիքի ավանդական ընթրիքը:

**Հունվարի 6-ին, հինգշաբթի.** «Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը: Մայր տաճարը լիքն է հավատացյալների հոծ բազմությամբ: Պատարագին ներկա են տեր և տիկին Նահապետ Նահապետյանները՝ Բուենոս-Այրեսից, հայտնի երգահան-երաժիշտ Լորիս Ճգնավորյանը՝ Լոնդոնից, և այլ հրավիրյալներ:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ շնորհավորելու ողջ հայությանը Նոր տարին և ս. Ծննդյան տոնը, և ապա քարոզում է օրվա մեծ խորհրդի նշանակության մասին: Սույն քարոզը երեկոյան ժամը 23-ին ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից արտասահմանյան հաղորդումների ժամանակ: Հայրապետական սույն քարոզը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի այս համարում (էջ 3):

Վեհափառ Հայրապետն այնուհետև Մայր տաճարում նախագահում է Զրօրհնյաց հանդիսությանը: Տաճարում հնչում են «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ», ինչպես նաև «Այսօր ձայնն հայրական», «Ով զարմանալի» երգերը: Ս. պատարագի երգեցողությանն իր սրտագին մասնակցությունն է բերում նաև անվանի երգչուհի Գոհար Գասպարյանը՝ ս. պատարագի մի շարք երգերի մենակատարումով:

Ս. պատարագից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ ս. Ծննդյան տոնի առթիվ: Այստեղ ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը, տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, արտասահմանյան ուխտավորները և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ս. Ծննդյան տոնի առթիվ, տրվում է ճաշկերույթ, որին ներկա էին տ. Կոմիտաս, տ. Արսեն, տ. Գևորգ սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ դոկտ.-պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, տեր և տիկին Նահապետ Նահապետյանները, Լորիս Ճգնավորյանը, Գոհար Գասպարյանը, դոկտ.-պրոֆ. Ռոբերտ Աթայանը, Մայր Աթոռի պատասխանատու աշխատողները և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթին ներկա էին նաև Սարգիս Գասպարյանն ու Անդրանիկ Հասրաթյանը:

Ճաշկերույթի ընթացքում բարիգալստյան և շնորհավորական ջերմ ճառեր են փոխանակում Վեհափառ Հայրապետը, Սարգիս Գասպարյանը, Նահապետ Նահապետյանը և Լորիս Ճգնավորյանը:

Ս. Ծննդյան ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի գոհաբանական աղոթքով:



## Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԸ ԵՎ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Դեկտեմբերի 24-ին, ուրբաթ օրը,** երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է ս. Ստեփանոս նախավկայի տոնի նախատոնակը:

Նախատոնակի ավարտին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը դպրության չորս աստիճաններ է շնորհում հոգևոր ճեմարանի Գ դասարանի ինն ուսանողների, ուրար կրելու իրավունք՝ Ա լսարանի ութ ուսանողների, հուսկ հետո՝ Գ լսարանի երկու ուսանողների և մեկ քահանայացուի՝ կիսասարկավագության աստիճան:

**Դեկտեմբերի 25-ին, շաբաթ օրը,** «Տօն է սրբոյն Ստեփանոսի նախավկային եւ առաջին մարտիրոսին»:

Արդեն ավանդություն դարձած ս. Ստեփանոսի տոնը Հայաստանյայց եկեղեցու և դպրեվանքների մեջ համարվում է սարկավագաց տոն: Առավոտյան ժամերգության ընթացքին վեհ ու տպավորիչ հնչում են «Այսօր դաւբ» և «Ստեփանոս քաղցրիկ տատրակ» տաղերը, որ կատարում են սարկավագները:

Ժամը 10.30-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագիչն է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

Ճաշոց գրքի ընթերցումից հետո սկսվում է սարկավագական ձեռնադրությունը: Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սարկավագական աստիճան է շնորհում Գ լսարանի կիսասարկավագ ուսանողներ Բյուզանդ Գալայջյանին, Գրիգոր Հանյանին և ապա քահանայացու Գեվորգ Ջելվեյանին:

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր տ. Հակոբ աբղ. Գըլընճյանը:

Ձեռնադրության հանդիսությունը կատարվում է ըստ Ձեռնադրության Մաշտոցի՝ համապատասխան շարականներով ոգեկոչելով «Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զնոսա ի դպրութենէ ի սարկաւագութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Այնուհետև ձեռնադրիչ սրբազանը խրատական ոգով հոգեշունչ քարոզ է խոսում՝ բնաբան ունենալով «Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ» (Մատթ. Ե 11):

Հավարտ ս. պատարագի, Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ, Մայր Աթոռի բոլոր սարկավագական խումբը (թվով 11) գնում է Վեհարան՝ ստանալու Հայոց Վեհափառ Հայրապետի հայրական օրհնությունն ու պատգամը:

Նման առիթներին Հայոց Վեհափառ Հոր սիրտը ուրախության թրթիռներ է ապրում, վասնզի նոր մշակներ են հասունանում հայ հավատավոր հոգիների անդաստանը հերկելու:

Վեհափառ Հայրապետը ջերմորեն է ընդունում Իր հոգևոր զավակներին և հատկապես՝ նորընծաներին, շնորհավորում նրանց տոնը և երկնային շնորհ հայցում նրանց հոգու զորացման ու արիության համար, բարեմաղթում, որ նրանք լցվեն ս. Ստեփանոսի ոգով, հավատքով և ներողամտությամբ՝ արժանավորապես կատարելու համար իրենց հոգևոր սպասավորությունը Հայաստանյայց եկեղեցուն և հայ ժողովրդին:

Այնուհետև, ժամը 14.30-ին, վանական սեղանատանը, սարկավագաց տոնի առթիվ, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը: Ճաշկերույթի ժամանակ սարկավագների տոնը շնորհավորում է ճեմարանի դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Նորընծա սարկավագների անունից Վեհափառ Հայրապետին, տեսչական ու դասախոսական կազմին ուղղված երախտագիտական ջերմ խոսքով հանդես եկավ Բյուզանդ սարկավագ Գալայջյանը:

**Ս. Ստեփանոսի տոնի առթիվ ձեռնադրված սարկավագներն են.**

ա.—**Բյուզանդ սրկ. Գալայջյան:** Ծնվել է 1957-ին Բեյրութում: Սովորել է «Հովակիմյան-Մանուկյան» երկրորդական վարժարանում: Հոգևոր ճեմարան է ընդունվել 1973 թվականին:

բ.—**Գրիգոր սրկ. Հաճյան:** Ծնվել է 1957-ին Տրիպոլիում (Լիբանան): Նախ սովորել է «Նուպար-Խրիմյան» նախակրթարանում և ապա «Ֆարահ-Անտոն» արաբական երկրորդական վարժարանում, որն ավարտել է 1973-ին: Նույն թվականին էլ ընդունվել է հոգևոր ճեմարան:

գ.—**Գևորգ սրկ. Զելվեյան:** Ծնվել է 1950-ին Նիկոզիայում (Կիպրոս): Միջնակարգ դպրոցն ավարտել է Լենինականում 1969-ին: 1976-ին եկել է Մայր Աթոռ միամյա քահանայական կուրսեր անցկացնելու համար:

**Ուրար կրելու իրավունք ստացան Ա լսարանի հետևյալ սաները.** Ավետիքյան Վաչագան, Դիշիքճրրքյան Մկրտիչ, Խարազյան Խաչիկ, Ճլուկյան Արա, Պալճգյան Հովսեփ, Սահրադյան Տիգրան, Տերտերյան Վահրամ, Օղլուկյան Հրաչ:

**Դպրության չորս աստիճաններ ստացան Գ դասարանի հետևյալ սաները.** Ավագյան Վարդգես, Գարգալաջն Գագիկ, Գրիգորյան Հովհաննես, Դավթյան Ստեփան, Հակոբյան Վռամշապուհ, Մալյան Բորիս, Մանդալյան Ազատ և Գյուլեզյան Օնիկ:

## ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Դեկտեմբերի 31-ին, երկուշաբթի օրը,** առավոտյան ժամը 11-ին, Երևանում, Հայաստանի արվեստի աշխատողների տան դահլիճում, տեղի է ունենում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տարեկան պլենումը՝ կոմիտեի հիմնադրության 12-րդ տարեդարձի առիթով:

Պլենումին ներկա է նաև Վեհափառ Հայրապետը: Ն. Ս. Օծությանը ընկերակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Վեհափառ Հայրապետը պլենումի սպասվող նախագահության սեղանի շուրջ գրավում է Իր տեղը:

Պլենումի մասնակիցները մեկ րոպե հոտնկայս և լռությամբ հարգում են հիշատակը կոմիտեի վերջին պլենումից հետո հանգուցյալ անդամների:

Պլենումի օրակարգում դրված էին երկու հարցեր.

1. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության համարտավությունը վերջին պլենումից հետո, և

2. Կազմակերպչական հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ բովանդակալից ու ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, որը հանգամանորեն ներկայացնում է կոմիտեի հայրենիք-սփյուռք մշակութային և հայրենասիրական աշխատանքների ու իրագործումների ամբողջական և բազմակողմանի պատկերը՝ խոսելով միաժամանակ կոմիտեի գործունեության հետագա հեռանկարների և ծրագրերի մասին:

Այնուհետև տեղի է ունենում զեկուցագրում շոշափված հարցերի ու կոմիտեի հետագա գործունեության և անելիքների մասին մտքերի հետաքրքիր փոխանակություն, որին մասնակցում են ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր պետական կենտրոնական արխիվային վարչության պետ դոկտ. Աշոտ Հարությունյանը, հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Շահեն Տատուրյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Էդվարդ Միրզոյանը, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանի դիրեկտորի տեղակալ Բաբկեն Զուքասզյանը և Կենտկոմի ինֆորմացիայի ու արտասահմանյան կապերի բաժնի վարիչ Լևոն Մանասերյանը:

Ապա հրավիրվում է Հայոց Հայրապետը՝ Իր ողջույնի խոսքն ասելու պլենումի մասնակիցներին և Իր գնահատանքը հայտնելու կոմիտեի կատարած մշակութային ու հայրենասիրական գործունեության վերաբերյալ.

«Մեծ գոհունակությամբ ենք եկել այսօր այստեղ՝ Մեր ողջույնը բերելու պլենումի բոլոր մասնակիցներին և Մեր գնահատանքը հայտնելու Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի իրապես օգտակար և բազմակողմանի գործունեությանը, որի մասին այնքան հանգամանորեն և մանրամասնությամբ խոսեց կոմիտեի նախագահ տիար Վարդգես Համազասպյանը:

Կոմիտեն իր հիմնադրության առաջին իսկ օրից սերտ կապ է պահպանում սփյուռքի հետ, և ծավալում է շատ շնորհակալ մշակութային և հայրենասիրական գործունեություն, որ արժանի է մեր բոլորիս անվերապահ գնահատականին:

Մենք լավ գիտենք, որ կոմիտեն մեծ ու փրկարար աշխատանք է կատարում սփյուռքի հայապահպանման գործում: Մեր ջերմ մաղթանքն է, որ կոմիտեն է՛լ ավելի հետևողականությամբ, խանդավառությամբ ու լավատեսությամբ շարունակի իր առաքելությունը:

Այս առթիվ Մենք ջերմորեն ողջունում ենք 1975 թվականի դեկտեմբերին Մոսկվա-

յում արտասահմանի սովետական քաղաքացիների հետ մշակութային «Հայրենիք» («Родина») կոմիտեի կազմությունը, որի ներկայացուցիչներն այժմ այստեղ են: «Հայրենիք» միութենական մշակութային կոմիտեն, վստահ ենք Մենք, որ մեր հանրապետական մշակութային կոմիտեի հետ է՛լ ավելի պիտի ծավալի իր գործունեությունն արտասահմանում:

Զեկուցումից գոհունակությամբ տեղեկացանք կոմիտեի մտահոգությունների մասին լիբանանահայերի ողբերգական կացության վերաբերյալ: Այս կապակցությամբ Մենք կկամենայինք հայտնել այստեղ, թե Լիբանանի կարոտյալ ընտանիքներին օգնելու համար Մենք Բեյրութում կազմեցինք յոթ հոգուց բաղկացած «Լիբանանահայոց օգնության հանձնախումբ»-ը, որի մեջ ընդգրկված էին հայ քաղաքական չորս կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև մեկական ներկայացուցիչներ հայ կաթոլիկ և հայ բողոքական համայնքներից: Մեր կոչերի հիման վրա արտասահմանում սկսվեց հանգանակություն, որի արդյունքներն ուղարկվեցին Բեյրութի օգնության հանձնախումբին, ծառայելու համար իրենց նպատակին: Մայր Աթոռն ինքը ևս հանգանակությանը մասնակցեց, իր համեստ միջոցներից տրամադրելով 20000 դոլլար: Առ 1976 թվականի դեկտեմբերի 31-ը Բեյրութ՝ օգնության հանձնաժողովին փոխանցվեց 307000 դոլլար: Հանգանակված փողերի հաշիվը Մայր Աթոռը վերջերս հրատարակեց «Էջմիածին» ամսագրում և սփյուռքահայ մամուլում:

Հայոց Հայրապետի կոչով հանգանակված գումարի մեջ լիբանանահայությունը տեսավ նաև հոգատար վերաբերմունքը մայր հայրենիքի: Մեր հրապարակած կոչերը լայն արձագանք գտան և սփյուռքում հանգանակություններ սկսան կազմակերպել նաև այլ միություններ, նույն նպատակի համար : Կարևոր գումարներ հանգանակվեցին մանավանդ Հ. Բ. Ը. Միության ջանքերով:

Այստեղ կարևորությամբ խոսվեց նաև սփյուռքի հայ երիտասարդության մասին: Իրապես շատ կարևոր հարց է դա և հույժ գնահատելի է կոմիտեի այս ուղղությամբ կատարած գործը: Սփյուռքից ուսուցիչների և երիտասարդների հրավիրումը մայր հայրենիք կարևոր ու հույժ օգտաշատ միջոցառում է: Մենք կցանկանայինք այստեղ հիշել մանավանդ ԱՄՆ-ի հայոց թեմերից եկեղեցական երիտասարդաց կազմակերպությունների այցելությունները Հայաստան: ԱՄՆ-ից եկած մեն մի երիտասարդ հայկականության լիցք է ստանում այստեղ և վերադառնում է մեծ ոգևորությամբ: Այդ երիտասարդները իրենց համայնքների ծոցում դառնում են ճշմարիտ պատգամախոսները հայրենիքի: Դրական մեծ և կարևոր գործ է նրանց այցը մայր հայրենիք: Այդ միջոցառումին իր մասնակցությունն է բերում նաև Մայր Աթոռը նյութապես օգնելով, իսկ կոմիտեն կազմակերպում է մշակութային դաստիարակչական աշխատանքը դասընթացների, դասախոսությունների, շրջապտույտների միջոցով:

Այս միջոցառումը է՛լ ավելի պետք է ընդարձակել՝ է՛լ ավելի արդյունավետ դարձնելու համար: Մենք պիտի թելադրենք կոմիտեին, ամեն տարի արտասահմանից հրավիրել երիտասարդական բազմաթիվ խմբեր: Մեր առաջարկն է՝ երիտասարդ այս խմբերի համար Երևանում և կամ նրա մոտակայքում կառուցել մասնավոր մի հատուկ շենք՝ սփյուռքահայ երիտասարդների պալատ, առնվազն 100 ննջարաններով, հարակից բոլոր հարմարություններով: Հայոց Հայրապետը պատրաստ է օգնելու այս ձեռնարկի հաջողության համար: Վստահ եղեք, որ կաթողիկոսը կհարգի Իր խոստումը՝ անպայման:

Մեր բոլորիս պարտականությունն է, քանի դեռ ուշ չէ մտածել սփյուռքի հայ նոր սերնդի ներկայի ու ապագայի մասին:

**Փրկել սփյուռքի այսօրվա երիտասարդությունը, նշանակում է փրկել հայ սփյուռքը: Եթե կարողանանք փրկել այսօրվա երիտասարդությունը, վստահ եղեք, որ սփյուռքի կյանքը երկարաձգած կլինենք առնվազն մի քանի տասնյակ տարիներ»:**

Հայոց Հայրապետի հայաշունչ խոսքը լսվում է մեծ հետաքրքրությամբ:

Այնուհետև ողջույնի խանդավառ խոսքով հանդես է գալիս Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական «Հայրենիք» ընկերության նախագահի տեղակալ Ն. Պ. Գուսևը, որը խոսեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հայրենիք-սփյուռք հարաբերությունների ամրապնդման մասին:

Պլենումը զբաղվում է նաև կազմակերպչական աշխատանքներով:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի պլենումն իր աշխատանքներն ավարտում է խանդավառ մթնոլորտում, հայրենիք-սփյուռք հայրենասիրական հետագա կապերի է՛լ ավելի ամրացման արտառուչ վճռականությամբ և պայծառ հեռանկարներով՝ ի մխիթարություն սփյուռքի հայրենակարոտ հայության և հայրենաբնակ մեր ժողովրդի:




## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Հունվարի 2-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Անթիլիասի Աթոռի միաբան տ. Անուշավան վրդ. Դանիելյանը և քարոզում Նոր տարվա տոնի առիթով մարդու հոգևոր ու բարոյական վերանորոգության մասին:

* * *

**Հունվարի 7-ին, ուրբաթ.—Յիշատակ մեռելոց.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը: Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

**Հունվարի 9-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. հակոբ քհն. Հակոբյանը:

* * *

**Հունվարի 10-ին, երկուշաբթի.**—Այսօր, Նոր տարվա և ս. Ծննդյան արձակուրդներից հետո, վերսկսվեցին հոգևոր ճեմարանի դասերը:

Ժամը 13-ին վերատեսչի նախագահությամբ գումարվեց մանկավարժական խորհրդի նիստ, որը զբաղվեց ուսումնադաստիարակչական աշխատանքների քննությամբ՝ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի առթիվ:

* * *

**Նույն օրը** Մայր Աթոռ է ժամանում Հռոմի քահանայապետական Արևելյան ինստիտուտի բյուզանդական ծիսագիտության դասախոս հայր Միգել Արրանցը:

Երեկոյան հարգելի հյուրը հոգևոր ճեմարանի հարկի տակ դասախոսություն է կարդում՝ «Կաթոլիկ եկեղեցին և էկումենիզմը» թեմայի շուրջ: Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Դասախոսության ավարտին հայր Միգել Արրանցը պատասխանում է ներկաներից ոմանց հարցերին:

Հունվարի 11-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել հայր Միգել Արրանցին և նրա հետ ունենում ջերմ զրույց հայ և կաթոլիկ եկեղեցիների հարաբերությունների մասին՝ էկումենիկ ոգով:

Հայր Միգել Արրանցը Մայր Աթոռում գտնված օրերին այցելում է Երևանի ս.

Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, պատկերասրահ, պատմության թանգարան և Բյուրականի աստղադիտարան: Հարգարժան հյուրը ուխտի է գնում ս. Գեղարդ վանք և այցելում Գառնիի վերջերս վերակառուցված հեթանոսական տաճար:

Հունվարի 12-ին հայր Միգել Արրանցը հրաժեշտ է տալիս Վեհափառ Հայրապետին ու մեկնում լավագույն տպավորություններով:

*
* *

**Հունվարի 18-ին, հինգշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.**

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ս. Գայանե վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը:

*
* *

**Նույն օրը,** հին տոմարով Նոր տարվա առթիվ, Վեհափառ Հայրապետի մոտ տեղի է ունենում ընդունելություն, որին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները՝ տ. Կոմիտաս և տ. Հուսիկ սրբազանները, դոցենտ Հովհաննես Թոփուզյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամներ՝ հնագետ, ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը, դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, նկարիչ ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, պրոֆ. Կոստանդին Հովհաննիսյանը, դոկտ. Ալեքսանդր Սահինյանը, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը և Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանը:

Ընդունելությանը հրավիրվել էին նաև Մայր Աթոռի աշխատավորության ղեկավար անձնավորություններ:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ընդունելության ժամանակ ողջույնի և շնորհավորանքի ջերմ ճառեր են փոխանակվում:

*
* *

**Նույն օրը,** երեկոյան ժամը 20.30-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում:

Հանդիպմանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Հունվարի 16-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ աբդ. Գըլընճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զայս գիտեմք, զի որ յարոյց զՅիսուս և զմեզ ընդ Յիսուսի յարուցցէ և յանդիման կացուցցէ ձեօք հանդերձ» (Բ Կորնթ. Դ 14) բնաբանով:

*
* *

**Հունվարի 21-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

**Հունվարի 23-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և քարոզում «Ամէն, ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ» (Հովհ. Գ. 3) բնաբանով:

*
* *

**Հունվարի 28-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան ժամը 18.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի է ունենում Երևանի Կոմիտաս վարդապետի անվան լարային քառյակի համերգը:

Համերգին ներկա էր Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով, հոգևոր ճեմարանի դասախոսներով և ուսանողությամբ:

Լարային քառյակին իրենց մասնակցությունն էին բերել միջազգային մրցությունների դափնեկիր **Էդվարդ Թադևոսյանը** (Ա ջութակ), անդրկովկասյան մրցույթի դափնեկիր **Հակոբ Մեքինյանը** (Բ ջութակ), համառուսաստանյան մրցույթի դափնեկիր **Յակով Պապյանը** (ալտ), անդրկովկասյան մրցույթի դափնեկիր և միջազգային դիպլոմանտ **Ֆելիքս Սիմոնյանը** (թավջութակ), Հայաստանի կուլտուրայի մինիստրության երաժշտական հիմնարկների բաժնի պետ կոմպոզիտոր Ռոմեն Դավթյանը և արվեստի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Ադամ Խուդոյանը:

Քառյակը հանդես եկավ հետևյալ ծրագրով.

Բեթհովեն՝ 4-րդ լարային քառյակ.

Բաբաջանյան՝ լարային քառյակ (Դ. Շոստակովիչի հիշատակին գրված).

Ա. Խուդոյան՝ լարային քառյակ (Կոմիտասի անվան քառյակին նվիրված).

Կոմիտաս-Ալամազյան՝ Հայկական ժողովրդական մեղեդիներ:

Համերգի վերջում կոմպոզիտոր Ա. Խուդոյանը սրտագին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այն հրավերի համար, որով նորակազմ քառյակի մասնակիցներին հնարավորություն տրվեց ելույթ ունենալու նաև Մայր Աթոռում:

Ապա հոգևոր ճեմարանի դասախոսների, միաբանության անդամների, սաների շնորհակալության զգացմունքների թարգմանը հանդիսացավ ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը՝ ոգեկոչելով նաև խնկելի հիշատակը, որպես Մայր Աթոռի միաբանի, Կոմիտաս վարդապետի և նրա անմոռաց ու ազգանվեր գործունեության:

* * *

**Հունվարի 30-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եւ այլն անկա յերկիր բարի և պարարտ, և բուսեալ արար պտուղ հարիւրապատիկ» (Ղուկ. Ը 8) բնաբանով:





Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

# ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՆ ԵՎ ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐՎԱ «ՍԻՐՏ ԻՄ ՍԱՍԱՆԻ» ԳԱՆՁ-ԵՐԳԸ

Մխիթար Այրիվանեցին ԺԳ դարի հայ նշանավոր երաժիշտներից է: Դա երևում է նրա վարքագրական աշխատություններից[1], հայտնի Ճառընտիրից[2], ինչպես և երաժշտա-բանաստեղծական ստեղծագործություններից[3]: Հարմար առիթով և հատուկ հոդվածով կանդրադառնանք երաժիշտ Այրիվանեցուն:

Այրիվանեցու գանձերից առնվազն երեք-չորս տասնյակ պատկերներ հայոց եկեղեցիներում ժամանակին հնչել են գանձ-երգերի ձևով: Սակայն, ցավոք, դրանցից, եղանակներով հանդերձ, ավանդության ուժով մինչև մեր օրերը հասել են, գլխավորապես, երկու գանձ-երգեր. «Այս խորհուրդ լըցաւ» և «Սիրտ իմ սասանի»: Երկուսն էլ Այրիվանեցու՝ Ավագ հինգշաբթի օրվա գանձիցն են («Զահեղ զանքընինի, զխորհուրդս խորին»)[4]:

Երկու գանձ-երգերն էլ ձայնագրել են թե՛ Ն. Թաշճյանը[5], թե՛ Ե. Տնտեսյանը[6] և թե՛ մանավանդ Կոմիտաս վարդապետը[7]:

---

[1] Մասնավորապես Ստեփանոս Սյունեցու (Բ-ի) վկայաբանությունից, որտեղ, բացի Սյունեցու երաժշտական գործունեության վերաբերող տեղեկություններից, գտնում ենք նաև նրա երաժիշտ-բանաստեղծ քրոջ՝ Սահակադուխտի, ինչպես և ընկերակից, կարկառուն երաժիշտ ու երգահան Գրիգոր Գոգիկ վարդապետի մասին անգնահատելի տեղեկություններ: Վկայաբանությունը, ուր Այրիվանեցին հիշատակում է իր սեփական երաժշտա-ստեղծագործական աշխատանքներից մեկը ևս, վաղուց հրատարակել է Գարեգին արքեպ. Հովսեփյանը: Տես նրա «Մխիթար Այրիվանեցի» (նորագյուտ արձանագրություն և երկեր), 1931: Օգտվելով դրանից, ինչպես և այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող համապատասխան գրչագրից (№ 6261, էջ 628ա), մենք ժամանակին առանձնացնելով հրատարակեցինք Գրիգոր Գոգիկի վարքը, որ շատ շահեկան նյութ է բովանդակում հայ և բյուզանդական երաժշտության պատմության համար: Հմմտ.՝ «Գրիգոր Գոգիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 3:

[2] Վաղուց հայտնի և մանրամասն նկարագրված ու գնահատված միավոր է սա էլ: Հմմտ.՝ **Հ. Տաշյան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին ի Վիեննա, 1895, էջ 552 և 556—558;

[3] Այն մասին, որ Այրիվանեցին ինքն իսկ ցուցմունք է թողել՝ իր գանձերը երգելով (ձայնեղանակով) կատարել, տե՛ս **Է. Հարությունյան**, Մխիթար Այրիվանեցու «Գանձարանը», «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1975, № 3, էջ 101:

[4] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 8251, էջ 202ա, 202բ:

[5] Տե՛ս «Ձայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ Պատարագի», Վաղարշապատ, 1878, էջ 216—220:

[6] **Ե. Տնտեսեան**, Շարական ձայնագրեալ, Իսթանբուլ, 1934, Ե մաս, էջ 775—776:

[7] **Կոմիտաս վարդապետ**, Տաղք և Ալելուք Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցւոյ, Փարիզ, 1946, էջ 14—16;

Դրանցից «Սիրտ իմ սասանի» երգը, հատկապես Կոմիտասի ձայնագրությամբ, բնարական լայն շնչի հազվագյուտ կոթող է: Գաղափարական բովանդակությամբ այն հայ հոգևոր երաժշտարվեստում ներկայացնում է Հուդայի սարտազդեցիկ կերպարի և նրա դավաճանության ու մատնության հետ կապված նյութը: Ներքին ապրումն այստեղ (մասնավորապես երաժշտության ընձեռած միջոցներով) տրված է հոգեբանական նոր խորացումով և անհատականացման նոր աստիճանի վրա: Երևում է, որ հեղինակը ծանոթ է Նարեկացու, Շնորհալու, Տարոնեցու և այլոց ստեղծագործությանը և իր երկին հաղորդել է ԺԳ դարին միանգամայն վայել տեքնիկական ու գեղարվեստական մակարդակ:

Ամբողջ մեղեդին (կամ մեղեդիական տունը) համապատասխանում է գրական բնագրի մեկ տողին ու ներկայացնում՝ ներքուստ ընդլայնված երաժշտական պարբերություն, հավելյալ եզրափակիչ կարճամփոփ հանգաձևով: Պարբերությունը բաղկացած է երեք նույնատիպ նախադասություններից, որոնք հաջորդաբար զուգորդվում են գրական տողի հնգավանկ երեք ոտքերի կամ անդամների հետ («Սիրտ իմ սասանի, սարսափ զիս ունի, վասն Յուդայի»): Երաժշտական կառույցի հիմքն առաջին նախադասությունն է: Այն նույնությամբ կրկնվում է տողի երկրորդ անդամի հետ՝ ստեղծելով սպասողական լարված վիճակ: Իսկ երրորդ անդամի զուգորդությամբ ընդլայնվելով, շիկացած բարձրակետ է գոյացնում և աստիճանաբար մարում ու եզրափակվում:

# ՍԻՐՏ ԻՄ ՍՍՍՑՆԻ

Մխիթար Պլտիկանցի

Գայանեղենց Կամիտաս Վարդապետ

Ներդաշնակեց Ն. Թաճմիզյան




Սա
սա
ցի
Սար
սակ
զիս
ու
ցի


ff
mf
վատ
մեծ
դա
p
մի
allargando
pp
մեր
մեր



# ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌԱԳՐԱՑ Ը ԴԱՐՈՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿ ՂԵՎՈՆԴ ԵՐԻՑՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Կարապետ Եղյան 1887-ին Ս. Բեդերբուրգի մեջ հրատարակեց Ղևոնդի պատմագրության երկրորդ տպագրությունը **Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետի Հայոց** վերնագրով: Ցարդ այդ թվականեն ասդին Ղևոնդ նոր հրատարակության մը չէ արժանացած:

Իր ընդարձակ ներածականին մեջ Եղյան կնշե շարք մը օգտակար տեղեկություններ Ղևոնդի պատմագրության այլ հրատարակությանց և ասոնց որպես բնագիր ծառայող ձեռագրաց մասին, ըստ հետևյալին:

էջ ին—«Ի ձեռագիր օրինակս պատմութեան Ղեւոնդեայ է խորագիր այսպիսի Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց որ յաղագս երեւելոյ Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել ազգիս Հայոց»:

էջ ա—«Յամի Տեառն 1856-ոդի Կարապետ վարդապետ Շահնազարեանց ընծայեաց ի լոյս ի Փարիզ քաղաքի գթարգմանութիւն պատմութեանն Ղեւոնդեայ ի լեզու գաղղիացւոց հանդերձ բազմաթիւ ծանօթութեամբք, ընդ խորագրաւս Histoire des guerres et des conquetes des Arabes en Armenie, par l'eminent Ghevond vartabet armenien, ecrivain du huitieme siecle. «Իսկ յամին 1857 զառաջինն ընծայեաց նա ի լոյս ի նմին քաղաքի եւ զնայերէն բնագիր պատմութիւնս հանդերձ ծանօթութեամբք, զորս մեծաւ մասամբն առեալ եղեն ի հայ ի գաղղիական թարգմանութենէն իրմէ:

«Զտպագիրն իր արար Կ. Վ. Շահնազարեան ըստ միում օրինակի, զոր գաղտափարեալ էր նորա ի ձեռագիր պատմութենէն Ղեւոնդեայ մատենադարանացն Ս. Էջմիածնի:

«Յամին 1862 ըստ առաջարկութեան նեմարանին գիտութեանց որ ի Ս. Բեդերբուրգ արար Ք. Պատկանեան գթարգմանութիւն պատմութեանս ի լեզու Ռուսաց եւ յաւել ի նմա ծանօթութիւնս բազումս կարի հետաքննականս:

«Նորս այս մեր տպագիր արարաւ համեմատութեամբ առաջնոյ տպագրին ընդ ձեռագիր օրինակի պատմութեանն Ղեւոնդեայ որ առ մեզ, զորմէ աւանդեալ են լիակատար տեղեկութիւնք ի Յառաջաբանի Պատմութեանն Ասողկան յէջս լգ-լը: Եւ քանզի, որպէս անդն յիշատակի, թերի էր ի ձեռագրի յայսմիկ Պատմութիւնն Ղեւոնդեայ ի սկիզբն մինչեւ ցգլուխն ԺԳ (յէջն 43 տպագրին մերոյ), վասն այսորիկ խնդրեցաք յարժանապատիւ Յուսկանէ վարդապետէ Մովսիսեանց տալ գաղտափարել ի ձեռագիր օրինակէն Մատենադարանին Ս. Էջմիածնի զմասանն թերի ձեռագրիս մերոյ:

էջ ամ—«Բաղդատութեամբ ձեռագիր օրինակացս այսոցիկ ընդ առաջնոյ տպագրին ըստ խնդրոյ մերում կազմեաց զբնագիր մերոյս Տպագրի Ստ. Մալխասեանց, հանդերձ ցուցմամբք տարբեր ընթերցուածոցն ի ստորոտս իրաքանչիւր իջից:

«Գլխակարգութիւնք յայսմ Տպագրի նշանակեցան ըստ բաժանմանց գլխոց Ձեռագրի օրինակին որ առ մեզ, քան-

զի գլխակարգութիւնք Փարիզեան տպագրին ոչ են Ղեւոնդի, այլ հրատարակչի նորին Կ. Վ. Շահնազարեանց»:

Վերոհիշյալ մեջբերումներեն կհայտնվի թե Ղևոնդի պատմագրությունը չորս հրատարակությանց արժանացած է ցարդ.—1856-ին ֆրանսերեն թարգմանությամբ և 1857-ին հայերեն բնագրավ, երկոքին Կարապետ վրդ. Շահնազարյանի կողմե ի Փարիզ: 1862-ին Քերովբե Պատկանյան Ս. Բեդերբուրգի մեջ զայն կհրատարակե ռուսերեն, և վերջապես նույն քաղաքին մեջ 1887-ին Ստեփան Մալխասյանցի քննական բնագիրը ի լույս կընծայե Կարապետ Եզյան:

Նույն հառաջաբանեն կհայտնվի նաև որ առաջին երկու հրատարակությանց համար Կ. Վ. Շահնազարյան ի ձեռին կունենա միայն մեկ ձեռագիր զոր ինքն ընդօրինակած էր այլ ձեռագրե մը որ ի պահ կմնար ս. Էջմիածնի Մատենադարանին մեջ: Այս պարագան առավել կպարզվի Frederic Macler-ի հայթայթած տեղեկությամբը[1], ըստ որում Շահնազարյան կատարած է բնագրի ընդօրինակությունը 1855-ին Թիֆլիսի Կարապետ արքեպս. Բագրատունիի ձեռագիր օրինակի վրայեն, Փարիզի Մատենադարանին խնդրանոք[2]: Շահնազարյանի գաղափարյալ ձեռագիրը Macler-ի ցուցակագրության մեջ կկրե 209 թիվը: Կարևոր է հետևաբար ստուգել Թիֆլիսի Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունիի ձեռագրին գոյությունը, քանի որ Շահնազարյանի զույգ հրատարակությունները հիմնված են այդ միակ բնագրի վրա: Արդ, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակեն[3] կստուգվի թե Մատենադարանի թիվ 3070 ձեռագիրը, գրված ԺԷ դարուն, իրոք կպատկաներ Թիֆլիսի Կարապետ արքեպս. Բագրատունվո[4]: Ստորև պիտի տանք սույն ձեռագրի նկարագրակաները իր կարգին:

F. Macler-ի նույն ցուցակին մեջ կա նաև այլ ձեռագիր մը Ղևոնդի պատմագրության որ կկրե 208 թիվը[5]: Սույն ձեռագիրը կկրե փոքրիկ հիշատակարան մը գրիչին իսկ կողմե, Ed. Dulaurier-ի, որ ընդօրինակած է զայն M. Brosset-ի պատկանող ձեռագիր օրինակեն սեպտեմբեր 13—22-ի ընթացքին 1851 թվականին Dulaurier կհայտնե նաև որ Brosset-ի իսկ ձեռքով մնացած հիշատակարան մը, մատյանի պահպանակին վրա, կտեղեկացնե թե ձեռագիրը ընդօրինակված էր Թիֆլիսի Կարապետ արքեպս.-ի օրինակեն մի ոմն Ժան Լազարոֆի ձեռամբ, և թե ձեռագիրը ԺԷ դարու գրություն մը եղած է:

Ուստի, այժմ նկատելի է որ ԺԷ դարուն գրված Ղևոնդի պատմագրության բնագիրը, որ ներկայիս Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 3070 ձեռագիրն է, կարևոր բնագիրներեն մին է Ղևոնդի երկին:

Եզյան իր 1887-ի հրատարակության մասին խոսելով կտեղեկացնե թե ինք իր ձեռքին տակ ուներ սեփական բնագիր մը (ձեռագիր) Ղևոնդի երկին որմե սակայն կպակսեին առաջին 12 գլուխները (մինչև 43-րդ էջը տպագրյալ բնագրին): Այս կարեվոր թերին պատճառով Եզյան խնդրած էր Հուսիկ վրդ. Մովսիսյանեն որ ս. Էջմիածնի Մատենադարանի օրինակեն ընդօրինակել տար պակսող 12 գլուխները:

Եզյանի հրատարակությունը, կատարված Ստ. Մալխասյանցի աշխատասիրությամբ, կհայտնե երեք բնագիրներու օգտագործումը.

ա) Շահնազարյանի տպագիր հրատարակության (1857).

բ) Եզյանի սեփական ձեռագրին (թերի 12 գլուխներով).

գ) ԺԳ դարու լավագույն օրինակի (ձեռագիր թիվ 1902 Մատենադարանի):

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լևոն Խաչիկյան իր մարտ 31 1972 թվակիր նամակով կհաստատե այն թե «Կարապետ Եզյանը Ղևոնդ պատմիչի իր հրատարակությունն իրագործել է իր անձնական ձեռագիր օրինակի, 1857 թվի Կ. Շահնազարյանի հրատարակության և Մաշտոցյան Մատենադարանի № 1902 ձեռագրի բաղդատությամբ»: Թե Եզյան օգտագործած է վերոհիշյալ ԺԳ դարու գրչագիր օրինակը լավագույնս կապացուցվի հրատարակյալ բնագրի վերջավորության գտնվող հիշատակարանեն որ նույնն է Մատենադարանի թիվ 1902 ձեռագրի հիշատակարանին հետ:

Եզյանի սեփական ձեռագիրը, որ թերի էր «ի սկիզբն մինչեւ ցգլուխն ԺԳ», կարելի է հեշտիվ նույնացնել Մատենադարանի թիվ 4584 ժողովածուին հետ, գրված Տիգրանակերտի մեջ 1668 թվին, որ և հիրավի նույն թերությունն ունի:

Հետևաբար, այժմ հայտնի կդառնա որ

---

[1] Frederic Macler, Catalogue des Manuscripts Armeniens et Georgiens de la Bibliotheque Nationale, Paris MDCCCCVIII.

[2] Անդ, ձեռ. թիվ 209, էջ 115—116:

[3] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, Երևան, 1970, խմբ. Լ. Խաչիկյանի և Ա. Մնացականյանի:

[4] Անդ (ներածական), էջ 68: Տես Հ. Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, հատ. Գ, Վիեննա, 1930, էջ 342:

[5] Macler F., նշ. աշխ., էջ 115:

Եզյան իր 1887-ի հրատարակությանը հաստատ բաղդատած է հետևյալ ձեռագիրները.

ա) Թիվ 1902, ԺԳ դարու լավագույն օրինակը.

բ) Թիվ 4584, ԺԷ դարու թերի օրինակը.

գ) Թիվ 3070, ԺԷ դարու Թիֆլիսի Կարապետ արք. Բագրատունվո օրինակը (հետ տպագրության Կ. Վ. Շահնազարյանի կողմե):

Կարելի է ընդունիլ որ իր հրատարակությամբ Եզյան աչքի առջև ունեցած է գոյություն ունեցող գրչագիրներեն նախնագույնն (ու ամենավստահելին), ինչպես նաև երկու այլ ընտիր օրինակներ որոնց շնորհիվ սույն հրատարակությունը կարելի կըլլա նկատել ընտիր և թերևս նույնիսկ քննական:

**Ղևոնդի պատմագրության ձեռագիրները**

Մեր ուսումնասիրությունը առավել հաստատ և համոզիչ դարձնելու մտոք ստորև կուտանք գոյություն ունեցող և մեզի ծանոթ գրչագրաց ցուցակն ու հիշատակարանները: Հատուկ շնորհակալիք կպարտիմ պրոֆ. Լևոն Խաչիկյանի, Մաշտոցյան Մատենադարանի տնօրենին, որ հաճեցավ մեր խընդրանքին վրա արտագրել և ուղարկել Մատենադարանին մեջ պահվող Ղևոնդի յոթը ձեռագրաց հիշատակարանները:

Երևանի Մաշտոցյան Մատենադարանին մեջ կպահվին ընդամենը ութը ձեռագրեր որոնցմե մին (թիվ 4442) ընդօրինակված է արդեն իսկ տպագրյալ բնագրե մը: Մեզի կմնա ուրեմն ծանոթանալ մնացյալ յոթը օրինակներուն:

## ՁԵՌԱԳԻՐ թիվ 1902

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԳ դար: **Գրիչ՝** Սարգիս: **Ստացող՝** Համազասպ Հաղբատեցի: **Կազմող՝** Շմավոն վրդ.: **Թերթ՝** 515: Թուղթ: 24,4×16,4: Միասյուն: Բոլորգիր: **Տող՝** 19—20: **Պահպանակ՝** մագաղաթ 1 (մասունք), ուղղագիծ երկաթագիր: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: Աստառ շերտազարդ կտավ: **Հիշատակարան գրչի՝** 130բ, 217բ. կազմողի 4ա, 239բ, 294ա (1664 թ.), 310ա (1690 թ.):

**Բովանդակություն.** Ղեւոնդեայ երիցու Պատմութիւն հայոց: Եւագրեայ Հարիւրաւորքն վեցերորդք, խրատք, Թուղթ առ Մելանիա. կից Լուծմունք, զոր արարեալ է ումեմն ի լեռնէն Նեմրէի ի խնդրոյ եղբարց: Պատմութիւն Վրաց:

**(Ղևոնդի մասն) Թերթք 3բ—130բ. Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ Հայոց ազգիս.** Նախ եւ առաջին, որք եւ Ամիրըլմումնիք անուանեցան, զի զբաան ամ կալեալ զիշխանութիւնն, Մահմետ մեռանի...) (մինչեւ եղեւ թողութիւն գիտից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: (Վերջ)

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

**Թ. 130բ. (գրչի)** «Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունոյ, որ եւ ցանկացող եղեալ սորին տէր Համազասպ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեանց, ի հալալ արդեանց եւ հրամանն ծրել փծուն գրչի Սարգ(ս)ի: Աղաչեմ յիշեցէք յողորմածն Աստուած, եւ նմա փառք յաւիտեանս, ամէն»:

**Թ. 217բ.** «Արդ աղաչեմ զամենեսեան, որք ընթեռնոյք, լսէք եւ կամ աւրինակէք զմեծավաստակ ճգնաւորին Եւագրեայ զհոգիայշահ հրամանքս, յիշեցէք զարժանին բարի յիշատակաց եւ զբազմաց վկայեալն ի լաւն զտէր Համազասպ: Թէ յիշէք զփծուն գրիչ զՍարգիս, որ եմ սովեալ ի հոգեւոր կերակրաց, ողորմածն Աստուած ամենեցուն ողորմեսցի յաւրն կարեաց, զի նմա վաեէլ փառք եւ երկրպագութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

**Թ. 293բ—294ա. (նորոգող-կազմողի)** «Պատմութիւնս Ղեւոնդեայ եւ գիրքս Եւագրեա եւ վերջին Պատմութիւնս Վրացեաց յիշատակ է Յոհաննու Կարճաւանեցւոյ, որ փտեալ կայր, վերստին նորոգեցի եւ կազմել ետու սիրեցելոյն իմոյ Շմաւոն վարդապետի Լոռեցւոյ, ի թվիս ՌՃԺԳ (1664), ի փառս Քրիստոսի, որք վայելէք յիշեսջիք ի Քրիստոս»:

Թ. 310ա. (Հետագայի) «Ստացող գրոցս, որ կոչի Ղեւոնդ պատմագիր եւ Վրաց պատմագիր եւ սուրբ հօրն անապատաւորացն Եւագրի բանք եւ խրատք բազում, որ եւ Վարդան վարդապետս Բաղիշեցի ստացայ ի հալալ արդեանց իմոց եւ ետու յիշատակ ի դուռն սուրբ Էջմիածնի ի փրկութիւն հոգւոյ իմոյ, որք ընթեռնուք եւ օգտիք ի սուրբ գրոյս, յիշեցէք ի Քրիստոս զԲաղիշեցի Վարդան Վարդապետն եւ զծնողսն իւր, ամէն: Ի թվին ՌՃԼԹ (1690)»:

Վերևի հիշատակարաններեն թեև ձեռագրիս գրության ստույգ թվականը չգիտցվիր և սակայն բավարար չափով հայտնի կըլլա երբ նկատի առնենք տեր Համազասպ Մամիկոնյանի Հովհաննա վանուց վանահայրության շրջանը (1279—1311)[6]: Տեր Հա-

[6] Հմմտ. **Հ. Ն. Ակինեան,** Մատենագրական հետազոտութիւններ, Վիեննա, հատ. Գ, էջ 34:

մազասպի վանահայրության հիշատակը պահած են կարգ մը արձանագրություններ[7]: 1664-ին ձեռագիրս կստանա Հովհաննես Կարճավանեցի, նորոգել ու կազմել կուտա զայն իր աշակերտներեն Լոռեցի Շմավոն վարդապետին, և հետո ձեռագիրս կմնայ Ամրտոլու վանքի բանասեր Վարդան վրդ. Բաղիշեցվո մոտ 1670-ին որ և զայն ս. Էջմիածնի Մատենադարանին կնվիրե 1690-ին: Հայտնի է ուրեմն որ Սարգիս գրիչ օրինակած է զայն 1279—1311-ի շրջանին Հովհաննա վանքին համար, թե իսկ գրության վայրն անհայտ ըլլա: Ըստ Հ. Ն. Ակինյանի «մեզի հասած բոլոր օրինակները ծագած են Շմավոն Լոռեցվո նորոգած այս ձեռագրեն, ուրեմն 1664-են հետո»[8]:

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 4584**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1668 թ. Տիգրան--ակերտ--: **Գրիչ՝** Աբրահամ երեց: **Ստացող՝** Խջ Ավետիս, Ղարաղաշ Ամթեցի, Խջ Սահակ: **Թերթ՝** 389: Թուղթ: 28×20: Երկայուն: Նոտրգիր: **Տող՝** 55: **Մանրանկար՝** կկ, լզ: **Պահպանակ՝** մագաղաթ 2, ուղղագիծ երկաթագիր, Ավետարան: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: **Հիշատակարան՝** գրչի 11ա, 24ա, 35բ, 48ա, 73բ, 74ա, 129ա:

**Բովանդակություն**—Մովսէս Խորենացի, Ստ. Տարօնեցի, Ար. Լաստիվերտցի, Եւսեբիոսի Պատմթ. Եկեղեցական, Ագաթանգեղոս, Դաշանց Թուղթ, Մեսրոպ Վայոցձորեցւոյ Պատմթ. Մեծին Ներսէսի, Յովհան Մամիկոնեան Պատմթ. Տարօնոյ, Փաւստոս, Եղիշէ, Օրբելեան, Պատմթ. Հացունեաց, Սոկրատայ Պատմթ., Միխայելի Ասորւոյ ժամանակաց զրոյցք, Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի, Թովմայ Մեծոփեցի, Կիր. բանասիրի վարք Թովմ. Մեծոփեցւոյ: Սմբատայ Սպարապետի Պատմթ.: Ի ժամանակաց զրուցից Միխ. Ասորւոյ (հատուած): Ղեւոնդեայ Երիցու Պատմութիւն Հայոց:

**(Ղևոնդի մասն)** Թ. 375ա—386բ.— (Սկզբեն թերի է) ...առ գունդ, այլ ըմբշամարտ մարտին: Եւ յապաղէր խաքանն զիաւնամիսի պատերազմն... )( մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ, ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնեալ այժմ եւ միշտ, յաւիտեանս յաւիտենից, ամէն:

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

**Թ. 11ա (գրչի)** «Ով ընթերցող սուրբ հայրապետք եւ աստուածաբան վարդապետք, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող գրոյս զմահդասի խոճա Աւետիսն եւ զանարժան Աբրահամ գրիչս տէր ողորմեսայ:

**Թ. 24ա.** Որք հանդիպիք սմա յիշեսջիք յաղօթս ձեր զստացող գրոյս Յամթեցի մղտեսի Ղառաղաշն եւ զծնօղսն նորա եւ մեղսաթաւալ Աբրահամ գծողս եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն:

**Թ. 35բ.** ...Մանաւանդ զստացող գրոյս զմահդասի Աւետիսն եւ զծնօղսն իւր զԿրճպօն եւ զմայրն զմահդասի Մսրրն եւ զորդին զՊաղտասարն եւ դուստրն զՍառան եւ զհոգւոյ որդին զՍարուխանն եւ գծող գրոյս:

**Թ. 48ա.** Ով սրբասէր եւ բանաստեղծ փիլիսոփայք, յորժամ օգտիք բան ինչ գրոցս այս, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զստացող գրոյս զմահդասի Ղարաղաշն եւ գծող գրոյս զԱբրահամ երէցն եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն:

**Թ. 73բ.** Գրեցաւ ձեռամբ Աբրահամ անարժանի ի Տիգրան քաղաքի ի մատրանին սուրբ Սարգսի ՌՃԺԷ (1668) թվին, աղաչեմ յիշել զիս եւ զծնօղքն իմ զտէր Յովանէսն եւ զԹամամն, եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն:

**Թ. 74ա.** Ով դասք լուսերամից, յորժամ ընթեռնուք, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զմահդասի Ղարաղաշն եւ զծնօղսն իւր զԿճպօն, մայրն զմահդասի Թունիկն եւ զկողակիցն զմահդասի Մսրրն եւ զզդուստրն զՍառան եւ զորդեակն իւր զՊաղտասարն, որ առ Աստուած փոխեցաւ եւ զհոգւոց որդին զՍարուխանն եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ, ամէն:

**Թ. 129ա.** Զստացող տառիս զՍահակն եւ զհայրն իւր զԹորոսն եւ զմայրն իւր զմահդասի Թանան եւ զկողակիցն իւր զՄաղթումն եւ զհոգւոց որդին իւր զԳրիգոր սարկաւագն, եւ զԱբրահամ գծողս յիշել ի Քրիստոս եւ դուք յիշեալ լիջիք, ամէն»:

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 3070**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1669—1674 թթ.: Վան: **Գրիչ՝** Դավիթ ննջեցուկ, Գրիգոր երեց, Վարդան Բաղիշե-

---

[7] Հմմտ. Հ. Յ. Տաշեան, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 188—189: Նաեւ M. Brosset, Rapports sur un voyage archeologique dans la Georgie et dans l'Armenie, III, St. Petersbourg, 1849.

[8] Ակինեան Հ. Ն., Մատենագրական հետազօտութիւններ, Գ, էջ 342:

ցի: **Ստացող՝** Վարդան Բաղիշեցի: **Թերթ՝** 438: Թուղթ 20,1×15,5: Միապլուն, երկայուն, եռապլուն: Նոտրգիր, բոլորգիր: **Տող՝** 19—20: **Մանրանկար՝** Գր. Լուսավորիչ և Զեռոբ Գլակ 1, կխ, լգ: **Պահպանակ՝** մագաղաթ 2, բոլորագիծ երկաթագիր, Ալֆետարան: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: **Հիշատակարան՝** գրչի 48ա, 158բ, 391բ, հետագայի 396բ (1721 թ):

**Բովանդակություն.**—Յովհան Մամիկոնեան Պատմթ. Տարօնոյ: Վասն Ս. իղոյն: Ստ. Ասողկան Պատմթ. Ժամանակաց: Արիստ. Լաստիվերցւոյ վասն անցից անցելոց: Ղեւոնդայ երիցու Պատմթ. Հայոց: Պատմութ. Վրաց: Ստեփանոսի Որդւոյ Յուսկան խրատ հաւատացելոց: Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն: Մկր. Մեծոփեցւոյ Վարք Մխ. Սասնեցւոյ: Յաղագս Ադամայ եւ Եւայի: Ստ. Օրբելեան Վասն Մեծի նախարարութեանն Օրբելեանց: Սահակայ Արծրունւոյ Թուղթ առ Մովսէս: Վարդանայ Աշխարհացոյց: Գիր օձաճարի: Առաքելի Տաղ: Աշխարհացոյց լատինացւոց (թրգմ. Յովհ. Անկիւրացի):

**(Ղևոնդի մասն) Թ.** 239բ—405բ. Պատմաբանութիւն Ղեւոնդեա մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել թէ Հայոց ազգիս.—Նախ եւ առաջին, որք եւ Ամիրըլմումնիք անուանեցան, զի զքսան ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետ մեռանի...) ( մինչեւ եղեն թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: (Ծնթ. Կհաջորդե Սարգիս գրիչի հիշատակարանը: Տես ձեռագիր թիվ 1902, թերթ 130բ):

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

**Թ. 48ա (գրչի).** «Գրեցաւ սակաւ պատմութիւնս Զենոբայ պատմագրի, ի վայելումն սրբազան բաբունոյն Վարդան վարդապետին Բաղիշեցոյն եւ յիշատակ հոգւոց իւրոյ եւ ծնողաց, ձեռամբ անարժան Դաւիթ ճրնոնկի: Թվ. ՌՃԺԸ (1669):

**Թ. 158բ—159ա.** Աղաչեմ մի անփոյթ առներ եւ տէր հատուցէ քեզ զվարձս քո. ընդ նմին եւ ես յետինս յամենեսեան եւ քան զբնաւս յանցաւորս եւ անթիւ մեղօք ծանրաբեռնեալ եւ արժանիս մահուց եւ ոչ մի կենաց խաւարամածս ոգւով Գրիգոր (ջնջված և գրված է Յոհան) գրչիս, որ չեմ յիշելոյ, աղաչեմ յիշել յաղօթս առաջի Քրիստոսի զիս եւ զծնողսն իմ, որպեսզի աղօթիւք ձեր գտցուք ողորմութիւն ի Քրիստոսէ, եւ տէր տացէ զտրիտուրն ձեզ բազումս, ամէն:

**Թ. 365բ.** Գրեցաւ սակաւ բանքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի, ՌՃԻԳ (1674) թվին, ձեռամբ անարժան Գրիգոր երիցու: Աղաչեմ յիշել զիս միով տէր ողորմայիւ, եւ Աստուած ողորմի ասել ինձ մեղաւորիս:

**Թ. 391բ.** Յիշեալ զմեղուցեալ եւ բազմագրեւ ոգիս Վարդանայ վարդապետի Բաղիշեցոյ յոյժ ողորմելոյ եւ թափառելոյ, որ սակաւ աշխատեցայ ի գրել սորա հանդերձ սրբագրութեամբ կիտիւ եւ տնատութեամբ, զի հեշտացի եւ քաղցրացի ընթերցողացդ, բայց ես ի նեղութենէ իմմէ կոուի եւ ժողով գրեցի, դու թէ կամիս ընդարձակեա, ով գաղափարող:

**ՋԵՌԱԳԻՐ թիվ 1889**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1675 թ. Նոր Ջուղա: **Գրիչ՝** Մարկոս, Հայրապետ: **Թերթ՝** 380: Թուղթ: 24,3×18,5: Երկայուն: Բոլորգիր, նոտրգիր: **Տող՝** 30: **Մանրանկար՝** լգ: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: Ատտառ դրոշմազարդ կտավ: **Հիշատակարան՝** գրչի 114բ, 266բ:

**Բովանդակություն.**—Եղիշէի Պատմութիւն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Ի պատմութենէն Թովմ. Արծրունոյ: Ղեւոնդայ Երիցու Պատմութիւն Հայոց: Բարսղի Մաշկեւորցւոյ Մեկնութիւն Մարկոսի: Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց: Դաշանց Թուղթ:

**(Ղևոնդի մասն) Թ.** 69ա—114բ. Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց եւս առաւել, թէ Հայոց ազգիս... որք եւ Ամիրըլմումնիք անուանեցան, զի զքսան ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետ մեռանի...) ( մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: Կատարեցան վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանս Թորգոմայ, ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունոյ ի փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

**Թ. 114բ (գրչի)** «Գրեցաւ ձեռամբ ամենաւվրէպ եւ բէյնուայ Մարկոսի բանի ապաստաւորի ի ՌՃԻԴ (1675) թուոջ:

**Թ. 266բ.** Գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ գիրս ի Շաւշ քաղաքն, որ կոչի Իսպահան, ի գեղն Ջուղայ, ի դրունս սուրբ Ստեփանոսին, ի հայրապետութիւն տէր Խաչատուր արի եւ քաջ վարդապետին, եւ սուտանուն հայրապետ գրիչս յիշեա, որ զանունս միայն ունիմ եւ գործս ոչ»:

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 5501**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1683, 1684 թթ. Բաղեշ: **Գրիչ՝** Գրիգոր քհն. (Ա), Միքայել երեց (Բ): **Ստացող՝** Վարդան Բաղիշեցի: Գրիգոր վրդ.: **Թերթ՝** 391: Թուղթ: 20,2×14: Երկսյուն: Բոլորգիր: **Տող՝** 27: **Կազմ՝** կաշեպատ տախտակ: **Հիշատակարան՝** գրչի 243բ (1683 թ), 323ա, 389բ (1684 թ), հետագայի 390 (ԺԸ դ):

**Բովանդակություն.** Ստեփաննոս Օրբելեանի Պատմթ. տանն Սիսական: Սիւնեաց ժբ գաւառաց հարկն: Ղեւոնդայ Երիցու Պատմութիւն Հայոց: Պատմութիւն Վրաց:

**(Ղևոնդի մասն).** Թ. 247ա—323ա. Ղեւոնդայ Երիցու Պատմաբանութիւն Հայոց (խիստ պակասաւոր) ...որ ընդ իւրով իշխանութեամբ, զի ուր եւ իցեն առ նա հասցեն եւ վաղվաղակի հասեալք...)( մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանն Թորգոմայ ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունոյ, որ եւ ցանկացող եղեալ սորին տէր Համազասպ ի պատուաւոր յազգէն Մամիկոնեաց:

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

**Թ. 243բ (գրչի)** Փառք եռակի... Արդ գրեցաւ գիրքս այս մատեանք, որ է Կոնդակ Տաթեւոյ ձեռամբ տէր Գրիգոր անարժանիս, ի խնդրոյ վեհի եւ երանեալ տեառն Վարդանայ վարդապետի Բաղիշեցւոյ. յիշատակ բարի ինքեան եւ ծնողաց իւրոց հօրն Եղիայն եւ մօրն Ղարիպին, ի թվականութեան Հայկազեան ուեռի ՌՃԼԲ (1683) ամին ի քաղաքս Բաղեշ, ընդ հովանեաւ սրբոյն Յովանու Մկրտչի եւ ի հայրապետութեան տեառն Եղիազարու կաթողիկոսի, ի վայելումն անձին իւրոյ եւ յուրախութիւն մանկանց Սիոնի: Արդ, որք հանդիպիք այսմ գրոցս, յիշեցէք ի Քրիստոս զքաջ ռաբունապետն Վարդան, եւ Աստուած ողորմի ասացէք իւրն եւ ծնողաց իւրոց, զի կրկին Լուսաւորիչ գտաւ Հայոց, զի բազում եկեղեցիս շինեաց ի հիմանէ եւ բազում մոլորեալ մարդիկ դարձոյց ի մեղաց յաստուածգիտութիւն յորդաբուխ քարոզութեամբն իւրով: Եւ բազում գիրս ետ գրել եւ զայլ հինս նորոգել զամենայն տեղեաց, եւս առաւել զԱմիրդոլու վանքս ի հիմանէ շինեաց, տներով եւ հնցներով եւ արդիւնացոյց բազում գրեանս ի սմա եւ միաբանս բազումս առաւել, քան զՏաթեւուն, որ է յոյժ պայծառ սաղմոսերգութեամբ եւ պատարագօք, զոր տէր Աստուած հաստատուն պահեսցէ, եւ յայսմ ամի ձեռնարկեալ է ի գործս շինել անդս մեծամեծս վանիցն, որ Ոխուիք ասի, զի է յոյժ անհարթ եւ անհեթեթ վիմօք լցեալ, եւ ետ վարդապետին քարակոփացն զվէմսն հատանել եւ զտեղիքն գերմակ մոխրով լնուլ եւ որմով շուրջանակի պարըսպեալ ամրացոյց զգերեզմաններն եւ զագարակն: Որոյ տէր Աստուած հովանի եւ պարիսպ լիցի նմա եւ պահեսցէ յամենայն արկածից չարեաց, եւ յետ աստեացս ելանելոյ ընդ երկոտասան սուրբ վարդապետացն եւ դասասաց է, լսել տացէ զերանելեաւն բարբառն, թէ եկ ծառայ բարի եւ հաւատարիմ, մուտ յուրախութիւն տեառն քո. Եւ Աստուած ձեզ յիշողացդ եւ յիշեցելոյն եւ մեզ ողորմեսցի յիւր միւսանգամ գալստեանն, ամէն:

**Թ. 323ա.** Վարդան ռաբունապետն ի հալալ արդեանցն ետ հրաման ծրել փծուն գրչի Միքայելի մեղաւոր երիցու: Աղաչեմ յիշեցէք յողորմածն Աստուած եւ նմա փառք յաւիտեանս, ամէն:

**Թ. 389բ.** Ըստերիւրեալ նորոգեցաւ պատմաբանութիւնս Հայկական ճետի եւ տոհմի մակամտած եւ ճշգրտագիտ երիւրմամբ լեզուակերտեալ Ղեւոնդեա երիցու գեղեցկախոս վիպասանի, նաեւ Եւագրեա սրբոյ նրբաբանի, ընդ սոսին եւ Ջեւանշիրի վրացեաց հնաճառ պատմագրողի ի Միքաէլ երիցէ, ի յաւուրս ժամանակաց բազմազաւր եւ անպարտելի երկուց մահմետադաւան թագաւորաց Ահմատայ Եսմայելականի; որ ի Կոստանդուպոլիս եւ Շահսէֆու, որ ի յարեւելս կոյս ի Շօշ, որ եւ յԱսպահան ճանաչիւր, որք եւ բազմախոր խաղաղութիւն նալեալ ընդ միմեանս, անշաշտ, դաշամբ իբրեւ զամս Խ եւ Դ (44), զոր եւ ի յաւուրս իշխանութեան Էջմիածնի հայրապետիս Եղիազարու, գրեցաւ այս գիրքս պատմութեանց յիշատակ հոգէլի եւ բանիբուն ռաբունապետ Վարդանի եւ Գրիգոր վարդապետի, Աստուած զիւրեանքն անսասան պահէ յայսմ աշխարհիս եւ հետ աստեաց յելանելոյ ընդ երկոտասան վարդապետսն դասակից եւ պսակակից առնէ, ամէն: Զոր եւ աղաչեմ, առ ի յաւգտակարդ, որ ի սմա, յիշեալ զնուաստ Միքայէլ երէցս հանդերձ ծնողիւք իմովք առ ի Քրիստոս եւ Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ գալըստեանն, ամէն: Թուին ՌՃԼԳ (1684):

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 5583**

**ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ**

ԺԸ դար: **Թերթ՝** 195: Թուղթ: 19,5×14: Միասյուն: Նոտրգիր: **Տող՝** 26: **Մանրանկար՝** կխ, լգ: **Կազմ՝** կաշեպատ տախտակ

դրոշմազարդ: Աստառ կապույտ մետաքսյա:

**Թ. 5ա-94բ.** Պատմաբանութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի եւ զկնի նորին, թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց, եւս առաւել, թէ Հայոց ազգիս.— Նախ եւ առաջին որք ե(ւ) Ամիրըլմումնիք անուանեցան, զի զքսան ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետ մեռանի...) (մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած: Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանն Թորգոմայ ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ:

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 3741**

**ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ**

1856 թ.: Մոսկվա: **Գրիչ՝** Ոսկան Հովհաննիսյանց Երեւանցի: **Թերթ՝** 60: Թուղթ: 36×20,5: Շղագիր: **Տող՝** 31—33: **Կազմ՝** ստվարաթուղթ: **Հիշատակարան՝** գրչի 1ա:

**Թ. 1ա—50բ. Ղեւոնդ պատմագիր.**—(«ի սկզբանէ պակասին երկոտասան գլուխք. մեք այսպէս գտաք» գրիչ): ...առ գունդ այլ ըմբշամարտ մարտիս...)( մինչեւ եղեւ թողութիւն գիւղից եւ ծառայից եւ պարտուց եւ ապա կատարած:

Կատարեցաւ վարդապետութիւն Ղեւոնդի վասն ժամանակագրաց տանն Թորգոմայ ի հրամանէ տեառն Շապհոյ Բագրատունւոյ. փառս եւ ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն, որ է օրհնեալ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

**ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ**

Թ. 1ա (գրչի Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանցի: «Յ» Յուլիսի, 1856 ամի: Ի Մոսկուա:

Վերոհիշյալ յոթ ձեռագիրներեն բացի կան նաև երկու այլ ձեռագրեր, ինչպես վերև մատնանշեցինք, Frederic Macler-ի Ձեռագրաց ցուցակին մեջ, և որոնք ի պահ կմնան Փարիզի Ազգային Մատենադարանին մեջ[9]: Այդ ձեռագրերն են.

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 209**

**ԺՈՂՈՎԱԾՈՒ**

1855 թ.: Էջմիածին: **Գրիչ՝** Կ. Վ. Շահնազարյան: **Ստացող՝** Ազգային Մատենադարան Փարիզի: **Թերթ՝** 67: Թուղթ: 26,5×21,5: Երկսյուն: Նոտրգիր:

Բովանդակություն—**Ղեւոնդ Երիցու Պատմութիւն Հայոց** (Ը դար). **Ջիվանքերի Պատմութիւն Վրաց** (Թ դար):

(Ղևոնդի մասն) Թ. 1ա—39բ: Histoire des conquetes des Arabes en Armenie et dans les provinces de l'Empire grec, par le pretre Lewond (VIII^e s.).

**ՁԵՌԱԳԻՐ թիվ 208**

**ՂԵՒՈՆԴ ԵՐԻՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՅՈՑ**

1851—1852: **Գրիչ՝** Ed. Dulaurier: **Թերթ՝** 143: Թուղթ: 22,5×17,5: Երկսյուն: Նոտրգիր:

Բովանդակություն—Histoire de Mahomet et des Khalifes, ses successeurs, ainsi que de leurs conquetes dans les divers pays et principalement en Armenie jusque vers la fin du VIII^e siecle de l'ere chretienne, par le pretre Lewond.

Այս երկու ձեռագրերն, ինչպես Brosset-ի հիշատակարանն ստուգապես կնշե[10], օրինակված են Թիֆլիսի Կարապետ արք. Բագրատունվո պատկանյալ օրինակեն, այսինքն նույն ինքն ԺԷ դարուն Վանի մեջ գրված գրչագրեն (թիվ 3070): Brosset կշեշտե թե՛ ձեռագրին նախկին պատկանելությունն և թե՛ ձեռագրին ԺԷ դարուն գրված ըլլալն:

Վենետիկի Մխիթարյաններուն մոտ կան Ղևոնդի պատմագրության չորս այլ ձեռագրեր որոնք սակայն «անգոհացուցիչ բաներ են և շատ ուշ դարերու» ինչպես կհաստատեր հանգ. Հ. Մեսրոպ վրդ. Ճանաշյան իր հոկտ. 27, 1973 թ. նամակով: Սա է ցանկը Վենետիկի ձեռագրաց.—

1) Թիվ 2390, անթվական, հավանաբար 1700-ի մեջ գրված: Գրիչն է Տիրացու Մելքիսեդեկ: Հիշատակարան չունի: Նոտրգիր հատված մը է միայն և ոչ ամբողջական:

2) Թիվ 43: Պակասավոր օրինակ մը: Հիշատակարան չունի: ԺԸ դարու օրինակություն մը:

3) Թիվ 300: Օրինակություն պակասավոր:

4) Թիվ 2593: Գաղափարյալ 1836 թվին: Ո՞ր ձեռագրեն հայտնի չէ:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.**—

Մեր ուսումնասիրություններեն կարող ենք եզրակացնել որ Ղևոնդի պատմագրության բնագրի քննության համար կարևորագույն ձեռագրերն են նախնագույնն (ԺԳ դար) և ընտրելագույնը (ԺԷ դար): Առաջինը (թիվ 1902) վերջին անգամ կազմված

[9] Macler, նշ. աշխ., էջ 115—116:

[10] Անդ, էջ 115:

և նորոգված էր Ծմավոն Լոռեցիի ձեռամբ 1664 թվին: Ինչպես վերև ըսինք ըստ Հ. Ն. Ակինյանի «մեզի հասած բոլոր օրինակները ծագած են Ծմավոն Լոռեցվո նորոգած այս ձեռագրեն, ուրեմն 1664-են հետո»: Իրոք, վերոգրյալ բոլոր ձեռագրերն կկրեն 1664-ին հաջորդող թվականներ: Երկրորդ ձեռագիրը (թիվ 3070) ուղղակի կապ ունի Վարդան Բաղիշեցվո հետ, անոր գրիչներեն մին ըլլալով, ինչպես նաև ձեռագրին միակ ստացողը 1669 թվին: Այս ձեռագիրը, ինչպես վերև հաստատեցինք, կպատկաներ Թիֆլիսի Կարապետ արք. Բագրատունիի և ծառայած էր որպես բնագիր Կ. Վ. Շահնազարյանի 1857-ի հրատարակության, քանի որ վերջինս արտագրած էր իր օրինակը նույն այդ ձեռագրեն: Շատ հավանական է Վարդան վրդ. Բաղիշեցվո հմայքին ու անունին հետ առնչել արտագրումը ԺԷ դարու (թիվ 3070) ձեռագրին որ կատարված պետք է ըլլա Ծմավոն Լոռեցվո նորոգած ԺԳ դարու (այժմ թիվ 1902) ձեռագրեն, քանի որ վերջինս տակավին կմնար Ամրտոլու վանքին մեջ և Վարդան Բաղիշեցվո հսկողությանը ներքև: Վարդան զայն ս. Էջմիածնի նվիրեց միայն 1690 թվին (ՌՃԼԹ): Տես վերև, հիշատակարան ձեռագրի թիվ 1902: Նաև, երկու ձեռագրաց հանգունությունն հայտնի կդառնա Սարգիս գրիչի հիշատակարաններեն որ կրկնված է ԺԷ դարու ձեռագրին մեջ, հիշատակարաններեն առաջ, ճիշդ այնպես ինչպես կերևի ԺԳ դարու ձեռագրի վերջավորության:

Մնացյալ չորս ձեռագիրներեն երկուքը թերի օրինակներ են, մին Բաղեշի մեջ օրինակված 1683—84 թվականներուն (թիվ 5501), ապահովաբար վերևի երկու ընտիր օրինակներեն միույն վրայեն, և մյուսը Մոսկվայի մեջ գրված 1856 թվին (թիվ 3741), շատ հավանաբար սկիզբի երկոտասան գլուխներով թերի գրչագրի մը վրայեն, (ըստ երևույթին 1668 թվին ի Տիգրանակերտ գրված և այժմ թիվ 4584 օրինակի հետևողությամբ), քանի որ երկոքին նույն թերությունն ունին:

Կմնան երկու գրչագիրք. Նոր Ջուղայի 1675 թվին գրվածն (թիվ 1889) և ԺԸ դարու գրվածն (թիվ 3583), երկուքն ալ լման բնագրերով: Վերջնույս տեղն անհայտ է և հիշատակարան չունի: Մեր կարծիքն այն է որ այս երկու ձեռագրերն ևս ծագած են հնագույն ԺԳ դարու ձեռագրեն և հետևաբար որոշ առավելություն մը չեն ցուցներ անոր վրա: Այսուհանդերձ, Ղևոնդի պատմագրության գիտական հրատարակությունն կարելի է լիակատար և քննական նկատել բաղդատելե ետք այս երկու ձեռագրերն ևս:

Երուսաղեմի ս. Հակոբյանց վանուց ձեռագրատան մեջ ցարդ կարելի չէ եղած գտնել Ղևոնդի բնագրեն օրինակ մը, ինչպես կհաստատեն Նորայր արք. Պողարյանն ու Michael Stone, համաձայն վերջնույս գրած նոյեմ. 12 1973 թ. նամակին: Նույնն կարելի է ըսել Վիեննայի Մխիթարյանց ձեռագրատան համար, հիմնվելով Հ. Հ. Տաշյանի 1895-ին հրատարակյալ **Ցուցակ հայերէն ձեռագրաց**-ին վրա:

ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ֆիլատելֆիա
Հունիս, 1975





ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՂՈՒՄՅԱՆ

# ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Պատմական Արագածոտն գավառի հինավուրց գյուղերից մեկը՝ Մուղնին, այժմ Աշտարակ քաղաքի հյուսիսային թաղամասն է:

Վաղնջական ժամանակներից այստեղ եղել է մատուռ չար ուժերին հաղթող, արդարության սատարիչ, «բիբլիական հերոսներին» հիշեցնող ազատաբեր ռազմիկ[1], սրբացված ասպետ Գևորգ զորավարի մասունքների վրա:

Հին, խարխուլ, արտաքին ու ներքին փայլից զուրկ փոքր մատուռը ԺԷ դարի կեսերին քանդում է Մարտիրոս Մուղնեցին, կառուցում շրջապարիսպ, բնակելի տներ, խուցեր «և եկեղեցի վայելուչ ի մէջ պարրսպին ի վերայ չորից սեանց»[2]: Նույն միտքը երկրորդելով Զաքարիա պատմագիրը նորակառույց շինությունը համարում է «կոպիտ քարի հոյակապ եկեղեցի»[3]: Սակայն Մարտիրոսաշեն եկեղեցին երկար կյանք չունեցավ: Այս մասին տեղեկացնում է Դավրիժեցուց ավելի ուշ, 1687 թ., իր պատմությունը շարահարած Զաքարիան, իսկ վանքի որմերին վիմագրված ընդարձակ հիշատակությունները համակողմանիորեն լրացնում են նրա կառուցման մանրամասները:

Մարտիրոս եպիսկոպոսը մահանում և թաղվում է իր ձեռակերտ եկեղեցու մոտ՝ իրեն հաջորդ թողնելով եղբոր՝ Հակոբի որդի Հովհաննես վարդապետին: Վերջինս, թերևս նկատի ունենալով, որ երկնասույզ Արագածի փեշերին ազդասյունների նման հողին կառանված, սուսակի նման շողշողացող Կարմրավորի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Ամբերդի, Տեղերի և շրջակա այլ քերթությունների օղաշղթայում խեղճ ու անարտահայտիչ է իր հաստատությունը, անվայել իր իսկ անվանը՝ հերոսության անմնացորդ մարմնացում Գևորգ զորավարին, քանդում է իր հորեղբոր կառուցած կոպտաքարե եկեղեցին «և շինեաց կոփածու քարամբք եկեղեցի զարմանալի, և յարևմտեան դրանն զանգակատուն»[4]:

Սրանով ավարտվում է ժամանակակիցների հաղորդումները Մուղնու ս. Գևորգ եկեղեցու կառուցման մասին, բայց, բարեբախտաբար, տաճարի որմերի, դռների արձանագրությունները հավաստի կերպով լրացնում-ամբողջացնում են նրա կառուցման, վերանորոգման հանգամանքները: Եկեղեցու արևմտյան ճակատին, մուտքից ձախ, սյունասրահի որմնամույթերը միմյանց կապող կամարի տակ փորագրված ընդարձակ տարեգրության հավաստմամբ, Հովհաննես վարդապետը, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի թույլտվությամբ ու օժանդակությամբ, Պարսից փոքր Շահ Աբասի թագավորության և Աբաս դուլի խանի բրդ-

[1] **Սիրարփի Տեր-Ներսեսյան,** Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 86, 89:

[2] «Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 350:

[3] «Զաքարեայ սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, հ. III, էջ 41:

[4] Նույն տեղում:

նակալության (այս դեպքում՝ իշխանության) ժամանակ, 1664 թ., «քակեալ ի հիմանց սուրբ Գէորգայ եկեղեցիս» և «հրաշակերտ յօրինուածօք, ներքուստ ու արտաքուստ կոփածու քարօք» շինում է ներկա եկեղեցին ու այնուասրահը՝ իր և տեղի ժողովրդի նյութական միջոցներով: Եկեղեցու կառուցումը հիմնականում ավարտվում է 1669 թ., Շահ Սուլեյմանի թագավորության և Սեֆի դուլի խանի տիրապետության ժամանակ: Նույն տարում էլ մահանում է Հովհաննես Վարդապետը, իսկ տաճարի ներսի «դօշամեն»՝ սալահատակը ու ծածկի սալարկումն իրականացնում է նրա հաջորդ և եղբոր՝ Կարապետի որդի Դավիթ վարդապետը, և նրա կառուցումը, ամենայն հավանականությամբ, ամբողջովին ավարտվում է 1670 թ.:

Եկեղեցու կառուցման մեկենասներից է նաև Դավիթ վարդապետի եղբայր պարոն Վարդանը: Նա է տվել եկեղեցու հարավարևելյան այան և մեկ կամարի «խարճը»՝ ծախսը՝ ի հիշատակ իր ծնողների՝ Կարապետի և Թուրվանդի, եղբայրների՝ Զաքարիայի և Մարգարեի, նրանց կանանց, զավակների և տոհմակիցների: Նույն կամարի վրա էլ 1670 թ. փորագրվել է համապատասխան արձանագրություն:

Իր դարի համար նշանավոր ու ծավալուն այս ձեռնարկմանը զորավիգ են եղել նաև Ագուլիսի ժողովուրդն ու իրենց հովվապետ Պետրոս վարդապետը: Նրանց խնայողություններով, ի հիշատակ Գողթան գավառի արքեպիսկոպոս, նույն Պետրոսի հորեղբայր Խաչատուրի, կառուցվել է եկեղեցու արևմտյան շքամուտքը՝ երկնքատակ կամարներով հանդերձ՝ համաձայն նույն մուտքի ճակատակալի արձանագրության:

Այնուհետև մեկուկես դար տաճարը գոյատևում է անխաթար: 1830 և 1839 թթ. վանքի առաջնորդ, գիտնական Ստեփանոս Թելավեցի արքեպիսկոպոսը նորոգում է ծածկերը և կայծակնահար կաթողիկեն[5]: 1866 թ. աշտարակեցի Սիմեոն Սաժումյանը, Ներսես 5-րդ կաթողիկոսի հրամանով, կարգվում է ս. Գևորգ եկեղեցու տեսուչ, իսկ 1868 թ. Գևորգ Դ-ի հրամանով՝ հոգաբարձու: Եվ քանի որ Մուղնին Էջմիածնի թեմական գյուղերից էր[6], ուստի կաթողիկոսության միջոցներով 1868 թ. Սիմեոնը վերանորոգում է եկեղեցու տանիքները[7]:

Մուղնու վանքում հնուց ի վեր եղել է դպրոց և գրչատուն: Այստեղ 1023 թ. Սիմեոն գրիչը շարագրել է մի «Ճառընտիր»[8], իսկ 1491 թ. Մկրտիչ երեցը, Սիրադեղ աղայի պատվերով՝ «Ճաշոց»[9]:

Մուղնու վանքի առաջնորդ Աբել Մխիթարյան եպիսկոպոսը 1870 թ. տեղում վերաբացել է Արարատյան աշխարհի սակավաթիվ դպրոց-վարժարաններից մեկը[10], որտեղ ուսանում-կրթվում են հայ մանուկները:

Մուղնու ս. Գևորգ եկեղեցին կառուցել է քարահատ, ճարտար ուստա, մեյմար-պետ սնվանյալ Սահակ Հիզանցին: Մինչ այս, 1654—1658 թթ., վասպուրականցի Սահակը, իր քրոջ տղա, ուստա Մովսեսի և ոսկերիչ Զաքարեի հետ, կառուցել էր Էջ-

Նկ. 1. Տաճարի տեսքը հարավ-արևմուտքից

միածնի Մայր տաճարի գլխավոր զանգակատունը: Եվ ահա ճանաչման արժանացած ճարտարապետը 1664 թ. ստանձնում է

---

[5] «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի՝ Շահ-Խաթունեանց Շահրիարցւոյ, միաբանի սրբոյ Էջմիածնի», հ. 2-րդ, Էջմիածին, 1842, էջ 94:

[6] Նույն տեղում, էջ 89:

[7] Եկեղեցու ծածկերը և նախագավիթ-սրահը անձնապես վերանորոգել է երևանցի, հանգուցյալ վարպետ Մովսես Գյովշենյանը 1970 թ., իսկ նրա հարակից կառույցների, պարիսպների նորոգումը և բարեկարգումն իրականացվել է ՀՍՍՀ Պետշինի Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության Երևանի հիմնադրման (Էրեբունի) թանգարանի միջոցներով, 1973 թ.:

[8] **Գարեգին Ա. Կաթողիկոս,** Ցիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 213:

[9] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 167:

[10] **Հ. Ղ. Ալիշան,** Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 184:

Մուղնու եկեղեցու կառուցումը, սակայն, ձեռնարկումը թերավարտ, 1667 թ. գարնանը մահանում է: Սահակի դին ամփոփված է գյուղի հյուսիսային եզրի գերեզմանոցում[11]:

Եկեղեցու կառուցումը շարունակում-ավարտում է Սահակի փեսան և աշակերտը, շնորհալի ուստա Մուրադը:

Սահակ ճարտարապետն իր ձեռակերտի ծավալա-տարածական հորինվածքի և արտաքին հարդարանքի մեջ օգտագործել է միջնադարյան հայկական ճարտարապետության լավագույն նվաճումներն ու դարավոր ավանդույթները, և այն որոշակի ազդեցություն է թողել հետագա շրջանի եկեղեցական ճարտարապետության վրա:



Նկ. 2. Գմբեթակիր կամարները

Մուղնու եկեղեցին Զ—Է դարերին բնորոշ գմբեթավոր սրահ է: Գմբեթը, որը տեղադրված է կենտրոնից համամասնաբար արևմուտք, բարձրանում է չորս սյուները միմյանց կապող կամարների և նրանց միջև գոյացող առագաստների վրա: Թմբուկը կլոր է, սև ու կարմիր տուֆաքարե հաջորդական շարքերով: Եկեղեցին լավ է լուսավորվում Արուճի տաճարի, Աղթամարի ս. Խաչ վանքի օրինակով թմբուկի վրա բացված ութ խոշոր լուսամուտներով:

Թմբուկի վրա, աշխարհագրական կողմերի համեմատ հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք խիստ շեղված, ավետարանիչների խորհրդանիշ բարձրաքանդակներն են: Նման հնարամիտ տեղադրմամբ դրանք օրվա ընթացքում ամբողջովին լուսավորվում են: Ի տարբերություն այլուր գոյություն ունեցող համանման քանդակների, այստեղ գրված են նաև ավետարանիչների անունները: Ի դեպ, բարձրության հետևանքով այդ քանդակները գետնի վրայից հազիվ են նշմարվում: Թմբուկի նկատելիորեն բութ վեղարը հովհարաձև է՝ Անիի, Մարմաշենի, Ամբերդի, Տաթևի, Գլաձորի կառույցների օրինակով: Ավագ խորանին կից ունի թաղակապ կրկնահարկ փոքր ավանդատներ, որոնցից հյուսիսայինում ամփոփվել են ս. Գևորգի նշխարք-մասունքները, իսկ հարավակողմում պահպանվել են պատարագամատույց սպասքներն ու անոթները: Խորանների 2-րդ հարկի թաքստոցները հնարավոր է մագլցել-բարձրանալ գլխավոր աբսիդայի աջ ու ձախ կողմի փոքր նիշաներով: Այդ նիշաներից վեր են ձգվում կլոր խոռոչներ՝ 6—8 մ բարձրությամբ, պատերի մեջ տեղադրված աստիճաններով, որոնց օգնությամբ կարելի է հասնել մոայլ, խավար ու պաղ թաղակապ խորան-թաքստոցներ: Այդ հուսալի պատսպարաններն ունեցել են քարե միակտոր, շարժական դռներ, որոնք նիշաների համար ծառայել են որպես առաստաղ և թաքցրել գաղտնի մուտքերը: Արևմտյան հատվածում, թաղակիր կամարների տակ, խորաններ չկան (ինչպես Էջմիածնի Մայր տաճարում, ս. Գայանե եկեղեցում, Պտղնիում, Արուճում, Թալինում և այլուր), և եկեղեցու ներսի ուղղանկյուն տարածությունը մասնատվում է չորս հզոր մույթերով: Շքամուտքը բացվում է սրահ-նախագավթի մեջ, մի այլ մուտք էլ՝ հարավային ճակատից: Մուտքերն ունեն փայտակերտ դռներ՝ պատրաստված 1838 և 1839 թթ. կնյազենց Գևորգի տոհմի հիշատակին: Ձախ խորանի դռան կաղնի փայտը ներծծված է ձեթով և փայլփլում է լավագույն կահույքի նման:



Նկ. 3. Հատված սրահ-նախագավթից

Մուղնու տաճարի նախագավիթ-սրահն իր մտահղացմամբ նոր տարր է եկեղեցաշինության մեջ, որն այնուհետև լայն տա-

[11] Այս մասին ավելի մանրամասն տես մեր «Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը» հոդվածը, «Էջմիածին», 1976, № Ե, էջ 30—32;

ռածում ստացավ[12]: Նրա եռաբաժին թաղը նստում է արևմտյան չորս սյուների և տաճարի պատին հենած որմնամույթերից ձրգվող կամարների վրա: Կենտրոնական մասում, Հովհաննավանքի օրինակով բարձրանում է թերևս 12 առաքյալները խորհրդանշող 12 կլոր, միակտոր սյուների վրա հանգչող գանգակատունը: Եկեղեցին և սրահ-նախագավիթը[13] շարված են մեծաքանակ, հղկված սև տուֆով, իսկ ճակտոնները՝ շախմատաձև՝ կարմիր ու սև տուֆով: Գունային այս հիասքանչ երանգները գեղագիտական մեծ հաճույք են պատճառում, ջերմությամբ համակում դիտողին, և խամրում է զանգվածայնության ոգին[14]: Տաճարի հարդարման տարրերից են նաև մուտքերի, ճակտոնների լուսամուտների շրջաքանդակները, սյուների ու որմնամույթերի խոյակների ստալակտիտային քանդակները, հովհարաձև վեղարը, թմբուկի բարձրաքանդակները, բուսական և կրոնական մոտիվներով որմնանկարները, պատերին ագուցված խաչքարերը և որմերի վիմագրությունները:



Նկ. 4. Սեղանատան տեսքն արևելքից

Վանքից հյուսիս՝ պարսպին կցված են թաղակիր բնակելի սենյակներն ու երկբաժին սեղանատունը:

Մուղնու եկեղեցու որմերից և նրա մերձակայքից մենք հավաքել ենք 27 արձանագրություններ, որոնցից հինգը հրատարակված են եղել անցյալում: Ստորև ներկայացնում ենք բոլոր արձանագրությունները՝ որոշ շտկումներով վերահրատարակելով նաև հայտնիները: Առաջին անգամ հրատարակում ենք մի քանի մանր արձանագրություններ Քանաքեռից, Փարպիից, Ավանից, Էջմիածնից, Հացառատից, որոնք լրացնում են Մուղնիում հանդիպող քարգործ-վարպետների գործունեության անհայտ էջերը:



Նկ. 5. Կենտրոնում 986 թ. խաչքարը, աջ կողմում՝ Մելիքսեթի հորինած

Մուղնու նախնական կառույցների վերաբերյալ մեզ ոչ մի վիմագիր չի հասել: Տեղում գտնված հնագույն արձանագրությունը 990 տարի առաջ հորինված խաչքարի ստորին մասում է: Պարզ ու անպաճույճ այդ կոթողը, երկու այլ խաչքարերի հետ, վերջին վերանորոգման աշխատանքների ընթացքում կանգնեցվել է սեղանատան արևելյան պատի տակ, ընդհանուր պատվանդանի վրա: Ահա նրա վիմագիրը[15] (գծ. 1). ՆԼԵ (986) ԹՎ. ԵՍ՝ ՏԻՐԱՆ, ԾԱՌԱՅ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ՈՐ ԿԱՆԳ[Ն]ԷՅԻ ԶԽԱՉՍ/ Ի ՅԱԳՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՄՈՑ. ՈՐ ԵՐԿԻՐՊԱԳ[ԷՔ] /ԶՔ[ՐԻՍ-ՏՈ]Ս ՅԱՂՈ[ԹՍ ՅԻՇԵՑԷՔ]:

[12] Այն իր կոմպոզիցիայով չի կրկնում Սանահնի վանքի նախագավթին, և նրա տարրերի ակունքները պետք է որոնել հանրահայտ գավիթների ու զանգակատների մեջ:

[13] Եկեղեցու վիմագրերի մեջ այս սյունասրահը, անփոփոխ, կոչվում է գավիթ, Զաքարիա պատմիչի մոտ՝ զանգակատուն:

[14] Անվարան պետք է ասել, որ երկգույն տուֆով շարված հուշարձանն առանձնակի հմայք ու արտահայտչականություն է ստացել: Մեր ճարտարապետները նոր-նոր սկսել են օգտագործել հայկական գունավոր քարերը՝ իբրև կառույցների հարդարանքի, ճնավորման բնատուր ու մշտակյաց միջոց:

[15] Արձանագրությունն առաջինը հրատարակել է Ա. Ծահինյանը (Տե՛ս նրա «Հայկական խաչքարերի արվեստը», «Էջմիածին», 1960, № Զ, էջ 47): Նա առաջին տողի անձնանունը վերծանել է ՄԻՐԱՆ-ի, որը և մտել է հայագիտական մի եզակի ու բարձրարժեք աշխատության մեջ (Տե՛ս **Ս. Ավագյան**, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն,

Եկեղեցու ձախ խորանի արևելյան պատի մեջ, ներքուստ, ագուցված է մի խաչքար: Այլ նպատակով հորինված խաչքարի քիվը տաշվել է պատին հավասարեցնելու համար, սակայն բարեբախտաբար փրկվել է թիվը և վարպետի ստորագրությունը՝ փորագրված խաչաքանդակից վերև (գծ. 2). ԹՎ. ՌԽԷ (1598). ՀԷՐԱՅՊԵ[Տ] ԿԱԶՄՈՂ: Այս վարպետի ձեռակերտ խաչքարերից մյուսը ագուցված է աջ խորանի նույն մասում (գծ. 3). ԹՎ. ՌԽԸ (1599). ՀԷՐԱՅՊԵ[Տ] ԿԱԶՄՈՂ հիշատակությամբ: Նույն խորանի հյուսիսային նիշայի մեջ դրված խաչքարը ևս կարելի է վերագրել Հերայպետին, թեև նրա վրա վարպետի ստորագրություն չկա: Խաչքարի վերին կամարաղեղի վրա փորագրված է (գծ. 4). ԹՎ. ՌԽԷ (1598)[16]:

Մուղնու տաճարի հարավ-արևելյան հատվածի մաքրման-բարեկարգման ընթացքում հայտնաբերվել է ԺԶ դ. առավել հանրահայտ քարգործ վարպետներից մեկի՝ Մելիքսեթի հորինած խաչքարերից մեկը: Այն այժմ դրված է սեղանատան արևելյան պատի տակ, խորանախաչի վերին կողմում, ելնդատառ, գրված (գծ. 5). ՄԵԼ[Ի]Ք[Ս]Էթ ԿԱԶՄՈՂ[17]:

---

10—14-րդ դդ., Երևան, 1973, էջ 347): Մեր կարծիքով առավել հավանական է անձնանվան **Տիրան** ընթերցումը: Հին խաչքարերի ստույգ թվագրումը մեծ կարևորություն ունի այս տիպի կոթողական հուշարձանների զարգացման պատմության համար: Առայժմ մեծ չէ թվակիր հին խաչքարերի քանակը:

Մենք գտել ենք մի քանիսը ևս, որոնք են՝

ա Վարդենիսի շրջանի Թուսկյուլի գյուղի բազիլիկ եկեղեցու հյուսիսային պատի տակ ընկած է երկատված խաչքար՝ պարզ ու խոշոր խաչաքանդակով, ընդարձակ, բայց ծեծված-ջարդոտված, չամբողջացող արձանագրությամբ. [ԹՎ] ՆԼԸ (989). ԵՍ ՄԱ[Ր]ԱՆ ՈՐԴԻ ԽՈՌԱ ԶԱԼԱ ԵԻ ԹՈՌ ... ԵԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱԶՍ ՅԱՆՈՒՆ...

բ Նույն շրջանի Կարճաղբյուր գյուղի «Քարե դուռ» կից մատուռներից հարավային արևելյան պատին հենած խաչքարի եզրերի և ստորին մասի արձանագրության որոշ հատվածներ ծածկված են, սակայն ներքևի մասում հնարավոր է կարդալ՝

Թ. ՆԾԸ (1009) ... ԵԻՈՆ ԿԱԳԷՑԻ:

գ Հիշյալ մատուռներից արևմուտք՝ ձորաեզրին ընկած խաչքարի եզրերին՝ Ի ԹՎ. ՆՁԴ (1035) ԶԽԱԶՍ ԱՐԳԵ... ՈՐԴԻ ԻՄ ՄԱՐԿՈՍ ՔԱՀ[ԱՆԱԻՆ Ա]ՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷ[Ք]. ԽԱՉԻԶ ԳՈՐԾՈՂԱՍ...

դ Մարտունու շրջանի Զորագյուղի Մատրուց անապատ (ս. Կարապետ) եկեղեցու շրջապատի ավերակույտերից հանված և նույն տեղում վերատեղադրված խաչքարի շրջանակներին՝ [ԹՎ] ՆԼԸ (989) . ԱՂԱԻԹՍ... ԳԻՈՐԳ ԵՐԷՑՈ:

և Նույն տեղում պահպանվում է կարմրավուն խաչքարի ստորին մասը՝ ՇԸ (1059) թվի կիսաեղծ արձանագրությամբ:

[16] Հրապետ կազմողի խաչքարերից մեկը գտնվում է Քանաքեռում, Պետևանի որմնափակ խաչքարի մոտ (Տես **Կ. Ղաֆադարյան**, Երևան, 1975, էջ 211): Նույն տեղի ս. Հակոբ եկեղեցու հյուսիսային պատի արևելյան մասում, դրսից, բարձրուստ տեղադրված է մի այլ խաչքար՝ ՀՐԱՊԵՏ ԿԱԶՄՈ[Ղ] ստորագրությամբ, մի ուրիշը դարձված է Փարպիի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու սեղանաքար՝ ՀԷՐԱՅՊԵՏ ԿԱԶՄՈՂ մակագրությամբ, իսկ Կարմրավոր եկեղեցու մոտ պահպանվող ՀՐԱՅՊԵՏ կազմողի խաչքարը հորինվել է ոչ թե ՌԽ—1591 (տես **Ս. Բարխուդարյան**, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 171), այլ ՌԽԷ—1598 թվին: Ժամանակագրական, տերիտորիալ առումով և առաջնորդվելով խաչքարերի ոճական նմանությամբ, Քանաքեռում, Փարպիում, Աշտարակում և Մուղնիում հանդիպող Հրապետ, Հրայպետ, Հէրայպետ և Հարայպետ կազմողներին համարում ենք նույն անձնավորությունը: Հերայպետը լուսաբանվելու պետք է տեղ ստանա նշանավոր հայ քարգործ վարպետների անդաստանում:

[17] Մեր առտնին պրպտումների ընթացքում հայտնաբերել ենք այս նշանավոր արվեստագետի մի շարք խաչքարեր ևս: Դրանցից մեկը գտնվում է իր գործունեության կենտրոնում՝ Կամոյի շրջանի Կարմիր գյուղում (հորինված 1550 թ.), իսկ երկրորդը ագուցված է Էջմիածնի ծիսական եկեղեցու հյուսիսային պատին, որի քիվի և խաչաքանդակի արանքում ելնդատառ հիշատակված է՝ ԿԱԶՄՈՂ ՄԵԼ[Ի]Ք-ՍԷԹԻՆ ՂՈՂԻ (*):

Մյուսը գտնվում է Վարդենիսի շրջանի Շիշկայա գյուղի հյուսիսային եզրում, ավերակ եկեղեցու մոտ: Խոշոր խաչքարի քիվի արձանագրությունը վերծանել է Ս. Բարխուդարյանը (Տե՛ս նրա «Դիվան հայ վիմագրության», պրակ 4-րդ, Երևան, 1973, էջ 512), իսկ խաչաքանդակի հորիզոնական թևերից վերև՝ բարձրաքանդակ տառերով գրված ԹՎ. ՌՌ (1553) ընթերցել է ԹՎ. ՌԸ (1559): Նա չի նկատել քիվի և խորանախաչի միջի նեղ գոտու բարձրաքանդակ տառերով հիշատակագրությունը՝ ՄԷԼ-ՔԻՍԷԹ ԿԱԶՄՈՂ: Հաջորդ երկու հիշատակությունները պահպանվում են Երևանի Ավան թաղամասի պատմական գերեզմանոցի հարավ-արևմտյան եզրում: Այդտեղ ընկած բարձրարվեստ խաչաբեկորի խորանախաչի ձախ կողմում ուռուցիկ, նեղ տառերով գրված է՝ ՄԵԼ[Ի]Ք[ՍԷ]Թ ԿԱ[ԶՄՈՂ], իսկ մյուսն առաջինի հարևանությամբ կարմրավուն տապանաքարի վրա է: Վերջինիս հյուսիսային ճակատին մարդու, ձիու, հայելու, գավի, միալուծ արորի, իսկ հարավային ճակատին՝ չորս խորանիկներ ու նրանց մեջ՝ խաչերի քանդակներն են: Խորանների կամարաղեղների միջև հստակ կերպով ընթերցվում

Ահա սրանք են հին Մուղնու վանքի տարածքից մեզ հասած հիշատակությունները: Մնացած վիմագրերը վերաբերվում են ներկայումս գոյություն ունեցող հուշարձանների կառուցման և հետագա ժամանակի զանազան խնդիրներին:

Մուղնու ս. Գևորգ եկեղեցու կառուցողական ընդարձակ արձանագրությունը[18] հետևյալն է (գծ. 6).

ա ՇՆՈՐՀՕՔ Տ[ԵԱՌ]Ն ԱՄԵՆԱԿԱԼԻ,
բ Ի ԹՎԻՆ ՌՃԺԳ (1664), Ի Թ[Ա]Գ[Ա-
ԻՈ]Ր[Ո]ԻՄԵ[Ա]Ն ՊԱՐՍԻՑ ՓՈՔՐ
գ ՇԱՀ ԱՊԱՋԻՆ ԵՒ Ի ԲՌՆԱԿԱԼՈՒ-
ԹԵ[ԱՆ] ԵՐԿՐԻՍ ԱՊԱՋ ՂՈՒ-
դ ԼԻ ԽԱՆԻՆ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ-
ԹԵ[Ա]Ն ՀԱՅՈՑ Տ[ԵԱՌ]Ն ՅԱԿՈԲԱՅ
ե ՍՐԲԱՋԱՆ Կ[Ա]Թ[Ո]Ղ[Ի]Կ[Ո]ՍԻ
Ս[ՈՒՐ]Բ ԷՋՄԻ[Ա]ԾՆԻ, ՈՐՈՅ ՀՐԱ-
ՄԱՆԱՒ ԵՒ ՕԺԱՆԴԱԿՈՒԹ[ԵԱՄ]Բ ԹՂ-
զ ԹՈՎ, ԲԱՆԻՒ ԵՒ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԸՆԴ-
ՀԱՆՈՒՐ ՔՐԻՍՏՈՆԵԻՑ ՏՐԻՒՔ, ԸՆԴ
ՆՄԻՆ ԵՒ
է ՋԱՄ[ԵՆԱՅՆ] ԻՆՁՍ ԵՒ ԸՍՏԱՑՈՒԱԾ
ՀՈԳ[Ո]ՅՍ ԵՒ ՄԱՐՄՆ[Ո]ՅՍ ՎԱՏՆԵՑԻ
ԵՍ ՅՈՎՀԱՆՆ[Է]Ս Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]Տ
Մ[Ո]ՒՂՆԵՑԻ,
ը ՈՐԴԻ Ց[Ա]Կ[Ո]ԲԱՑ, ԵՂԲՕՐ ՈՐԴԻ
ՄԱՐՏ[Ի]Ր[Ո]Ս ԵՊ[Ի]ՍԿ[ՈՊՈ]ՍԻՆ,
ՔԱԿԵԱԼ Ի ՀԻՄԱՆՑ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՈՐ-
ԳԱՑ ԵԿ[Ե]Ղ[Ե]ՑԻՍ ԵՒ ՇԻՆԵՑԻ
թ ՋՍԱՑ՝ ՀԱՆԴԵՐՁ ԳԱՒԹՈՎՍ՝ ՀՐԱՇԱ-
Կ[Ե]ՐՏ ՅՈՐԻՆՈՒԱԾՕՔ, ՆԵՐՔՈՒՍՏ
ԵՒ ԱՐՏԱՔՈՒՍՏ ԿՈՓԱԾՈՒ ՔԱՐՕՔ
ժ ԵՒ Ի ԹՎԻՆ ՌՃԺԸ-ԻՆ (1669), Ի Թ[Ա]-
Գ[ԱԻՈ]ՐՈՒԹԵ[Ա]Ն ՊԱՐՍԻՑ ՇԱՀ
ՍՈՒԼԵՄԱՆԻՆ ԵՒ Ի ԲՌՆԱԿԱԼՈՒ-
ԹԵ[ԱՆ] ԵՐԿՐԻՍ ՍԷՑԻ
ժա Ղ[Ո]ՒԼԻ ԽԱՆԻՆ ԱՒԱՐՏԵՑԻ, ԵՒ ԵՍ
ԸՆԴ ՆՄԱ ԱՒԱՐՏԵՑԱՑ Ի ԿԵՆՑԱ-
ՂՈՅՍ ԵՒ ՓՈ-
ժբ ԽԵՑԱՑ ԱՌ Տ[Է]ՐՆ ԱՄԵՆԻՑ. ՄՆԱՑ
ՄԻԱՅՆ ԳԼԽԻ ՍԱԼՔՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ
ԴՕՇԱՄԷՆ
ժգ ԵԿ[Ե]Ղ[Ե]ՑՈՅՍ ԵՒ ԳԱՒԹԻՍ, ԶՈՐՍ
ԿՏԱԿԱՒ ՅԱՆՁՆ ԱՐԱՐԻ ԵՂԲՕՐ ՈՐԴ-
[Ի]Ո]Ց ԻՄՈՑ ԴԱ-
ժդ ԻՒԹ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻՆ՝ ՓՈԽԱ-
ՆՈՐԴ ԼԻՆԵԼ ԻՆՁ ԵՒ ԿԱՏԱՐԵԼ ԶՊԱ-
\ԿԱՍՈՒԹԻ[Ի]Ն ԵԿ[Ե]Ղ[Ե]Ց[Ո]ՅՍ
ժե ԵՒ ԳԱՒԹԻՍ: ՈՐՔ ՏԵՍԱՆԷՔ ԶՅԻ-
Շ[Ա]Տ[Ա]ԿՍ ԻՄ, Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐ-
ՄԻ ԱՍ[Ա]ՑԷՔ ԻՆՁ ԵՒ ԾՆ[Ո]ՂԱՑ
ԻՄՈՑ,
ժզ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՁԵԶ ՈՂՈՐՄԵՍ-
ՑԻ, ԱՄԷՆ: ԱԼԷՔՍԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀԱՅՈՑ ՅԻՇ[Ե]ՑԷՔ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս:

Արձանագրությունը կազմված է Հովհաննես վարդապետի անունով, բայց նրա մահից հետո:

Եկեղեցու արևմտյան շքամուտքի ճակատակալ քարի արձանագրությունը (գծ. 7) ավետում է.

ա ՇՆՈՐՀՕՔՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Ց ԵՍ ՊԵՏՐՈՍ
ՎԱՐԴԱՊԵՏ, ՈՐ ՅԱԳՈՒԼԵԱՑ, ԱՆ-
ՁԱՄԲ ԵՒ ԺՈ-
բ ՂՈՎՐԴԵԱՄԲ ԻՄՈՎ ՅՕԺԱՆԴԱԿ ԵՂԷ
ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ
գ ԵՒ ՇԻՆԵՑԻ ԶԴՈՒՌՆՍ ՍՐԲՈՅՆ ԳԷ-
ՈՐԳԱՑ ԶՕՐԱՎԱՐԻ՝ ԵՐԿՆԱՔԱՏԱԿ
ԿԱՄԱՐ-
դ ՕՔ ԵՒ ԿԱՆԳՆԵՑԻ Ի ՎԵՐԱՑ ԶՍՈՒՐԲ
ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽՕՍՈՒԹԻՒՆ ՀՕՐԵՂ-
ԲՕՐՆ Ի-
ե ՄՈՑ, ՏԵԱՌՆ ԽԱՉԱՏՐՈՅ ԱՐՀԵՊԻՍ-
ԿՈՊՈՍԻՆ ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ ԵՒ
ԲԵՄԲԱ-
զ ՍԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍ-
ՏՈՍ, Ի ԹՈՒԻՆ ՌՃԺԸ (1669): ԱԼԷՔ-
ՍԱՆ[19]:

---

է ինքնին իմաստ չկազմող ԾԸԻԼՓՎԸԺ տառերը: Մեզ հաջողվեց բացել ավանի քարգործի՝ Մելիքսեթի անունը կազմող գաղտնագիրը՝ եղբայրագիր ծածկագրով, որն է՝

ԾԸԻԼՓՎԸԺ
ՄԵԼԻՔՍԷԹ:

Ի դեպ, օրըստօրե ավելանում է ոչ միայն Մելիքսեթի, այլ նաև նույն դարի հոչակավոր մի այլ քարգործի՝ Քիրամի ստեղծագործությունների թիվը: Նրա հնագույն ձեռակերտը մի փոքր խաչքար է՝ ագուցված Էջմիածնի Հին վեհարանի արևելյան պատին, բարձրուստ, քիվին՝ Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱ[ԻՍ Է] ՈՒԼՈՒԽԱՆԻ[Ն], իսկ խորանախաչի երկու կողմում՝ ՔԻՐԱՄ ԿԱՋՄՈՂ, Թվ. ՌԻԹ (1580) մակագրությամբ: Մյուսը գտնվում է Հացառատի մեծ գերեզմանոցում, ճանապարհի եզրին. դա բազալթե փոքր տապանաքար է, որի հարավային լանջի 6 խորաններից վերև գրված է՝ ՔԻՐԱՄ ԿԱՋՄՈՂ: Ի դեպ, ուշագրավ է, որ տապանաքարի մնացած երեք կողերն անմշակ են, քանի որ այն պատրաստվել է վաճառքի համար և պետք է լրացվեր ըստ գնորդի նախասիրության: Քիրամի կազմած խաչքարերից մեկը կանգնեցվել է Հակոբ եպիսկոպոսի հիշատակին, Նորադուզում (Դիվան, պրակ 4-րդ, էջ 37), որի տարեթիվը՝ Թվ. ՌԽԴ (1595) աննկատ է մնացել:

[18] Այս արձանագրությունը հրատարակել է Շահխաթունյանը՝ աննշան վրիպումներով (տե՛ս նրա «Ստորագրութիւն»..., հ. 2-րդ, էջ 92—93): Այն նույնությամբ վերահրատարակվել է հետագայում (տե՛ս Ալիշան, Այրարատ, էջ 183—184 և Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Պետերբուրգ, 1913, էջ 188—189): Ի դեպ, Կոստանյանցը յուրովի սրբագրել-խմբագրել է Շահխաթունյանցին:

[19] Շահխաթունյանը փակագրված վերջին բառը կարդացել է ամէն (տե՛ս նրա «Ստորագրութիւն»...,

Եկեղեցու կառուցման մեկենասներից պարոն Վարդանի հիշատակությունը փորագրված է ներսի հարավ-արևելյան սյան արևմտյան կամարի վրա:

ա ՅԻՇԵՑԷՔ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս ԶՊԱՐՈՆ
բ ՎԱՐԴԱՆՆ, ՈՐ Է ԵՂԲՕՐ ՈՐԴԻՆ
գ ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]ՏԻ, ՇԻՆՕՂԻ
դ Ս[ՈՒՐ]Բ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ԳԱՒԹԻՆ ԵՒ
ե ԵՂԲԱՅՐ ԴԱՒԻԹ Վ[Ա]ՐԴ[Ա]Պ[Ե]-ՏԻՆ՝ ՓՈԽԱՆՈՐ-
զ ԴԻ ՆՈՐԻՆ, ՈՐ Ի ՀԱՎԱՎ ԸՆՉԻՑ ԻՒՐՈՅ ԵՏ
է ՁԽԱՐՃՆ ՇԻՆՈՒԹԵ[ԱՆ] ԱՅՍ ՍԵԱՆՍ ԵՒ:Ա: (1)
ը ԿԱՄԱՐԻՆ՝ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՒՐՈՅ
թ ԵՒ ԾՆՕՂԱՅՆ՝ ՀՕՐՆ՝ ԿԱՐԱՊԵՏԻՆ,
ժ ԵՒ ՄՕՐՆ՝ ԹՈՒՐՎԱՆԴԻՆ, ԵՂԲԱՐՑՆ՝ ԿԵ-
ժա ԶԱՔԱՐԻԱՅԻՆ ԵՒ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՒ
ԺԲ ՆԱԿՑԱՑ ՆՈՑԻՆ, ԶԱՐՄԻՑ ԵՒ ԶԱ-Ի[Ա]Կ[Ա]Ց,
ԺԳ ԿԵՆԴԱՆԵ[Ա]Ց ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ: ՈՐՔ ՈՂ[Ո]Ր-
ԺԴ ՄԻ ԱՍԷՔ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՁԵԶ Ո-ՂՈՐՄԵՍՑԻ. ԱՄԷՆ:
ԺԵ ԳՐԵՑԱՒ Ի ԹՎԻՆ ՌՃԺԹ (1670), ՁԵ-ՌԱՄԲ ԱԼԷՔՍԱՆԻՆ[20]:

Եկեղեցու արևելյան պատի հյուսիսային մասում, բարձրուստ, խաչաքանդակից վերև, պահպանվում է հետևյալ ուշագրավ հիշատակագիրը (գծ. 8).

ա Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ Է ՇԻՊ ՂԱՐԱՀԻՍԱՐՑԻ ՄԻ-
բ ՆԱՍ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ ԵՒ ԾՆՕՂԱՅՆ՝ ՅԱԿՈԲԻՆ, ԵԼԶԲԱՀԱՐԻՆ ԵՒ
գ ԵՂԲԱՐՑՆ՝ ՄԵԼՔՈՆԻՆ, ԽՈՒՊԱՍԱ-ՐԻՆ ԵՒ ԱՄ[ԵՆԱՅՆ] ԿԵՆԴԱՆԵ[Ա]Ց ԵՒ ՀԱՆԳ[Ո]Ի-
դ ՑԵԼՈՑ. Ի ԹՎԻՆ ՌՃԺԹ (1670): ԱԼԷՔ-ՍԱՆ ՆՕՏԱՐ:

Արձանագրությունը գրվել է եկեղեցու կառուցման ավարտման տարում, և պետք է ենթադրել, որ Մինաս սարկավագը ևս աջակցել է այդ ձեռնարկմանը, և հարազատների հետ արժանացել է հավերժ հիշման: Այստեղ հիշատակվող Շիպ Ղարահիսարը Շապին Գարահիսարն է (Էրզրումի մոտ): Այն Շիպ Ղարահիսար է կոչվել նաև 17-րդ դ. մատենագիր Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին հայոց» աշխատության մեջ[21]: Ալիշանի համար այս՝ տեղ-տեղ հողմահարված ու դժվարընթեռնելի արձանագրությունն ընդօրինակել է Սիմեոն Ծուլարտյանը, և այն մտել է մեծանուն երախտավորի «Այրարատ»-ի մեջ (էջ 184): Ծուլարտյանն արձանագրությունն ընթերցել է հիմնովին աղավաղած, բնագրին խորթ ու քմածին արբագրությամբ, և այն ստացել է հետևյալ տեսքը՝ «Խաչս յիշատակ է Սիպղաքոս ? սարկաւագին եւ ծնողաց իւրոց Պապպին եւ... ետու զՊորխոն վասն հանգուցելոյն. թվ. ԷՃԻԹ ապաքանազեան»: Մեկնաբանություններն ավելորդ են[22]:

Հաջորդ վիմագիրը պատվոգրված երկու տող է՝ ԴՐ (գծ. 9)՝ փորագրված թմբուկի հարավային պատուհանից վերև, ներսից: Նման ձևով սպասելի էր ճարտարապետի, մեկենաս-կտիտորի կամ նրանց հետ առընչվող անձանց անվանագրումը: Սակայն մեզ հայտնի են թե՛ ճարտարապետները, թե՛ վանքի առաջնորդներն ու թե՛ մեկենասները, և նրանցից ոչ մեկի անունը չի կարող կազմել ԴՐ հապավումը: Ձեռագրերում նման ձևով գրվում է միայն դորա դերանունը, բայց այս դեպքում դրա օգտագործումը անիմաստ է: Մեր կարծիքով հապավված է Դ[ԱՏԱՒՈ]Ր բառը՝ նկատի ունենալով Տեր Աստծուն, որից արդարություն հայցող հավատացյալը հայացքն ուղղում է դեպի երկինք (թմբուկին)՝ դեպի այդ խորհրդավոր տառերը:

Թմբուկի հարավ-արևելյան լուսամուտից վերև Մատթեոս ավետարանչի բարձրաքանդակն է, ձեռքերով կրծքին սեղմած Ավետարանով: Լուսապսակով գլխի երկու կողմում հստակ ու պարզ փորագրված է ՄԹ—Մ[ԱՏԹԷՈ]Ս:

Թմբուկի հարավ-արևմտյան պատուհանից վերև տեղադրված է Մարկոս առաքյալին խորհրդանշող առյուծի բարձրաքան-

---

2-րդ, էջ 93—94), մինչդեռ այն պետք է վերծանել Ալէքսան՝ նրան նույնացնելով նախորդ արձանագրության մեջ հիշատակվող հայոց քարտուղար Ալէքսանի հետ: Վերջինս կազմել է այլ արձանագրություններ ևս, որոնք կներկայացվեն ստորև: Դրանցից մեկի մեջ Ալեքսանը կրում է ՆՕՏԱՐ (գրագիր) կոչումը, որը տվյալ դեպքում պետք է համարել ՔԱՐՏՈՒՂԱՐԻ հոմանիշ: Արձանագրությունը որոշ կրճատումներով մտել է Վիմական տարեգրքի մեջ (էջ 191):

[20] Արձանագրությունը հրատարակել է Շահխաթունյանը՝ ազատ ընթերցանությամբ (տե՛ս նրա «Ստորագրութիւն...», հ. 2-րդ, էջ 93), որը մտել է «Այրարատ»-ի (էջ 184) և «Վիմական տարեգրքի» մեջ (էջ 191):

[21] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», 13—18-րդ դդ., հ. 2-րդ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 151, 155:

[22] Արձանագրությունը նույնությամբ վերահրատարակել է Կ. Կոստանյանցը («Վիմական տարեգիր», էջ 122):

դակը՝ թաթերի մեջ առած Ավետարանով: Դրան մերձ փորագրված է ՄԱՐԿ[Ո]Ս և մի գեղագիր փակագիր-ծածկագիր (գծ. 12): Եկեղեցու կառուցումն ավարտողի անվան փակագիրը՝ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱ[ՊԵՏ] բացվում է ոչ մեծ դժվարությամբ:

Եկեղեցու թմբուկի հյուսիս-արևմտյան պատուհանից վեր եզան բարձրաքանդակն է առջևի ոտքերով «բռնած» Ավետարանով, իսկ նրա տակ գրված է Ղ[ՈՒ]Կ[Ա]Ս: Հյուսիս-արևելյան լուսամուտի գլխին արձվաքանդակն է՝ կտուցով պահած Ավետարանը, իսկ դրա երկու կողմում փորագրված է (գծ. 10) Յ[Ո]Հ[Ա]Ն[ԷՍ] Ա[ԻԵՏԱՐԱ-ՆԻ]Շ:

Ահա սրանք են Մուղնու ս. Գևորգ եկեղեցու կառուցման տարիներից մեզ հասած վիմագիր հիշատակագրությունները: Անշուշտ ուշադրության են արժանի նաև ավելի ուշ շրջանից պահպանվող արձանագրությունները: Այսպես, եկեղեցու հարավային մուտքի փայտե (կաղնի) դռան վրա գրված է (գծ. 11)՝ ԱՄԻ 1838 Ս[Ե]Պ[ՏԵՄԲԵՐ]. /ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԴՈՒՌ/ՌՍ ԵՐԵՒԱՆՈՒ ՄՈՂՆԻ/ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՎՈՐՔԻՆ, ԿՆԵԱ-ՋԻ/ ՈՐԴԻ ԳԷՎՈՐՔԻՆ ԵՒ ԿՆՈՇ/Ն ԳԱ-ԻԱՆԻՆ ԵՒ ՈՐԴԻ Ն[Ո]Ր[Ա] ՄԻՔ/ԱԻ-[Լ]ԻՆ. Ա[ՍՏՈՒԱ]Ծ[Ա]ՏՈՒՐ Տ[Է]Ր, Ա[Տ]/ԻՇՕՎՍ ՍՏՈՐԱԳՐԵՑԻ: Ինքնին ուշագրավ է, որ եկեղեցին կոչվում է՝ Երևանու սուրբ Գէորք՝ Թբիլիսիի նույնանուն եկեղեցու հետ չշփոթելու համար: Այս անվանումը պահպանվել է նույն տոհմի կողմից արևմտյան մուտքին դրած դռան աջ փեղկի արձանագրության մեջ ևս, որն է (գծ. 12). ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԴՈՒՌՍ ԿՆԵԱՋԵՆՑ/ ԳԷՈՐԳԻՆ ՈՐԴԻ ՄԻՔԱԷԼԻՆ, ԿՆՈՋՆ՝ /ԳԱԻԱՆԻՆ, ԴՈՒՍՏՐՆ՝ ԱՆԱՒԻՆ, ՈՐ ԵՏ/ ԵՐԵՒԱՆՈՒ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՈՐՔ ՄՈՂ-ՆՈՅՆ 1839. /ԸՍՏՈՐԱԳՐԵՑԻ ԵՍ ՏԻՐԱ-ՑՈՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐ Տ[Է]Ր ՄԸԿԸՐ-ՏԻՉ/ Տ[Է]Ր Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐԵԱՆՑ:

Բեմին կից ձախ ավանդատան մուտքի դուռը ևս պատրաստվել է նույն տոհմի կողմից, ու թեև այն չի թվագրված, բայց առաջինների ժամանակակիցն է: Նրա արձանագրությունն է (գծ. 13)՝ ՅԻՇԱՏԱԿ Է ԱՅՍ ԴՈՒՌՍ ԿՆԵԱ/ՋԷՆՑ ԳԷՈՐՔԻՆ/, ԱՄԷՆ:

Սյունասրահի հարավից երրորդ սյան հյուսիսային ճակատին (գծ. 14). ՄՎ 1860 ԱՄԻ:

Աշտարակցի Սիմեոն Սաժումյանին վերաբերվող առաջին արձանագրությունը փորագրված է եկեղեցու արևմտյան պատին, դրսից, սյունասրահի հարավային կամարի տակ, որն է (գծ. 15)՝

ա ԵՍ ՍԻՄԷՕՆ ՍԱԺՈՒՄԵԱՆՑ ԱՇՏԱ-ՐԱԿՑԻ, Ի 18[6]6

բ ԱՄԻ, ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՀԱՅ-ՐԱՊԵՏԻՆ ՆԵՐՍԵՍԻ

գ ՀԻՆԳԵՐՐՈՐԴԻ ԿԱՐԳԵՑԱ ՏԵՍՈՒՉ ՎԱՆԻՑ Ս[ՈՒՐ]Բ

դ ԳԷՈՐԳԱՑ, ՋՈՐՊԻՍԻ ՊԱՇՏՕՆ ՁԿՆԻ ՄԱՀՈՒԱՆ

ե ՅԻՇԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵՑԻ ՀՐԱՄԱՆԱՒ ՍԻՆՕ

զ ԹԻ. 1863 ԱՄՆ[23]:

Այնուհետև Սիմեոնը կարգվում է նույն վանքի հոգաբարձու և վերանորոգում այն, որի առթիվ սյունասրահի թաղակիր կամարի վրա փորագրվում է (գծ. 16)՝ Ի 1868 ԱՄ. ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ/ ԿԱ-ԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՏԵԱ-/ՌՆ ԳԷՈՐԳԱՑ Դ-Ի, ԿԱՐԳԵՑԱՑ ՀՈ/ԳԱ-ԲԱՐՁՈՒ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ՍԻՄԷՕՆ/ ՍԱ-ԺՈՒՄԵԱՆՑ Ս[ՈՒՐ]Բ ԳԷՈՐԳԱՑ ՎԱ/-ՆԻՑՍ ԵՒ ԱՐԴԵԱՄԲ ՆՈՐԻՆ ՎԵՀԱ-ՓԱ/ՌՈՒԹԵԱՆ ՆՈՐՈԳԵՑԻ ԽԱԽ/ՏԵԱԼ ՏԱՆԻՍՆ ՏԱՇԱՐԻՍ:

Ս. Գևորգի նշխարներին հովանի կանգնած մարմարե տապանաքարի վրա (գծ. 17), ՅԻՇԱՏԱԿ Է ԱՇՏԱՐԱԿՈՒ /ՀԱՍԱ-ՐԱԿՈՒԹՈՒՆԻՑ/ Ի 1893 ԱՄԻ:

ԺԹ դարի վերջերին երևանցի Մելիք Ա-ղամալյանի միջոցներով շինարարական աշխատանքներ են կատարվում Մուղնիում: Այս առթիվ պարսպակից սենյակների երկրորդ հարկ տանող աստիճանների պարապետի վրա գրվել է (գծ. 18)՝

ԾԱ.ԽԻԻՔ /ԵՐԵ[Ի]ԱՆՑԻ Ա/ՂԱՄԱԼ Ա-ՂԱՅԻ ՄԷԼԻՔ /ԱՂԱՄԱԼԵԱՆՑ. 1895:

Հավանաբար ԺԸ—ԺԹ դարերում Մուղնու տաճարի ներսում կատարվել են մի շարք որմնանկարներ: Ինչ-որ տեղ Նաղաշների ոճն ու գունային համակարգը հիշեցնող այս որմնանկարները մաքրվել ու ամրացվել են 1975 թ. Հուշարձանների վերականգնման Հատուկ գիտա-արտադրական արվեստանոցի նկարիչների կողմից, շնորհալի արվեստագետ Կաղլեն Ավետիսյանի ղեկավարությամբ: Որմնանկարների վրա պահպանվում են սև ներկով գրված մի քանի համառոտ հիշատակություններ՝

ա Բեմից ձախ, հայրապետական գավազանը ձեռքին, հասակով մեկ կանգնած սրբի որմնանկարի վերևի մասում (գծ. 19). Ս[ՈՒՐ]Բ ՆԻԿՈՂԱ[ՅՈՍ] Հ[ԱՅ]Ր[Ա]-Պ[ԵՏ]:

բ Բեմի ձախակողմյան որմնամույթի վրա

[23] Առաջին տողում լավ չի քանդակված նախավերջին թվատառը, սակայն այն պետք է 6 լինի (1866): Ի դեպ, սրանից վերև փորագրված է եղել մի ընդարձակ արձանագրություն, որի տառերը քերվել-հանվել են, և լոկ մի քանի բառեր են ընթերցվում:



Գծագրեր

պատկերված է Քրիստոսի համբարձումը: Կրծքին, ճառագող շրջանկարի մեջ, գրված է (գծ. 20). Յ[ԻՍՈՒ]Ս:

գ/ Հիսուսից դեպի ներքև թերևս որմնանկարի պատվիրատուի հետևյալ հիշատակությունն է (գծ. 21). ՅԻՇԱՏԱԿ ԻԾԽԱՆԱԶՆԵԱՑ ԵԶՆԱ/ԿԱՑ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ:

Սեղանատան երկրորդ հարկ տանող աստիճանների պարապետի հարավային ճակատին կա մի կիսաեղծ արձանագրություն՝ 19-րդ դարից, որն է (գծ. 22). ԵՂԻԾԷ ԹՈՐՈՍԵԱՆ ԱԼԱՇԿԵՐՏԵՑԻ...

Հայկական միջնադարյան ճարտարապետության վերջին, բայց նշանակալից էջերից մեկը՝ Մուղնու ս .Գևորգ տաճարը, և նրա որմերի արձանագրությունների այս փոքրիկ խումբը վկայում են ազգային մշակույթին մեր նախնիների անմնացորդ ու անբասիր նվիրումի, շնորհների ու կարողությունների մասին: Գոյատևման համոզմունքով, հավերժացման անկանգ մղումով նման ձեռնարկումների իրականացման շնորհիվ է նաև, որ դարերի անհագնալուր փորձություններից փրկվել ու մեզ է հասել ազգն ու ազգային մշակույթի կայծկլտացող պատրույգը:





ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

# ՄԵՐ ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴ ԴՌՆԵՐԸ

Մեր Պատմության պետական թանգարանում կան քանդակազարդ հինգ դռներ, որոնք պատկանում են ԺԲ—ԺԷ դարերին:

Մեզ հայտնի չէ, թե այդ դռների քանդակազարդման արվեստի մասին երբևէ ուսումնասիրություն եղել է: Համենայն դեպս, ներկա հոդվածով փափագում ենք ուշադրություն հրավիրել մեր քանդակագործական արվեստի այդ ճյուղի գլուխ-գործոցների վրա:

Ժամանակագրական կարգով առաջինը Մշո Առաքելոց վանքի դուռն է, ՇԶԳ (1134) թվակիր: Այդ դուռը ոչ միայն ուշագրավ է նախապես պատկանած իր վանքի և հնության տեսակետից, ինչպես նաև արվեստագիտական ինքնատիպությամբ, այլև դժբախտաբար միակն է, որ փրկված է 1915 թվականի աշխարհակործան աղետից...

Այս տողերը ստորագրողը շուրջ քառորդ դար առաջ մի հոդվածով[1] անդրադարձել էր այս դռան վիճակված բացառիկ ճակատագրին և արվեստագիտական արժանիքներին: Այժմ, ուրեմն, անտեղի պիտի լիներ նույնի կրկնությունը: Սակայն կան պատմական և արվեստագիտական հարցեր, որոնք մի հոդվածով չեն սպառվում. ժամանակը հաճախ նոր մտքեր է թելադրում: Բացի այդ, անցած քառորդ դարի ընթացքում մի նոր սերունդ է հասակ առել և տեղ գրավել մեր ազգային կյանքում. ուստի համառոտակի մի անդրադարձումը անհրաժեշտ ենք համարում:

Առաքելոց վանքը գտնվում էր Մուշից ութ կիլոմետր հեռու, մի բարձունքի վրա, որից այն կողմ Սասնա լեռնաշխարհն էր: Վանքը շինված է եղել Մամիկոնյան նշանավոր տոհմի մի շառավիղը եղող Թոռնիկյան իշխանների կողմից: Մինչև 1915 թվականը, ուրեմն, այդ պատմական վանքը Տարոնի և Սասունի հայության հոգևոր կենտրոններից մեկն է եղել: Պարզվում է, որ այդ վանքի ամենից ավելի արժեքավոր հնությունը եղել է հենց վերոհիշյալ դուռը, որի մասին նախօրոք տեղյակ են եղել գերմանացի հնագետները: Դրանով կարելի է բացատրել այն փութաջանությունը, որ նրանցից մի քանիսը շտապ գալիս են Մուշ, ինչպես դիակի հոտ առնող ագռավներ, տեղից պոկում, հանում են դուռը և տանում Բիթլիս՝ ուղարկելու համար այնտեղից Բեռլին, բարեհաճ թույլտվությամբ իրենց թուրք դաշնակցի...

Սակայն բախտն այլ կերպ է տնօրինում: Ռուսական բանակները շուտով առաջանում են դեպի ամայացած հայաբնակ նահանգները և թշնամու լքած ավարների միջից ձեռք բերում նաև այդ դուռը: Բանակի հայ զինվորականները դուռը հանձնում են դեպի Կովկաս գաղթող հալածական հայ գաղթականներին, որոնք մեծ զոհողություններով հասցնում են այն Երևան: Այդ դուռն այժմ Պատմության թանգարանի անգնահատելի գանձերից մեկն է ոչ միայն

[1] «Էջմիածին», 1952 թ., № Ա, էջ 23—26:



Մշո Առաքելոց վանքի դուռը (1134 թ.)

որպես պատմական հուշարձան, այլ նաև որպես մեր զարդաքանդակային արվեստի գլուխ-գործոցներից մեկը:

Դուռը գործն է երեք վարպետների՝ ըստ հետևյալ արձանագրության. «Ի թ. Հ. ՇՁԳ. ԵՍ ՏՐ ԹՈՐՈՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՂՈՒԿԱՍ ԳԾ —որ է՝ ի թուականի հայոց ՇՁԳ—1134 —ես Տէր Թորոս և Գրիգոր և Ղուկաս գծեցաք, այսինքն քանդակեցինք»: Դռան չափերն են. 185×150 սմ, շինված կաղնեփայտից[2]:

Վանքի այս դուռն առանձնապես հետաքրքրական է իր այն հանգամանքով, որ չի կրում քրիստոնեական կրոնին հատուկ որևէ մի խորհրդանշան, ինչպես վայել էր: Նույնիսկ մեզ թվում է, որ այս դուռը պատրաստված է եղել հայ իշխանական մի պալատի համար, քանի որ դռան շրջանակը քանդակազարդված է աշխարհիկ կյանքի հատուկ պատկերացումներով: Երկփեղկանի դռան աջ և ձախ կողմի երկու շրջանակների վրա քանդակված են մի շարք ընտանի և գիշատիչ կենդանիներ, զարդականորեն գալարուն ճյուղերի միջև ձևավորված և ուղղված ներքևից դեպի վերև ու վերջացած մարդագլուխ-թռչնաձև մեկական հուշկապարիկով: Առավել ևս հետաքրքրական են գլխավերևի շրջանակի պատկերացումները: Աջակողմում գտնվում է սպառազեն ի ձիավոր, իշխանական մի մական բռնած, ձախով կրում է բոլորշի վահան, գեղեցկորեն քանդակազարդ: Նրա դիմացի ձիավորը նիզակով զգետնել է վիշապը: Նրանից վերև կա, հազիվ ընթեռնելի, ՍԲԹՈՐՈ—գուցե Սբ. ԹՈՐՈՍ—արձանագրությունը: Հաջորդը դեպի ձախ դարձած շեփորող մի անձ է՝ քաղաքացու տարազով: Նրա առջևից արշավում են զինավառ երկու ձիավոր, որոնցից մեկը սուրը առաջ է ցցել, իսկ նրա առաջից արշավող ձիավորը, ըստ երևույթին մի իշխան, բարձր է բռնել մականը կամ մի գուրզ՝ ընթանալով դեպ առաջ:

Դժվար է մեկնաբանել այս էապես ռազմական բնույթի պատկերները: Համենայն դեպս մենք վերադառնում ենք մեր այն ենթադրությանը, որ այս դուռը պատվիրված է եղել իշխանական մի պալատի համար, որի կործանումից հետո հավանաբար փոխադրել են այն Առաքելոց վանք, որպես ապահովագույն վայր... Եթե ճիշտ համարվի մեր այս ենթադրությունը, դռան նշանակությունն ավելի նոր և հետաքրքրական բնույթ կստանա:

Գալով դռան երկու փեղկերին, յուրաքանչյուրը զարդարված է երկրաչափական խաչաձևումներով ստացված նմանօրինակ պատկերներով՝ ձևացնելով չորսական ութանկյունիներ, և այլն, կենտրոն ունենալով ութթևանի մեկական աստղանիշ: Դռան ընդհանուր տեսքն այսպես անշուշտ ակնապարար է, բայց ոչ հավատարիմ հայկական զարդարվեստի ավանդություններին, քանի որ թե՛ մեր ճարտարապետության և թե՛ խաչքարային զարդարվեստի մեջ նույն մոտիվն ընդհանրապես չի կրկնվում՝ ձգտելով միշտ այլազանության:

Մշո Առաքելոց վանքի դուռը, այսպես ուրեմն, մեզ դնում է դեռ նորանոր առեղծվածների առջև: Դրանցից մեկն էլ հետևյալն է.

Այս տողերը գրողը տարագրության ժամանակ հաջողել էր կանգ առնել Գոնիայում, ուր մասնակցել էր վերանորոգվող իսլամական մի աղոթատեղիի՝ «Սուլթան Սելիմ Ծամիի» (գործ՝ հայազգի նշանավոր ճարտարապետ Գոճա Սինանի) աշխատանքներին որպես որմնանկարիչ: Այդ աղոթատեղիի փայտյա դուռը նույնպես վերանորոգման կարիք ուներ, որը շինված էր բազմաթիվ ու բազմաձև կտորներից, վարպետորեն իրար ագուցված, որոնք երկրաչափական նույնպիսի խաչաձևումներով զարդական այն նույն պատկերներն էին ձևացնում, ինչպիսին Մշո Առաքելոց վանքի դուռն ուներ... Ժամանակով իրարից այնքան հեռու, սակայն արվեստագիտական ավանդույթներով այսպես շարունակված լինելու այդ փաստը մեզ մտածել է տալիս, թե ինչքան անանուն հայ վարպետներ դարերի ընթացքում իրենց գիտությունը, արվեստներն էին ծաղկեցրել Հայաստանից մինչև արաբական երկրներ, մինչև Անատոլիա, մինչև Բոսֆորի ափերը:

Ավելորդ թող չհամարվի, եթե հիշենք նաև, որ վերոհիշյալ դռան վերանորոգումը ևս կատարեց հայ տարագրյալների միջից գտնված ճարտար մի վարպետ, որ սակայն անհոհեմությունն էր ունեցել վերանորոգման գործը շուտ ավարտելու... Ուստի խեղճը ընտանյոք նորից քշվեց դեպի...

Ժամանակագրապես հաջորդ դուռը Սևանի Առաքելոց վանքինն է և կրում է հետևյալ արձանագրությունը.. «Ի ԹՎ. ՀԱՅՈՑ ՈՒԵ (1176) ՆՈՐՈԳԵՑԱՒ ԴՈՒՌՆ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՀՐԱՄԱՆԱՒ ԻՇԽԱՆ ՔՐԴԻՆ ԵՒ ՁԵՌԱՄԲ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՀԻԻՍԱՆՆ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՅՔ ՅԻՇԵՍՋԻՔ»: Ինչպես երևում է, քանդակագործական մանրակրկիտ և խնամյալ մի արտադրություն է, 179×110 սմ մեծությամբ և գործն է արհեստով մի հյուսնի, որի անունն այսպես հազվադեպորեն է հիշված: Քան-

[2] Հոդվածագիրը 1950—53 թթ. չափագրել և գծագրել է այս և հաջորդ 4 դռները, Պատմության պետական թանգարանում աշխատելիս:



Սևանի Առաքելոց վանքի դուռը (1176 թ.)

դակող վարպետը դռան վրա կատարել է մի ընտիր խաչքարի պատկեր: Այս փաստը ցույց է տալիս, որ նույն անձերն են եղել խաչքարեր «հորինող» կամ փայտյա դռներ քանդակող վարպետները:

Տաթևի վանքի դուռը (1253 թ.)

Երրորդ դուռը պատկանել է Տաթևի վանքին և կրում է հետևյալ արձանագրությունը. «ՁԲ—1253—ԵՍ ՏՐ ՀԱՅՐԱՊԵՏ ԾԱՌԱ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԴԱՍԵՐՍ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԴՈՒՌՍ ԶԻ ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ ԱՂԱՁԵՄ»

Դռան մեծությունն է 190×150 սմ:

Ափսոս, որ այստեղ էլ չկա տաղանդավոր քանդակագործի անվան հիշատակությունը: Այստեղ էլ պատշաճ է համարվել խաչքարային պատկերացումը: Կենտրոնի խաչանշանի երկու կողմի տարածությունը պատած է մեկը մյուսից տարբեր զարդաքանդակներով, ըստ հայկական ավանդական ոճի:

Չորրորդ դուռը նորից Սևանի Առաքելոց վանքին է պատկանել և ունի երկարապատում մի արձանագրություն, դժվար ընթեռնելի, որի սկզբում նշված է թվականը՝ ՋՀԱ (1522): Չկարողացանք հայտնաբերել մեծատաղանդ քանդակագործի անունը, թեև նշված էր: Նա այստեղ հանդես չի գալիս որպես զարդանկարիչ, որքան պատկերող՝ քրիստոնեության հաստատումը Հայաստանում: Հիմք ծառայող գեղեցկահյուս վարդյակի վրա ձևավորել է երեք կամար, որի կենտրոնական բարձրադիր կամարի տակ ներկայացրել է ս. Գրիգոր Լուսավորչին, որի աջակողմին Տրդատն է խոզագլուխ,



Սևանի Առաքելոց վանքի դուռը (1522 թ.)

իսկ ձախում՝ նույնը՝ թագակիր գլխով, որպես քրիստոնյա: Բարձրից նրանց վրա ճառագում է աղավնակերպ սուրբ Հոգին: Դեպի վեր՝ շարք-շարք սրբեր կան, աղոթական, ծնրադիր, իսկ ամենավերը բազմած է Քրիստոսը: Նրա երկու կողմում՝ ավետարանիչների կենդանակերպ խորհրդանշաններն են: Դռան ներքին և արտաքին եզերազարդերը ևս ձևավորված են բարձր ճաշակով և զարդաձևերի հաջորդական այլազանությամբ:

Սևանա վանքի դուռը ամենաիոքրն է մեր նկատի ունեցած դռներից (175×95 սմ), բայց, ժողովրդի կողմից նկատված լինելով որպես սրբություն, դարերով նրա առջև

Տաթևի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դուռը (1614 թ.)

վառված մոմի և ձեթի ծխից բոլորովին ևևվացած վիճակում է գտնվում:

1927 թվականի երկրաշարժից Տաթևի բազմադարյան և պատմական վանքը բոլորովին ավերվեց: Փլատակների տակից կարելի եղավ փրկել վանքի գեղաքանդակ դուռը միայն, մեջտեղից երկճղված: Դռան շրջանակը չկա. երևում է, որ բոլորովին ջախջախված է եղել, քանի որ Պատմության թանգարանում ցուցադրված է միայն փեղկը, որի մեծությունն է 195×110 սմ: Դուռը զուրկ է որևէ արձանագրությունից: Միայն դռան վերևի ճախակողմյան եռանկյան վրա, հավանաբար հետագայում, նշվել է ՌԿԳ (1614) թվականը:

Դռան քանդակազարդումը ապահովաբար գործն է խաչքարեր հորինող տաղանդավոր մի վարպետի, քանի որ նույն խորհրդանիշներն առկա են և նույնպիսի զարդական ոճով ձևավորված:

Այս հինգ դռների շարքով էլ փակվում է միջնադարյան Հայաստանի զարդաքանդակային արվեստի այնքան պանծալի գլուխ-գործոցներով հարուստ ժամանակաշրջանը:



# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

## ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Միաբանական ոգու անհրաժեշտությունը եկեղեցիների միջև, եկեղեցական ժողովների կարևորությունը եկեղեցու միության համար. սրանք են՝ եղել այն կարևորագույն հարցերը, որոնք, այլ հարցերի թվում, քննության են առնվել Վիեննայում երրորդ ոչ պաշտոնական խորհրդակցության ժամանակ, որը տեղի է ունեցել հռոմեական կաթոլիկ եկեղեցու և արևելյան ուղղափառ եկեղեցիների միջև: Մեկ շաբաթ տևած այս խորհրդակցությունը, որն ավարտվել է սույն թվականի սեպտեմբերի 5-ին Ավստրիայի մայրաքաղաքում, շարունակությունն է կազմել այն խորհրդակցությունների, որոնք տեղի էին ունեցել 1971 և 1973 թվականներին նույն քաղաքում կաթոլիկ և արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների աստվածաբանների միջև:

Չնայած որ այս խորհրդակցությունները չեն ունեցել որևէ պաշտոնական բնույթ, սակայն զգալի չափով նպաստել են հարթելու աստվածաբանական այն տարակարծությունները, որոնք գոյություն ունեն Քաղկեդոնի ժողովից ի վեր: Արդեն նշանակալից առաջադիմություններ են ձեռք բերվել քրիստոնեաբանության, ինչպես նաև եկեղեցական ժողովների և եկեղեցու առանձնահատուկ կառուցվածքների հասկացողության վերաբերյալ:

Խորհրդակցության մասնակիցների կողմից միաձայնությամբ առաջարկվել է շարունակել սկսված դիալոգը: Նախատեսվում է 1977 թվականի աշնանը գումարել մի չորրորդ խորհրդակցություն, որն իր աշխատանքը պիտի կենտրոնացնի գլխավորապես Հռոմի Աթոռի գերագահության, պապական անսխալականության, ինչպես նաև Վատիկանի իրավասությանը ենթակա արևելյան եկեղեցիների և մարդորսության հարցերի քննարկման վրա:

## ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԵՀԽ-Ի ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ

«Յոթերորդ օրվա մկրտչականների կոնֆերանս» անունը կրող եկեղեցին իր տարեկան ժողովի ընթացքում, որը տեղի է ունեցել վերջերս Հուսթոնում (Նյու-Յորքի նահանգ), որոշել է հրաժարվել ԵՀԽ-ի անդամությունից:

Ռոդ Այլենդի նահանգում 1671 թվականից ի վեր գործող այս փոքրիկ եկեղեցին, որը մկրտչական մյուս եկեղեցիներից զատորոշվում է իր շաբաթապահությամբ, անդամակցում էր ԵՀԽ-ին 1948 թվականին գումարված նրա առաջին համաժողովից ի վեր: Մի քանի տարի առաջ նա հրաժարվել

էր նաև Միացյալ Նահանգների եկեղեցիների ազգային խորհրդից՝ չբաժանելով վերջինիս որդեգրած քաղաքականությունը ընկերային հարցերում:

## ՕՐԹՈԴՈՔՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Օրթոդոքս աստվածաբանական դպրոցների երկրորդ կոնգրեսը, որը տեղի է ունեցել սույն թվականի օգոստոսի 19—29-ը Աթենքի մոտ գտնվող Պենտելիի վանքի միջօրթոդոքս կենտրոնում, բնութագրվել է որպես աստվածաբանական բարձր մակարդակի մի հանդիպում: Հունաստանի, Ստամբուլի, Բուլղարիայի, Սովետական Միության, Ռումինիայի, Հարավսլավիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների աստվածաբանական հաստատություններից ուղարկված ավելի քան հարյուր օրթոդոքս աստվածաբաններ, ինչպես նաև զանազան եկեղեցական շրջանակներից եկած հայտնի անձնավորություններ և էկումենիկ դիտորդներ մասնակցել են վերոհիշյալ կոնգրեսին:

Այս երկրորդ կոնգրեսը (առաջինը տեղի է ունեցել 1931 թվականին), որի թեման է եղել «Եկեղեցու աստվածաբանությունը և նրա կիրառումը այսօր», կազմակերպվել է Աթենքի և Թեսաղոնիկեի համալսարանների աստվածաբանական ֆակուլտետների կողմից՝ Հունաստանի օրթոդոքս եկեղեցու սուրբ Սինոդի գործակցությամբ: Կոնգրեսում կարդացվել և քննարկվել են շուրջ հիսուն զեկուցումներ, որոնցում շոշափվել են երեք գլխավոր խնդիրներ. «Աստվածաբանությունը որպես եկեղեցու կյանքի և գիտակցության արտահայտություն», «Աստվածաբանությունը որպես եկեղեցու ներկայության արտահայտությունը աշխարհում», «Աստվածաբանությունը եկեղեցու կյանքի վերազարթոնքի մեջ»:

Քննարկումներն ի հայտ են բերել տեսակետների այլազանություն ժամանակակից օրթոդոքսության ծոցում, ինչը վերաբերում է աստվածաբանության նպատակներին և մեթոդներին: Բուռն բանավեճեր են առաջացել մասնակիցների միջև, մասնավորապես երբ քննության են առնվել հասարակության մեջ եկեղեցու առաքելության և տեղի, ինչպես նաև օրթոդոքս ափյուռքի հետ առնչվող աստվածաբանական և կանոնական կարգի մի շարք հարցեր:

Կոնգրեսը ցանկություն է արտահայտել, որ մի նոր հանդիպում տեղի ունենա մոտ ապագայում՝ խորացնելու համար կապերն ու գործակցությունը աստվածաբանական տարբեր դպրոցների միջև:

## ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԹՈԼԻԿՆԵՐԻ ԵՎ ԼՈՒԹԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Լութերական համաշխարհային ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Կարլ Մաուն վերջերս Ճվեդիայի Ուփսալա քաղաքում գումարված ֆեդերացիայի գործադիր կոմիտեի նիստին ներկայացրած իր զեկուցագրում նշել է, որ կաթոլիկների և լութերականների միջև տեղի ունեցած երկխոսությունները սկսում են իրենց բարի պտուղները տալ: Հաստատելով այն փաստը, որ այսօր արդեն հնարավոր է մոտենալ քրիստոնյաների միության հարցերին ավելի ճկուն և բացահայտ կերպով, լութերական եկեղեցու ղեկավարն ընդգծել է, որ երկրագնդի բնակչության մեծ մասում օրավուր բազմապատկվող անմարդկային և անարդար իրադարձությունները շեշտում են քրիստոնյաների կողմից վկայություն և ճշմարիտ ծառայություն հանդես բերելու անհրաժեշտությունը: Կարլ Մաուն գոհունակությամբ է հաստատել, որ քրիստոնեական տարբեր եկեղեցիների միջև մշակվող հարաբերություններում մեծ առաջընթաց է արձանագրվել անցած տարի Նայրոբիում կայացած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հանդիպումից հետո: «Այդ հանդիպումը,—ավելացրել է նա,—նոր հեռանկարներ բաց արեց շինարար համագործակցության համար»: Եկեղեցիների միջև երկկողմանի հարաբերություններ զարգացնելու համար Լութերական ֆեդերացիայի հատուկ կոմիտե ստեղծելու վերաբերյալ որոշ առաջարկություններ անելուց հետո, ֆեդերացիայի գլխավոր քարտուղարն ավելացրել է, որ կազմակերպության պատասխանատու անձինք այժմ հարց են տալիս միմյանց, թե ինչ ճանապարհով պետք է ընթանա լութերականների համագործակցությունը մի կողմից ԵՀԽ-ի և էկումենիկ մյուս կազմակերպությունների, իսկ մյուս կողմից՝ ավետարանական շարժումների հետ:

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Միջերկրականի ծովափնյա Տարսոն քաղաքն ամբողջ աշխարհին հայտնի է որպես հեթանոսաց առաքյալ տարսոնացի սուրբ Պողոսի օրրան: Հակառակ այն բազում իրադարձություններին, որոնք դարերի ընթացքում ցնցել ու ավերել էին այդ քաղաքը, նրանում սակայն մինչև օրս պահպան-

վել է մի բացառիկ հիշատակ՝ այն ջրհորը, որը գտնվում էր սուրբ Պողոսի հայրական տան այնուհազարդ շենքի մոտակայքում: Առաքյալի պատմական մեծ դեմքն իր երիտասարդական տարիների միջավայրում վերապրեցնելու մտածումով, Բոչելլո եպիսկոպոսը՝ Զմյուռնիայի սուրբ Պոլիկարպոսի Աթոռի փոխանորդը, 1969 թվականին այցելել է Տարսոն, որպեսզի թույլտվություն ստանա տեղական իշխանություններից՝ ձեռք բերելու սուրբ Պողոսի հայրական ջրհորին սահմանակից մի հողամաս և այնտեղ ստեղծելու մի կենտրոն՝ «Տարսոնացի Պողոսի Կենտրոն» անունով:

Այսօր, շնորհիվ ցույց տրված լայն օժանդակությունների, Կենտրոնն արդեն կառուցման ընթացքի մեջ է. այն կլինի հսկայական մի շենք՝ էկումենիկ ժողովների համար սահմանված իր ընդարձակ և շքեղ սրահներով, իր գրադարանով, բազմաթիվ գրասենյակներով, ցուցահանդեսների, կոնֆերանսների և համագումարների դահլիճներով ու կդառնա մեծ առաքյալի հիշատակին արժանի աղոթքի, ուսումնասիրությունների և էկումենիկ պրոպագանդայի մի կենտրոն, որի դռները բաց կլինեն աշխարհի այն բոլոր գիտնականների և մասնագետների առջև, որոնք կցանկանան իրենց աշխատակցությունը բերել տարսոնացի Պողոսի անձի և գործի ուսումնասիրությանը:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԽՈՐՀՐԴԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 10—16 օրերին ԳՖՀ-ի Բողոքական երիտասարդության ֆեդերացիայի նախաձեռնությամբ Հյոխաստ-Օդենվալդում (ԳՖՀ), Հեսենի և Նասաուի ավետարանական եկեղեցու երիտասարդական կենտրոնում տեղի է ունեցել Երիտասարդության էկումենիկ խորհրդի ութերորդ համաժողովը: Համաժողովի աշխատանքներին մասնակցել են երիտասարդական կազմակերպությունների 80 ներկայացուցիչներ 19 եվրոպական երկրներից: Համաժողովի թեման է եղել «Բարոզությունը գործողության մեջ»: Համաժողովում հաղորդում է տրվել 1977 թվականի հունիսին Մոսկվայում կայանալիք համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստման մասին, կոնֆերանս, որի թեման է լինելու «Կրոնական գործիչները որպես կողմնակիցներ ժողովուրդների միջև կայուն խաղաղության, զինաթափման և արդարացի փոխհարաբերությունների»: Համաժողովում որոշում ընդունվեց, որ վերոհիշյալ կոնֆերանսին իր մասնակցությունը բերի նաև Եվրոպայի Երիտասարդության էկումենիկ խորհուրդը:

## ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սույն թվականի հոկտեմբերի 20—24 օրերին Լենինգրադում տեղի է ունեցել օրթոդոքս և բարեկարգական եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցական հանդիպման հերթական երկրորդ փուլը: Խորհրդակցությանը մասնակցել են վերոհիշյալ երկու եկեղեցիները ներկայացնող 26 աստվածաբաններ Հունգարիայից, Միացյալ Նահանգներից, Սովետական Միությունից, Չեխոսլովակիայից, Ծվեյցարիայից, Ֆինլանդիայից, Շոտլանդիայից և Հարավսլավիայից:

Խորհրդակցության թեմաներն են եղել՝

ա) Սուրբ հաղորդության խորհուրդն ըստ օրթոդոքս և բարեկարգական եկեղեցիների ուսմունքի:

բ) Օրթոդոքս և բարեկարգական եկեղեցիների դիրքը քրիստոնեական ծառայության վերաբերյալ՝ ի բարօրություն հասարակության:

Վերոհիշյալ թեմաների շուրջ զեկուցումներ են կարդացել պրոֆ. Դևիդ Ուիլիսը, դոկտ. Յուջին Կարսոն Բլեյֆը (Միացյալ Նահանգներ), Միքայել եպիսկոպոսը, պրոֆ. Զաբոլոտսկին (ՍՍՀՄ) և դոկտ. Տիբոր Բարտան (Հունգարիա):

Մտքերի փոխանակության ընթացքում խորհրդակցության մասնակիցների կողմից ճշտվել են շրջանակներն այն մի քանի հարցերի, որոնք պահանջում են հետագա առավել մանրակրկիտ և խոր ուսումնասիրություն եղբայրական սիրո և անկեղծության մթնոլորտում.

ա) Ճիշտ նկարագրումը առաքելական հաջորդականության բնույթի, որ պահպանում են երկու կողմի եկեղեցիները, ըստ իրենց հայտարարության:

բ) Ձեռնադրյալ քահանաների պաշտոնավարության բնույթի ճիշտ որոշումը:

գ) Սուրբ հաղորդությամբ ձեռք բերված շնորհների արտահայտման եղանակը, որը մատչելի լինի այսօրվա մարդու հասկացողությանը և բացահայտի հաղորդության ողջ կարևորությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում . . . . . 3

Նորին Սրբություն Պողոս Զ Պապի պատգամը 1977 թվականի հունվարի մեկի «Խաղաղության համաշխարհային օրվա» առթիվ . . . . . 6

Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բարկեն Ե. Սարկիսովին . . . . . 9

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները . . . . . 10

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին . . . . . 13

Սուրբ գրական ընթերցումներ . . . . . 15

Հաղորդագրություն . . . . . 17

Ամանորը Մայր Աթոռում . . . . . 19

Ս. Ծննդյան տոնը Մայր Աթոռում . . . . . 24

Ս. Ստեփանոսի տոնը և սարկավագների ձեռնադրություն Մայր Աթոռում . . 26

Հայրենիք-սփյուռք հարաբերություններ . . . . . 28

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . 30

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ—Մխիթար վարդապետ Այրիվանեցին և Ավագ հինգշաբթի օրվա «Սիրտ իմ սասանի» գանձ-երգը . . . . . 33

ԶԱՎԵՆ Ծ. ՎՐԴ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ—Քննություն ձեռագրաց Ը դարու հայ հեղինակ Ղևոնդ երիցու պատմագրության . . . . . 38

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՂՈՒՄՅԱՆ—Մուղնու ս. Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը . . . . . 46

ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ—Մեր բանդակազարդ դռները . . . . . 55

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

Նոր հանդիպում կաթոլիկ եկեղեցու և արևելյան ուղղափառ եկեղեցիների աստվածաբանների միջև . . . . . 61

Ամերիկյան եկեղեցիներից մեկը հրաժարվում է ԵՀԽ-ի անդամությունից . . 61

Օրթոդոքս աստվածաբանների հանդիպում Հունաստանում . . . . . 62

Արդյունավետ երկխոսություններ կաթոլիկների և լութերականների միջև . 62

Էկումենիկ նախաձեռնություն . . . . . 62

Երիտասարդության էկումենիկ խորհրդի ութերորդ համաժողովը Եվրոպայում 63

Խորհրդակցություն օրթոդոքս և բարեկարգական եկեղեցիների ներկայացուցիչների միջև . . . . . 63



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ**

**«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 17.1.1977 թ.: Ստորագրված է տպագրության 21. 2. 1977 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 32:

**Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.**